



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3157

28
U-77

1893

2010

2001

(319)



28
G-77


Ս. ԱՒԳՈՍՏԻՆՈՍԻ

ԽՈՅԼՔՆԱԾՈՒԹԵՐՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Դ. ԱՆԴՐԵԱՍ Վ. ԾՈՎԻԶԵԱՆ

Մ. ՄԻՒԹ-ԱՐԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1893

Հայության գրքում կ հ. զ. ի պահանջված
Տ-Ահ Տաճար, 1932 օգոստ 1893

Ս. ԱԿԳՈՍՏԻՆՈՎ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

28
Ա-77

200
208-ԿՀ

Մ. Արգուսինոսի

ԽՈՅԼՔՆԱՏՈՒԹԻՒՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԱՆԴՐԵԱՆ Վ. ԹՈՎԿԻԶԵԱՆ

Մ. ՄԻՒԹՈՐԵԱՆ

1004
19063



ԿԵՆԵՑԻԿ. — Ս. ՂԱԶԱՐ

1893


ԲԱՆ

ԱՐ ՀՈԳԵԿԻՐ ԵՂԲԱՐՄ

—♦♦—

ՏԱԼ ծամօթս զաշնարհածամօթ թեղինակէ զրուկիս՝
ծաղու թերեւս արժամի իցէ, մանաւամդ յետ հրատարա-
կելց և ի մերս հայ բարբառ գերազութի զրուածոց նորիմ
որ Յաւառ Քաղաքին Աւարտաց և նոզեխոսիկ Աւանականաց-
և Աւանականաց բանից. որոց երկոցում յետնոցս իբրեւ հոգեւ-
ծիմ եռակ հարազատ է Խորհրդանշանց մատեմիկ: Ո՞ր
քան զի՞ր թաթաղում աստուածազեղ պիրով և վերամբարձիչ
մոտաց՝ դատեսցեն ըմթերցողք և զմայլողք, եթէ կարիցեն
եւեթ. զի յայսքան յորդառատ հոսանս գերութակ աստուա-
ծախօսութեանց՝ ապշին միտք. և հոգի ոչ կամի՛ նա և կարէ
իսկ ոչ լմտիր առմել ընդ այս և ընդ այն, այլ միայն վառի
և վարդի: Կացցէ և մեասցէ ուրեմն սրաթէլին Աւգոստինոս
յիւրումն անհամեմատ բարձրութեան, ի պացս սիրոյն և ի
խորութեան աստուածամուկ տեսութեանց. և թոյլ տա-
ցէ ճառել գոյզի ինչ զթարգմանչէ սովերիս, և զմորիմ սրտի
սուրբ ըղձանաց՝ յանձամօթ իւր յետազայն կատարելց:

Օտարուտի իմն գուցէ և այս թուեսցի վերծանողաց ի սկզբ-
րամն, զփոքու իրիք մատեմկան թարգմանչէ կարգել նա-



Ի ՑԻՇԱՏԱԿ

Ա. Ռ. Ռ Ե Լ Ա Ն Շ Ա Ն

ՀՈԳԵԿԻՐ ՀՕՐ (Ա. Ռ.) ԵՒ ՈՐԴԻՌՈՅ (Ա. Պ.)

6057

խանառ։ այլ յամեցուացեն զդատաստանն՝ ցաւարտ քանիս։ Ապաքէն ուր հրոյ խնդիր է՝ ութելիքն ինչ ոչ արժէ, այլ եթէ և ութելիքն հրեղէնք իցեն՝ գոզչը հաւասար և յարզն. ոչ էր Աւգոստինոս թարգմանողն, այլ ոչ միայն առաջատինասէք՝ այլ և քաջ սիրող այնը՝ զոր Աւգոստիմոսն սիրէք մեծապէս։ և որոյ ոսկելիթիկ ճառիցն թարգմանութեամբ՝ ոչ միայն զիւրոյ սրտին եռամդն եւս քան զիւր բորբոքել նկրտէր, այլ և զիւրայոցն եղբարց և որդեկաց. և բագում ամգամ ի թարգ մամեն (ի ծերութեան իւրում) զմայլեալ ընդ յափշտակին մոտաց բանս Սրբոյն, եխալընդ դուրս սենեկին, Տեսէք, ասէք առ համդիալեալս, տեսէք, որպիսի հրաշալի բանս զրէ Ս. Աւ գոստինոս. և նորայուրքն զիւրստ պեղեալ բանս՝ ներքսագոյնս կամէք տպաւորել յոզին ծեռամսում աշակերտաց իւրոց. յուրոց մի և զիս դասամիմ շառագութանօք, ոչ նմանեալս նմա և յոյժ յետնեալ յայսպիսում զերաբում սիրոյ սահմանի. այլ գէթ յանագան հատուցումն երախտեաց այնպիսոյ չօր՝ լիցի սակաւամասնեայս այս ծանօթութիւն անձին նորա, ի յորդոր հոգեւոր եղբարց, և մանաւանդ նորընծայիցն, որոց յոյժ սիրող էր նաև և խնամող։

Հմտ այսպիսեացս հասեալ և իմծ վիճակ մտամեն ի վանը և ի կրօնս Ծառային Աստուծոյ Միլիթարայ, յառաջ քան զվաթում ամ, ի միջի բազում առարինեաց այնր ժամա նակի և որ յետոյ՝ երկուք յաւէտ առաւելաշնորհը և աստուածազգեացք երեւեցան իմծ. մի այն՝ որ յուշարին; և ի տամէ հօր իմոյ էառ և երեր զիս այլովք համերձ՝ ի վանս յայս, (չ. Մկրտիչ Աւգերեան), որոյ գրաւոր և հոգեւոր վաստակք բազում են և բազմաց ծանօթ. և միւս՝ թարգ մամիչ մատենեկանս, որ ըմելաւար զիս ի ծեռաց առաջնոյն, և զամն իբրեւ տամս եղեւ իմծ դաստիարակ, ի նորընծայալ բան դպրոցի և ի վարժարանի տամս, մինչեւ ի լրումն քան հանայական կարգին. և էր չ. ԱՆԳՐԵԱՍ Վ. ՇՈՎԻԶԵԱՆ, ծնեալ ի Կ. Պոլս (յ' 7 յուլ. 1769, մկրտեալ ՅԱՀԱՆՆԵ անուամբ), † յեփսարքթուազօլիս Ումզարիոյ, 1849, փեք. 13:

Ոչ յոյժ դեռահասակ մանուկ և ամփորձ յաշխարհէ եկեալ (1783), այլ ամճաշակ նսիմ, սրբասէր ի մանկութենէ, նովին ոգուվ քաղաքավարեալ մինչ ի սպառ զ'ոյ կարմ օրեայ կեամսմ. չափաւորապէն վարժեալ և կրթեալ յուամուս պատենս կոչման իւրոյ, ըստ այնր ժամանակի, զերազամցեալ քան զյուրիս յաստուածայինսն և ի հոգեւորս, զորս և առատապէս սփուէր ապա և յըմկերսն և յաշակերտս և ի ժողովուրդն, առ որ առաքեցաւ քարոզիչ ամս ոչ սակաւ, և ի հայրենիս իւր և ի քաղաքին ուր կրթեաց զկեցանսն։ Այնքան ըմտիր և զգօն երեւէր և յառաջին ամս նորընծայութեամսն, զի կարօտեալ երբեմն բժշկական դարմանոյ, զրէր զմեմանէ Աբրայմ (յաջորդն մեծին Միկիթարայ), զի եթէ և շատ իմչ իւր և պէտք լիցին վասն սպատանոյ՝ արժանի է ամենայնի ազմիւն այս։ Ոչ իմչ նուազ ի մանկութենէն կամ յառաջին աշակերտութենէն մինչեւ յալեւոյթ հասակին՝ հաւատարիմ և զգոյշ ի պահպանութիւն կարգա և կամոնաց և աւանդութեամց ուխտին, օրինակ բարոյ լինէր ամենեցում. ի վերայ մաքրակենցար վալուցն վայցեցուցեալ զնողնիլում կամ զաղօթափրութիւմ և զնգեասիրութիւմ կամ զմեռելութիւն կամաւոր, հանդերձ զուարթամութեամբ։ Բազմաց ոչ թովին զուգակից մեռւլութիւն և զուարթութիւն. այլ քաջ առաքինիքն զիտեն լորդեկ. և մինչ համակ ընդ Աստուած միացեալ անաշջրակեք կարծին, հաղորդին ընտելաբար և ընդ մարդ կամ իբրեւ ամիրաաժեշտ համակարիք՝ յոր և երբ և ամկ ից։ Ոչ այս խակ են զերազոյն օրէնք և պարտք համօրէն քրիստութեամ, թող թէ կրօնաւորաց, և համազցա պատուիրան, Միկել զԱստուած և զԲնկերմ. — այլ յաւելու ի սոսա ամենօրհնեալի Յիսուս և զԴնելն զանձն ի վերայ նոցա։ Յատուկ և այս իղձ էր չօրս Անդրէի։

Պարժեալ առ ոսս նզմասուն աշակերտաց մեծի չօր Մըլիթարայ, ըստ նոցին հրահամգեալ էր և ի զգալի նզումն և ի մնշմունս մարմնոյ. ո՞րչափ. ոչ գիտեն, զի ծերութեամը

բըմ և գուարթութեամբ ծածկէր յաշաց զոր ինքն և Աստուած միայն գիտէր. բայց արտաքսուս յայտնի էր ամենեցում՝ աղքատութիւմն, և յազքատութեամ ամենեւին ամպանոյն, սակաւապէտ, ոչ ինչ աւելի քան զամհրաժեշտ կարեւոր ումելով, և ոչ ինչ պակաս ի կարեւոր վայելութէնէ. այլ կարծեմ ոչ սակաւ պակաս ի պարենիկ ոգեսպահին, կամաւոր անուադութեամբ, որ ի բնութիւն փոխեալ էր նմա. և յայսմ ոչ զոք տեսի նման նմա. որոյ սովորական նախամաշ էր բաժակ մի ցուրտ ջրոյ, կերակոր՝ թան և գիմեակ և սակաւ ինչ այլ կամ ոչինչ, յորս թուէր խաղալ մատամբն և շրթամբ քան նաշակել. պատճառ առ այս բերելով զպակասութիւն ատամանցն: Ամօսը մարմնով, ի ծը մերամի դուզնաբեայ և հնոտի մաշկեկա անբաւական ի չեռուով, յամախ թաթք ծեռացն սառուցեալ երկէին դեղնորակ. և եթէ երբէք մատէք ի կրակարամ՝ զորով մանկան աշակերաք բոլորէին, զում ուրեք զերկոսին դաստակ սըն միամբամայն մերձեցուցամէր ի հուր, այլ մերթ զինն մերթ զմիս : Եւ զի համսուու ծանիցի այս կրթութիւն, շատ լիցի վերծանել զրանի զոր զիեալ էր յանդիման իւր յորմն սենեկին. «Ու Է-է+ կեցցե՞», Ե-նէ ու Ն-եւ-ւ-Շ-ո-ք անցն. կեցց այսօք» : Եւ եկեաց արդարեւ այնպէս. և ոչ իսկ էր հնար կեալ ալյազզ որում զայս հանաւազօր նկատէր, և իբրեւ կարեւոր ինչ մի ումէր յանինչ խցկանի :

Հստ սակաւապիտութեամն էր և սակաւարուն. կամ խայարոյց ընդ այգն, յերկարէր զօրն յազօթս, յընթերցու նըս և ի թարգմանութիւն հոգեւորաց կամ յընդօրինակութիւն երկասիրութեամց նախահօրն և Վարուց առաջնոց չարց կրօմին, որչափ ինչ յաւելում նմա ժամիք յուսուցանելոյց և ի սրամակեց և ի մարգելոյց զաշակերտեամբ ի վարս և ի կոչումն կրօնաւորութեամ. և յորժամ ելից զտամ և աւելի ամս դաստիարակութեամ կամ վերակացութեամ, յերկարագոյն յանդիման զայցին եւս պարապէր առանձին յազօթս և ի խոկմութս :

Այլ ես ոչ եմ բաւական ի բացատրել զաստուածարեալ և

զլուամուլ ամիկովում մնացն և զկերպարամացն յայնակի սում պահու, մանաւամիդ յօրըստօրենայ մատուցմամ սրբոյ պատարագի, (զոր վիրէրյաէտ մատուցամել ի խորանի նաշըրութեամ Տեառն), յօրինութեամ ահաւոր խորիրդոյն և ի ճաշակմանն, ոչ առանց զգալի փղմանն, նա եւ ի հեռանանալին ի սեղանոյ անտի կամ ի մատչելի ի նոյն. թուէր՝ եթէ ոչ զեղանանն այլ զբազմեալի և զպատարագեալի ի նմին՝ խլաւ պէս կրել ի ծոցի. յորժամ երթայր և մանաւանդ յորժամ դառնայր յեկեղեցոյ՝ յառաւօտում, դէմքն լակ թուէլին տակալին աղօթել:

Ի վերայ այսօրինակ միայն ընդ միայնոյ կալոյ ընդ Աստուծոյ և խօսելոյ, սիրող և յոյժ նախանձախմբիլ էր հասարակաց աղօթից ժամակարգութեամց և հանդիսական պատարագի, անթերի կատարման ըստ ազգային օրինաց և ծիս սի Հայաստանեայց եկեղեցոյ. քաջ հմուտ գորով և երգոց և եղանական որ ի սոցին պաշտաման, որպէս և յաւանդեալ սըն յերջանիկ նախահօրէ Միկիթարայ. աւանդէր զնոյնս և նորեկաց, և ցանկայր անխափան ցանկորդել առ յասպա:

Զի՞նչ եւս ասացից զեռանդնալից աղբիւրաբար բայրութենէն և խրապուց առ աշխակերտսն, մանաւամիդ ի տօնական աւուրս և ի պատրաստութեամ յուլստ կրօնաւորական և յընդութելութիւն աստիճանաց կարգի քահանայ յութեամ, և յարուհացմ. յորս թերեւա առաւելազանց գտանդէր ըստ առաստութեամ և չերմութեամ սրտին՝ քան նուազեալ: Այլ զայս քաջ գիտացեալ է և օգտեալ հոգեւոր որդուց նորին, որոց հայր խոստվանութեամ եղեալ է ի վանս և յառաքելական քարոզութեամն՝ յարեւելս, և ի նախայիշեալ Ռւմբարիական քաղաքին, ուր վամահայր կարգեալ էր՝ ոչ սակաւ ամս. և ուր՝ ժողովուրդ քաղաքին այնուրիկ վայելողը ի հոգեկեցոյց բամս նորին և յանարատ վարս զմացիցն, բաղաւատելով զնա (զոր Վէրաբերէլէ կոչէին) ընդ աւագերցում (զոր Գէրաբերէլէ), առն կենցազափիրի, որպէսի է և ժողովուրդն այն զլուամին, ասէին յաւակի.

«Ապրինք Գելյարգելոյն հետ, մեռինք Վերապատուելոյն « հետ » :

Մեռմինք... Աստանօր ստիպիմ զկայ առնուլ բամիա: Եթէ բաղդ է քըխտորիէի մեռանել ի ծեռս բարւոյ հօր հոգետրի, որպիսի՛ մահ բաղձայցէ ինքեամ՝ իմս չայր հոգեւոր:— Բագում անգամ ի յիշեմ և ի պատմել զրէպս առարելաշամ վաստակոցն յարեւելս, ոչ փոքր հալածանօք, յաւաղելի աղամարութենէ կամ յանգիտութենէ և յանընտրողութենէ համազգեաց, յոգուց համէր և ոչ կարէր մսիթարիլ, զի թէպէտ և անկեալ էր երբեմն ի վոանգ, այլ ոչ յաջողեալ նմա և ի նմին մեռանել, ի վերայ սուրբ հաւատոցն՝ զոր աւետարանէր, և թէ զիարդ վրիպեցաւ ի բողորանուէր վկայակամ նուիրմանէ առ Այն՝ զորոյ զինան և զրանս պաշտէր և ուսուցանէր: Եւ նա՝ անակնկալ և զանիտու եղանակաւ՝ չառնէր իսպառ զանց գտենչամօք վկայասիրին իւրոյ:

Յետ լիլոյ նորա զժամանակ դաստիարակութեանն ի վանը, մինչ ի յետին ամսն կենացը յառանձնաւուկի հոգեւոր կըրթութիւնն սպարապէր, և ի հանդերձանս խաղաղական կատարածի, բանիւ և լուսութեամբ շինելով զմիաբանմ՝ զմեծ և զիոքր, և ջշոյլք իմն հանդերձելոյ կենացն յանդորրու զուարթութեանն ամկանէլին, ոչ հետի զոլով յութեսամենից, պէտք լիմէին Ուկտին նոր վանահայր կարգել ի յիշեալ քաղաքն յելիսարեթուազօվս, յասպարէզ անդ բազմանեայ քարոզութեան հոգեսէր ծերումւոյս մերոյ. առ որ զգէին և արդ միտք և աչք վարչաց Ուկտին, ըլծակերտք և վաստակի, այլ ակնածուք ի ծայրացեալ ծերութենէն. որպէս զի և իմքն Աբբայ, «Պատկառիմ ամել քեզ, ասէր, զի ոչ զոր գտեալ իրեն գքեզ ի ժամուս, լոֆ էր առ անգամ մի եւս կարգել անդ վանահայր»: Բամն պատկառուտ ի շրթանց առաջնորդին եւ իրեն պատգամ հրեղէն և չեռոյց զոչ երբեք ցըրտացեալ սիրտ ծերոյն. և որպէս երիտասարդ անգանգէտ, այլ քաջ հմուտ կրօնաւորակամ հնագամդութեամ, Ահաւա-

սիկ պատրաստ կամ, պատասխանէր. և ոչ յաւպաղէր ժըրանալ աթկանել ի չու, յապուշ կըթեալ զմիաբանս, զըւարթագոյն քան զամենեսիմ ի հրաժարենի նոցանէ, ոչ սլեացն ակն առեալ, ոչ դժուարութեան ճանապարհին և ոչ սառամանեաց տեղուցն՝ յոր դէմ զթէր, որպէս մարտիկ հիմաւուրց յետ երկար ամաց զաղարման, զպատերազի փող լը. սեկով ի գէն և ի բանակ ընթանայցէ: Ոչ պակաս քան զիւր սըմ ի զարմանն և ի հըմուանս կըթէր և զվաղեմի ծանօթսն ի քաղաքի անդ. և իրընւ յերիւար առաջնոց շահատակութեանցն՝ ի իմ ելամելով քարոզութեամ, նուաղեալ ծայբիլ լը զաննուաղ եռանդն հոգույն հաղորդել յոգիս հոգեսիրաց, և ըստ երբեմն զդիլց նոցա՝ մահակից լինել: Այլ ոչ հասարակաց էր սահմանեալի նմա մահ. ոչ էր ամնեցում տղւեալ ընկել զայն բաժակ:

Հասեալ էին ամք ամբոխից և ժամանակ շփոթեալ. յարուցմունք ժողովրդոյ ի վերայ միապետաց. և զի համառօտ ասացից, ապստամբութիւն Ունցարաց յաստիակամ ինքնակալութենէ: Յառաւասարակ վրդովման նահանգա՝ տատանէր և զաւառն այն և քաղաքաւանն այն. խուժան խաժամուժ և զօրական ամհրահմանց՝ կոխէր և զիսաղողիկ վանստում ծերոյս մերոյ հօր, և պահանջէր՝ զորն ոչ կարէր տալ, զի և ութէր ոչ: Յայնժամ մոլիքն և անուպայք՝ ամպատկառք ի հիւծեալ հասակէ նորիմ, և ի ծեռոյն և յանստուած դիմացն, զպառնավան զործով կատարէին. ովկ վայրենացեալ մարդկութեան. զանակոծ և զինածեծ առնէին զպաշտելմ իմ ալեւոր հայր. և եթէ ոչ կիսաման՝ այլ մահացու թողեալ, զկապուտ կողոպուան առեալ՝ ի բաց զնային: Եթէ ոչ առժամայն և առօրին՝ այլ և ոչ անգամ հասանէր մահն. մահն ցանկացեալ ի վաղուց, և ոչ կարծեցեալ յայսպատմ ժամանակի: Ոչ աւելի քան երկուտասան աւուրս բաւէր կեալ ի վերայ խոշոտանգամացն. և արժանաւոր պատրաստութեամբ կմքէր զայս ճեւ խոսուվանդական կեամս. զոհութեամբ մեկնէր հոգին առ որ անձկայր և որպէս

անձկայլը.՝ յ' 13 փերբուար ամսոյ, 1849, յաւուր տօթի Սրբոց Ղետոնեամց, զորոց զպաշտօն կատարեալ էր յառաւուութ: — Կաթխեալ՝ և իբրեւ կտակաւ պատուիրեալ էր կրօնակից և գործակից եղրօրն (չ. Մաղաքիայ Յովհաննիսեամ, † 1891), զի ի հասանել մահուանմ՝ հանգուացէ զմարմին իւր ընդ եկեղեցեամ, առաջի սեղամոյ Սրբոց Անտոնի պաշտապանի կրօնիս, դէմ յանդիման դրից համը զըստեամ չ. Բարսղ Լասլովեամ կամ Նասրովեամ, վաղեմի ամոլակցի իւրոյ յառաքերութեանամին, որ և քառասուս ամօք յառաջ (1809) վախմանեալ եղեալ էր առաջի սեղամոյ Տիրամօրն, գերազոյն պաշտապանի Ուխտիս. որպէս զի զիրկս արկցեն միմեամց ի յարութեամ լիրեամց հանդերձելում: Երիցումք քաղաքին և ժողովուրդին՝ որ ըղձայր երբեմն մահակից լիմել այսպիսաւոյ չօր, յորդէր արդ արտասուս դառն և անոյշ. որովք առցեալ և երիցապետին՝ հառաչէր և գոչէր ստէալ ի յուղարկաւորութեամ բանսն. « Ո՞վ պաշտապան, ո՞վ պալքոն մեր քաղաքիս, ո՞վ հոգեւոր աթայ (հայր) ամենուս ». և առ ժողովուրդ իւր դարձեալ, « Ելոցէք, » տղաքս, Ելոցէք, պազէք զծեռք ձեր վաղացու հոգեւոր » աթային. խնդիրով զիրեն բարեխօսութիւնը, որ անդէնն ալ իր սուրբ հոգուով բարեխօս ըլլայ ամենուդ »:

Սյավէս սգով և սիրով հանգուցին զչայրն ցանկալի՝ որդիք հոգեւոր երկանցն, բարեխազգիք քամ գնարազատքս, մերձաւորութեամբ, սպասարկութեամբ և ալկանատես վլայութեամբ խոստովանական կատարմանն: Զի եթէ դոյզն ինչ կամ ոչ ցայտեաց արիւն ի գանիցն, նուազեանց ինչ արդիւնք առաքինի առաքելոյն. և ոչ համարիցի չայրս Անդէաս ընդ հահատակս սիրոյ և հանգանդութեամ: Այո: Խնդակ և ուրախ լիր արդ, չայր իմ, զի այդպէս համեցաւ զարդապետն քո Ցիսում պակալ զիոնն քո և զքեզ զիս վիմ. և եթէ մնաց պակաս ի կարմրոյ պատկիր, լոցէ զայն երջանիկ որդիք ապերջանիկ քո որդուոյս:...

Բարձէ. յորպիսի՛ յիշատակ սգալի և սիրալի, յորպիսի՛ աղողորմ տեսարան՝ յափշտակէ տամի զիս հարկ քամլս... Ոչ եւս քողասուզեալ շիթս աստանօր է ինձ հետազօտել, այլ ծով տեսամեմ իմբնաբուղն արեան, և ի նվին թաթաւեալ թաւալեալ՝ որպէս գտուն անկասկած, զոր զողափիժաբար սպրուզով ձեռն ժպիրին, ձեռն դահճին և կրկմակի մաստիչ՝ կենաց և երախնեաց, յոր գեռ իսկ վայեէր, եզեն անխընայ, զաղս հոգուոյս, զցանկալին երբեմն ինձ որդեակ, ապս եղայր և այժմիկ առաւել քան զիայր: Ո՞րքան միրելիք զրկեցան ի քաղցր տեսայ և ի խնամոց. ո՞րքան մեծամեծ յոյս՝ ի վայրկեմի վերացան, ի միջօրէի. անդ կենացմ՝ 47 ամաց:...

Ծնեալ և կոչեցեալ յաւազամեէմ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՈՒՆԵԱՆ (ի 24 փերը. 1844. + յ' 3 յանուարի, 1890), ի կրօնաւորութեամ՝ չ. ՄՐԱՊԻՈՆ... իսկ որով արդեօք կոչմամբ ի վերածնութեամն և արևամբ մկրտութեամ՝ ի դպրութիւնս երկից, յերամս կարմրերքեմիցն այնոցիկ և շոշանակիք սիրուցա և սիրելեացն Ցիսուսի. այն որ սիրելի միշտ ընծայեալն էր յերկրի ի կրկին ըմտանիան, ի ծմողականն և ի կրօնական. համրոյ և համոյ բարուք և պատկերօք, վայել չահասակ, խաժակի և խարտեսչ:

Կատարեալ զժամանակ ուսումնական և կրօնաւորական կրթանացն և կնքեալ քահանայութեամբ, կարգեցաւ օժան դակ զաստիարակաց և ուսուցչան մանկուոյ ի վարժարանս վանացն և արտաքրոյ (ի Մուրատ-Ռափայելեամ), ապս և գործակալ Միաբանիցն յաշխարհաքաղաքին ի Կ. Պօլիս. գովելի գտեալ և որ անդ ուխտի Եկեղեցւոյն, և ժողովրեամ որ ի վերագոյն աստիման համել զնա վիմէր ըլձակերտ. իսկ իւր սեփական Ուխտոն՝ վկայ խոնականութեամ նորիկն կարգել զնա ի զաստիարակ նուիրելոցն ի կոչումն կրօնաւորութեամ և քահանայութեամ: Ի բարձրութեամէ և ի նրաւութենէ այսպիսաւոյ տեսչութեամ և ոչ ի ծանրութենի աշխատութեամ զարդուրեալ, իրեւ երաշխատոր կալոյ հոգւոց, պար-

կեշտօրէն հրաժարէր: Այլ իբրեւ յետ սակաւոց ցուցեալ և նշանակեալ լիմէր թմա նորաշալիլ անդամտան հոգեւոր մշակութեամ ի միջակայ սահմանս անդ քարոզութեան եր կոցում աւետարամբացն չայոց, Թադէի և Բարթովիսեայ, ի Պարսկահայս, առնուլ առնոյր ի միտ զոչինչ դիւրութիւն իրացն, յորմէ ծեռմթափ լին էր այլոց. սակայն ասէր. Միամզամ հրաժարեցի յառաջարկեալն իմ հոգեխմամ գործոյ, ոչ իշխեմ և յերկրորդումն: Եւ յանձն առեալ զլուծ հմազանդութեամ և զօրհնութիւն չօր միարանիցն, և զիւ հագումի չօր հասարակաց՝ Սրբազան Քահանայապեսին եկեղեցոյ ի Հոռոմ, յոտից և յաթոռոյ ամսի դէմ դմէր անդանդաղ, միով արեղային ընկերաւ (1882). ի սահմանեամ վայր:

Ոչ է ամծամօթ կաթողիկեայ կրօնափրաց և այլոց եա, զի իբրեւ ի կէս դաբէ հետէ՞ հաստատեալ էր անդ լսադիմ կամ փուաթկ միարամից՝ Լազարէտ (Lazariste) անուանելոց, առաքենութիւն քարոզութեամ, հաճութեամբ չաւատափիւռ ժողովոյն հոլանդակամբ Փղուանկաց պետութեամ, որոյ և թափառակը իսկ եթ. այլ զի ոչ բաւէին նորա նայրենի լիցուաւ և ծիսիւ տեղացեաց, չայոց և այլոց, մարզել և պաշտել զնոսին, ի դէպ էր և բնիկ ազգային հովիսա կարգել. և սասպիկ յայս գործ վասն մեր ազմեացս գնայր անդր, յորմի և ի Սալամաստ և ի զիւուրայս նոցիմ՝ չայրս մեր Սրապիոն. որ՝ զի և զլայր առանձին եկեղեցի և դպրոց չայոց կաթողիկեայց, ծեռմ արկեալ, ոչ սակաւ քրտամիք և վշտօք, այլ և հալածանօք, բայց երկայնամիտ համերութեամբ և քաջախոհակ տեսութեամբ և տնտեսութեամբ, զրեաթէ ի կորոյ կանգնէր զերկոսին հւս. և ամ ըստ ամէ յաւելիալ ի շմութիւն և ի բարեվայելութիւն խնամէր զիօտն փոքրիկ, սեփական ազգային ծիսիւ և ոճով, յօրիմակ և ի գովութիւն, այլ և ի նախանձնագործ պարագանական գործութիւն ի առաջնական գործութիւն է գործադրութեամբ (1891). այլ յանձն առաջնական գործութիւն ի հերուստ (1890). այլ յանձն առաջնական գործութիւն ի հարկէ զգուշութեամ հօտին իւրոյ և դաստակերտի, թողոյր ի գալ ամփմ միւսոց ելանել յողջյն եղբարցն, ի մայրավան. և յայս հանապարի ի ծմենաստամշ եղանակ՝ յանձն առնոյր երթալ, ի մոյս պէտս պահպանութեամ փարախին իւրոյ, և դասմայր ծանր խօթութեամբ ամկանել ի մանման՝ ոչ սակաւ ատուր:

Դեռ այն ինչ ապաքիմեալ՝ ծագէր և ամմ յուսացեալ (1891, ըստ արեւմտեամ տումարի), այլ ըստ չայոցս տարեվըք, և աւուր պահոց հրաշափառ տօմի ծմնդեան Տեսութ, զորս պահէր նա անլոյծ, որպէս և զքառասմորդ սըն և զայտ, ըստ ազգային ծիսի, և ըստ յատուկ խստա-

կրօնութեան և սակաւապիտութեան խրոյ: Երկաւուրբ յառաջ քան զՃրազալցցն, յօր շաբաթու, (անմոռանալի՞ օր), մինչ յետ առաւօտին պաշտաման պարապեալ նստէը ի թղթագրութիւն կարեւոր, ազդ լիմէր նմա գալուստ երխաւ սարդի միոյ ուղեւորի, կարօտելց պարէթի և հանգըտեան. ընկալեալ ողջութիւն զեա չօրս մեր Սրապիոնի, հրամայէր տալ զերկոսին եւս, և լճքն միտ լինէր զրութեանն, մինչ ընկեր նորա արենպյան ի խնամ մանկուոյն կայր: Խակ եկն այն օտարակամ, – արդարեւ օտարացեալ և անգամ ի ընապեցիկ գթոյ բարեաց և երափտեաց, – եթէ յիրոց ինչ կամաց և եթէ մանաւանդ յայլոց սաղբեալ և դրեեալ, ուտէը զրաց հիւթէր նմա նենգութիւն: Որպէս խոնջ և վաստակեալ ի յերկար նանապարին՝ յերկարէր և գիանգիստն անհանգիստ, ան ընդ ահ աց ածերով ընդ այս ընդ այն, և յանախէր զիսաբէութիւնն, դիսող, նա մանաւանդ ձախողակի ակն կալեալ ժամու. «մոտահէր և եւանիէր» ի սենեակ և ի սրամ, պէսպէս պատճառանօք, միմչեւ գացէ ամոք մրայնակ զրոց չարաչար որնալ լիմքէր, զանձն անպարտ և բարերար: Ապա յետ բազում ժամուց կեղծաւուրէր այնուհետեւ յուղի ամկամել, և սակափկ մի եւս թոշակի նանապարին կարօտել. զրոց զգացուցեալ սպասաւորին՝ հրամայէր չայրն տալ նմա նկան և ընդոյզ և միրգ, զի ոչ մերէին պահքն պարարտու ինչ, և արծակել ի խաղաղութիւն: Երանի, զի չասացից աւանդ, քում բարեսէր սրտի, ոչ չայրիկ գորովելի. ուր խաղաղութիւն ի սիրոց դիսախաթ, որ յամառեալ պարտեալ ի խորհուրդն խոհերական, պատրէր զսպասաւորն, որպէս թէ ելցէ զիրաժեշտի և զշնորհալ կալեաց ողջոյնն տալ՝ համբուրի աջոյ չօրմ, և խակ եւ խակ կալեաց լիմել: Այսպէս նողոպրեալ զանձն ի մարդկային աչաց, անփոյթ զամենատես վլայէն, մոտահէր յարամի և սենեակն, ուր տակափին զբաղեալ կայր չայր ի գրութեան, զերեսս յորմն կոյս և զթիկումն ի դուռմն ումելով. և այն զերեսս յորմն կոյս և զթիկումն ի դուռմն ումելով. և այն զերեսս յորմն կոյս և զթիկումն ի դուռմն ումելով.

ըմեր ընդ դառնալիք ի կրունկմ, ահա երազակիրթ ձեռն մատնչին և գարմին՝ ըուռն հարեալ զալէծաղիկ մօրուացն, ի յանկարծուց շուարեալ և ի հեզազին աչումն նորիմ՝ զիւրոց դժոխատեալ աչաց կայձակումն թափելով, նոյն հետայն չարազէն աջովն նախ ի բաց հատեալ զմի ումելին, ապա մինէր զդաշցումն դժնդակ ի ներքս ի թերաքամ բերանն, կամին կորել զծայնն և զմիկ, և սոտէպ սոտէպ ի նախը ածեալ զգործին մահու, վողոտէր անողորմն. և վարազացեալ վազալեալ ընդ դրութս սենեկին և տամն՝ ի բաց կործէքր. թողով զգեմին ըստ ամենումն զառին օրինակ՝ նուաղեալ ի գումրագութ հոսանք եռավակ արեանն, որ ընդ քիմնն ընդ ծոծորակսն և ընդ ականջս:

Վայրիկան քստմասարսուր. զոր ամենայն որ կարէ փոքր ի շատէ առնուլ ի միտ և սոսկալ, այլ բովածակ զիւրէ և բացատրել ոչ: Բայց ինձ վայրկեան մեծահրաշ. որ քան համառօտ յերկրի, այնքան երկար ի յափտեամսն. զի ոչ այնչափ արագ արագ ի քթթել ական կատարեաց մարդականուշն զգործ իւր, եթէ արժամ իցէ զործ կոչել զարիւն ուղարկութիւնն, որչափ խողսողեալն երազագոյնն և մեծամեծն կատարէր զործս: Ո՛վ վերմասուր ընքնադ զգասութեամն: Ի միում յայնու անքանակ ըոպէն՝ զգաց, վիտաց, յանձն էառ, զի վճարեալ է նմա ի կենաց աստի, և յամենայնէն՝ զրո ումերն ի մոփ առնել անդ ուր էրն և ուր կամէրթ լիմել. բարձաւ մեայք բնաւից. միայնոյ Աստուծոյ միայ ինձ միակ վայրկեամս: Եւ ուշաբերեալ՝ յետին և յուսափուկ ուժով թուլացեալ ամկեալ դաստակին՝ ցնցէր զար զանգակին խառն և խուռն. հնընւմն խունապական, որ ըմթացոյց նեպ ի սենեակ անդը զսպասաւորն և զարեղայն. զոր՝ հազի նշամարեալ նորա առաւել քան կկոցեալ աչօքն՝ պատառուում ումկամբ (ի սպանէքն խզելց ի գրաւական սպամութեամն), կիսահազար և մատացի հայցէր զիորմանը արձական մեղաց և զօծութեամ, չանալով իմն ի ծունը ամկամել. ընդումէր զարտաշմն՝ գաղութէ



7/11 - 2022
Ա. Ա. Մասնիչյանի անունու համար

հուրեալ պաշտօնէէն. յառաջ քան զմա՝ ինքնին անշուշտ արձակեալի սրտէ զմահացուցիչ իւր , ստեփամոսեան աղերսիւ , չհամարել նմա Տեառն զայն ի մեռ , կամ թեթեւ առնել դատաստամ . իսկ իւրդյն փոխանակ՝ յիւր իսկ ապաժոյժ ամհատառոս արեան օծեալ բովանդակ , արձակէր զըունչն անուշակ իրեւ ի միջոյ թերթից վարդից հետ զինտ թօթափերոց : Եւ Արիմն այն խառնեալ յառաւօտեանն որ ի Քրիստոսի պատարագին , քաւիչ և սրբիչ լիմէր աղտից և բժաց կենացն , որ իմէ ըստ յողըողը և գայթու բնութեանս յանցուցեալ էր առաջի անապակ արդարութեան հաստիմ իւրոյ և կոչողի: Ակն ումին հաւասուով , եթէ՝ միմէ ծեռատմք նորա անմեղ մանկտիմ՝ ծնողօք և ազգակամօք , Հարք առաքեականք և երիցումք եկեղեցեաց Հայոց , Ասորոց , Քաղուդից , բազմութեամք հազարատրաց հաւատացելոց ի գեողից և յաւանաց , այլև այլակրօնք , ծանօթք և անձանօթք , իրեւ ի միոյնչ դրդեալ ազդմանէ խումբ արարեալ ի հող հանգստեան յուղարկէին արտասուօք զլոշկոմեալ թշխարսի արիւմաքամն , – մոյն ժամայն և ընկերասէր դասր հրեշտակաց զուարթութեամք պարակցեալ համելին տանէին գիողին առ Աստուած իւր և առ Աստուած իւրանց , սաւառնացեալ կարապետ առնելով զծիրանածիրն զիկրասասափի զիսաչանն դրօշ նահատակութեամք , եթէ ոչ բացայայտ բնաբանատութեամք ի խոստովանութեան հաւատոց , սակայն կամաւոր յանձնաւութեամք հնազանդութեատին հրամանի և վուամզաւոր պաշտաման . որ չէ իմէ նուազ քան զվայութիւն և զմա՞ն ի վերայ հաւատոց , գուցէ և աւելի , այնու՞ զի նրբագոյն և գաղտնագոյն է սորայս յոյս և հաւատու . և որքան ըւելեայի ի մարմնի՝ այնքան զուառութագոյն ի հոգուն . ոչ ըստ զուման անպարտ արեանն Աքելի , այլ ըստ հեզանայնութեան ամենամպարտն Յիսուսի: Որում ձայնակից եղեալ ըստ մերս Յիազ աղերսի՝ ինդրեմք և մեք թողութիւն և զգաստութիւն չարաբարացն և սպանչաց . զի և ոչ առ քինո՞ այլ առ հարկի և կարգի պատութեան ան-

ցից իրացն՝ ստիպիկ զայսովիկ աւանդել , ի նշաւակ և ի խրատ խարդախողաց , յօրինակ առաքինեաց , ի գորով բարեսիրաց , և ի յաւերժ յիշատակ սիրոյ և սգոյ Սմծին արժամատրի՝ զայս օրինակ դաւաճաններոյ , որպէս Ժիր մշակ յայգոն իւրում , և որպէս հովլի հմկող ի փարախի իւրում:

Առ որ դարձ արարից այսուհետեւ , ի մոռացօնս արկեալ զայլ ամենայն , բոլորով նշխարեալ զօրութեամբ սրտին՝ աղաղակել . Ո՞ղջ լեր , ո՞ղջ երթ՝ ի յանկարծագիւտ կայանս ծիրանազեաց կանառու վկայիցն և խոստովանողաց սիրով հաւատոյ և հնազանդութեամ , զուգահաւասարիցն այնոցիկ՝ որք կարմրով լրացնալ՝ սպիտակացուցին զպատմուճան իւրեանց , և որք անարիւմ սպիտակութեամբ հեզութեան և հրութեան կամաց՝ կարմրացուցին զվարս առաքինակրօնս : Ո՞ղջ երթ , մատու և ողջոյն մի առ անտես քո յերկրի հաւ հոգեւոր և իմ հայր : Եւ լու ողջամբ ընկալ , ով մեծ Հայր Անդրէ . ահա գայ առ քեզ մշակ արիւմաքիրտմ՝ ըստ սրտի քում . պարզեա բազում փարելիս , և ողջագուրեալ զգուեա զիրանածայր հոլաբեկիլ . թոռնեակ , յանմառ զգուանս դրախտին Յիսուսի . հանգու ընդ քեզ և իքեզ զուարփալ աղիս հոգւյս իմ և իմեցս հոգեկից եղբարց : Ընդ որս այսուհետեւ սիրեմյալթողական խնդութեամբ քան վայրապար թալծանօք՝ նկատել և դաւանել զբեզ , սրբեալ Սրապիոն , զի « Նահատակ բարի Քրիստոսի եղեր ի միջի մերում » : Լեր յայսմիետէ և իրեւ փորձանակից՝ բարեխօս զիմուռելոց ի մեմարամիս պանդխատութեան , կալ և երթալ ընդ առաքեալաշակի պողոտայն , ի գործ և ի վաստակ փրկութեան անձանց և ընկերաց , նահատակել ովստականս յօժարութեամբ , եթէ ոչ զիմու երկաթեաւ , այլ բանիւմ Աստուծոյ և նորիմ փոխանորդի . բան՝ որ հօգոր է և հատու քան զամենայն սուր երկասյրի , և զութկեմիլս և զվատարող՝ անձրիւմ մարտիրոսս յարդարէ :

Իսկ իմձ վրիպելոյս յայնախտոյ ասպարիգէ , եթէ ներեսցի իմէ մի ժամել ի քէմ , որ շնորհեցարդ յերկրի ի սան-

և յորդի հոգեւոր, և յոր արդ ակն արկամեմ իբրեւ յոգի գերութակ, համեաց ընկեմուլ սաղարթ մի կեմապեր ի բուտրափայլ պսակէդ, առ ի դալարութիւմ զգաստութեամ՝ յ'առ ի քէն և ի քոյինակերպ զուզակցաց յառաջընթացից՝ տարաժամ կապտեցելոյս և կոճութեալ կոճել:



ԽՈՐՃՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

Մաղրանք առ ամենակալն Աստուած՝ ի
նորոգումն բարուց և կենաց:

Ա. Տէ՛ Աստուած իմ, տուր օրտի իմոյ փափագելքեզ. փափագելով՝ խնդրել, խնդրելով՝ գտանել, գտանելով՝ սիրել. սիրելով՝ 'ի չարեաց իմոյ ազատել, ազատելով՝ վերստին ոչ անկանել: Տուր, տէ՛ Աստուած իմ, օրտի իմոյ ապաշաւ, հոգւոյս՝ զղջումն, աշաց՝ աղբիւրս արտասուաց, ձեռաց՝ առատաձեռնութիւն: Թագաւոր իմ, շին՝ յիս զցանկութիւն մարմեյ, և վառեա զհուր սիրոյ քո: Փրկիչիմ, մերժեայինէն զհոգի հպարտութեան, և շնորհեա քասիչ իմ, զգանձ խոնարհութեան քո: Ազատիչ իմ, հեռացո՛ յինէն զեռանդն բարկութեան, և պարզեեա ինձ՝ բարեգութ, զվահանն համբերութեան: Ստեղծօղ իմ, խլեայինէն զոգիքինու ատելութեան, և առատաձեռնեա ինձ բարեգութ, զքազրութիւն հեզաշարժ մտաց: Տուր ինձ՝ Հայր ամենագութ, հաւատս հաստատուն, յոյս (նմին) համաշափ, սէր անընդհատ:

Բ. Առաջնորդ իմ, ի բաց արայինէն զունայնութիւն, զանհաստատութիւն մտաց, զվայրայածութիւն օրտի, զիեղկատակութիւն բերանոյ, զամբարտաւանութիւն

աշաց, զեղխութիւն որովայնի, զարհամարհութիւն ընկերաց, զեղեռն բամբասանաց, զմարմաշումն ընդվայրագըննութեան, զցանկութիւն մեծութեանց, զյափշտակութիւն իշխանութեանց, զտենչունայնասիրութեան, զչարիս կեղծաւորութեան, զթոյն մարդելուզութեան, զանինամակալութիւն կարօտելոց, զհարստահարութիւն տկարաց, զրոց ագահութեան, զժանդ նախանձու, զմահ հայհութեան: Համեյինէն, Արբորիշ իմ, զյանդգնութիւն, զչարութիւն, զյամառութիւն, զանհանդարտութիւն, զանդործութիւն, զքնէածութիւն, զհեզգութիւն, զշացութիւն մտաց, զկուրութիւն սրտի, զհակառակութիւն զգայութեանց, զգազանութիւն բարուց, զանհնազանդութիւն բարուց, զլնդդիմութիւն խրատու. զապարասանութիւն լեզուի, զրկանս աղքատաց, զհարստահարութիւն տկարաց, զրպարտութիւն անմեղաց, զանփութութիւն առ հպատակս, զժանտութիւն առ ընտանիս, զանդթութիւն առ տոկմայինս, զիստութիւն առ մերձաւորս:

Գ. Աստուած իմ, ողորմութիւն իմ, աղաշեմ զքեզ վասն սիրելոյ Որդոյ քո, տուր ինձ առնել գործս ողորմութեան, ջանս գթութեան, կարեկցութիւն առ վշտացեալս, խրատ ուղղութեան մոլորելոց, օժանդակել տառապելոց, նպաստել կարօտելոց, մսիթարել զսգաւորս, կանդնել զհարստահարեալս, զուրթացուցանել զաղքատս, սրտապնդել զտրտմեալն, ներել յանցաւորաց, խնացել մեղուցելոց առ իս, սիրել զատելիս իմ, շարեաց փոխարէն հատուցանել զբարիս, ոչ զոք արհամարհել՝ այլ զամենեսան պատուել, բարեաց նմանող լինել, ի չարաց զդոյշ կալ, փարել զառաքինութեամբ, զախտս մոյութեանց ի բաց թօթափել. ի ձախողակն համբերութիւն, ի յաջողուածս ժուժկալութիւն, պահպանութիւն բերանոյ և դուռն շրջափակ շրթանց իմոց, առ ոտն կոխել զերկրաւորս և ծարաւել երկնայնոց:

ԳԼՈՒԽ Բ.

Ամբաստանուրիշն մարդոյ զամանեկ, և ապաշինուրիշն յողորմուրիշն Աստուծոյ:

Ա. Ահա ստեղծող իմ, բազում ինչ աղերսեցի, որ սակաւուցն իսկ չեմարժանի: Խոստովանիմ, վայ ինձ, խոստովանիմ, զի ոչ թէ միայն մաղթողիս չէ պարտ տալ պարգեւս, այլ բազմապատիկ և ուժգին պատիժս: Այլ սակայն քաջալերեն զիս մաքսաւորին, պոռնիկն և աւազակը, որք ի բերանոյ թշնամւոյն ի վայրկենի զերծեալք՝ ի ծոց հովտին ընկալեալ եզն: Բայց դու՝ արարիշ ամենեցուն Աստուած թէ և յամենայն գործս քս սքանչելի ես, այլ սքանչելագոյն եւս քարոզիս ի գթութեան: Վասն որոյ ասացեր զքէն, ի ձեռն միոյ ի ծառայից քոց, Ողորմութիւնը նորա ի վեր են քան զամենայն գործս նորա. և զասելն զմիոյ միայնոյ իրը զամենայն ժողովրդենէ քումմէ սասացեալ քո հաւատամք. « Բայց զոլորմութիւն իմ ոչ արգելից ի նմանէ »: (Աղմ. ԶԸ): Քանի ոչ զոք անարգես, ոչ զոք ի բաց մերժես, ոչ զոք տաղտկացուցանես, բայց եթէ անմիտ ոք զքեզ տաղտկացուացէ:

Բ. Ապա անբարկանալի գոլով՝ ոչ հարկանես, այլ չնորհս զայրացուցաց քոց եթէ խնդրեսցեն՝ պարգեւես: Աստուած իմ, եղիւր փրկութեան իմոյ, և ընդունոյ իմ. ես ապերջանիկս, ես զքեզ բարկացուցի, ես չար առաջի քո արարի, զրտմառութիւն քո գարթուցի, բարկութեան քում արժանի եղէ. մեղայ՝ և ժուժկալես, յանցեայ՝ և տակալին համբերես: Եթէ ստրջանամ՝ խնայես, եթէ դառնամ՝ ընդունիս. ի վերայ այսոր ամենայնի եթէ յապազեմ՝ ակն կալեալ սպասես. վերակոյնս զմոլորեալն, հրափերես զհակառակողն, սպասես թմբելոյն, գիրկս արկանս գարձելոյն: Ուսուցանես զտգէտն, ամոքես զտըսբալն, կանգնես ի կործանմանէ, յետ անկմանն վերանորգես, մաղթողին առատաձեռնես, խնդրողին գտանիս,

բաղկաղին բանաս: Ահաւասիկ տէր Աստուած փրկութեան իմոյ, քեզ զի՞նչ յանդիման արարից՝ ոչ զիտեմ. զի՞նչ տաց պատասխանի, անգիտանամ. չիք տեղի ապատանի՝ բաց ի քէն, չիք տեղի թագստեան՝ բաց ի քէն: Յուցեր ինձ ճանապարհ բարւոյ կենաց, և հաւանողին՝ ետուր գիտութիւն գնալոյ, սպառնացար ինձ գեհեան, և խոստացար ինձ զդրախտին փառու:

Գ. Եւ արդ՝ հայր ողորմութեանց և Աստուած ամենայն միտիթարութեանց, բեւեռեա ընդ երկիւղքո զմարմին իմ, զի երկնչելով՝ սպառնալեաց զերծայց, և տուր ինձ զցընծութիւն փրկութեան, զի զոր խոստանաս՝ սիրով լընկալայց: Զօրութիւն իմ տէր, հաստատութիւն իմ, Աստուածապատէն իմ, և փրկիչ իմ. թելաղիք լեր ինչ՝ զի՞նչ զքէն խորհեցաց. ուսո՞ւ որով բանիք առ քեզ կարդացից. շնորհեան՝ որով գործովք քեզ համոյ եղէց: Քանզի գիտեմ, զիտեմ զմին՝ ընդ որ համիս դու, և զմիւսն՝ զոր ոչ արհամարհես: Ապաքէն հոգի վշտացեալ պատարագ է քեզ, և ընդունիս զսիրտ զլացացեալ և խոնարհեալ: Ո. յառքիւք՝ տէր Աստուած իմ, օգնական իմ, ճոխացո զիս ձըրիւք, այսու պաշտպանութեամբք ամրացո յերեսաց թշնամոյն, պարզեան զայն ի շիջուցանել զբոց ախտից, և ի կրից ցանկութեանց՝ զնոյն արա զթած ապաւէն:

Դ. Արա տէր, զօրութիւն փրկութեան իմոյ, զի մի եղէց ի թիւս նոցա որք առ ժամանակ մի հաւատան, և ի ժամանակի փորձութեան հեռանան: Հովանի արա զիսոյ իմոյ, յոյս իմ, յաւուր պատերազմի, յոյս իմ յաւուր տառապանաց, և փրկութիւն ի ժամանակի նեղութեան:

Ե. Ահաւասիկ տէր լոյս իմ և փրկութիւն իմ, ինդրեցի՝ որոց կարօտիմ, ազդ արարի յորոց երկնչիմ այլ խայթէ զիս խիզճ մտացս, կշտամբեն զիս գաղտնիք որտի իմոյ, և զոր սէրն մատակարարէ՝ երկիւղն ցրուէ, նախանձն զրգոէ, երկիւղն կշտամբէ: Գործք իմ՝ կասկածանս, այլ քոյդ գթութիւն՝ զվատահութիւն առբերէ. բարեգթութիւն քոյ քաջալերէ, իմս վատթարութիւն խափանէ. և զի զնշարիսն խոստավան եղէց՝ յնորք ախտից գան ի յիշողութիւն ի կշտամբանս համարձակութեան յանձնապատան հոգուոց:

Գ. ԼՈՒԻՍ Գ.

Գանգատ մարդոյ՝ որում վասն ամենազանդուքեանն ոչ լու ևնա Տէր:

Ա. Քանզի եթէ ոք ատելութեան է արժանի՝ որով համարձակութեամբ խնդրիցէ շնորհս. որում պիտոյ են պատիք՝ որով յանդգնութեամբ փառս ժամփէ: Զայրացուցանէ զգատաւոր՝ որ զանց արարեալ զհատուցումն յանցանացն՝ ինդրիցէ վարձուք պատուիլ: Ընդդէմ հանդիսանյայթագաւորի պատժապարտն որ թախանձէ առնուլ պարգեւու առ որ անարժանն է. և որդի յիմար զքաղցրութիւն սիրոյ հօրն դառնուցուցանէ, որ յետ անարդանս ածելոյ՝ նախ քան զապաշխարելն ի բարձրութիւն ժառանգութեանն յաւակնիցի: Յուշ ածեմ, ով իմ, զոր ինչ գործեալ եմ. արժանի եղէ մահու, և ինդրեմ զկեանս. զայրացուցի զթագաւորդ իմ, զօրոյ թեւարկութիւն անամօթաբար մաղթեմ. անարգեցի զգատաւորն՝ զօրոյ զձեռնտուութիւն յանդգնաբար պահանջեմ. անզգամութեամբ զայրաց լսել հօր՝ զոր ապայանդգնիմ ունել հոգաբարձ խնամմակալու:

Բ. Աւագ ինձ, կարի իմն անագան գամ. վայ ինձ վայ, քանի անագան փութամ. քանզի յետ վիրաւորելց ընթանամ, ոչ արժան համարելով ողջանդամ ի նետից նախազգոյշ լինել. անփոյթ եղէ դէտակն ունել նետից, և արդ վասն վերահաս մահուանն հոգամ. զիքրս ի վերայ վիրաց յաւերի, զի ոչ երկեայ զշարիս ի շարեաց վերայ կուտակել. նոր վիրօք զափիս շարսւուեցի, քանզի զհնացեալ վատթարութիւնն՝ արդի անօրէնութեամբ փոխանակեցի. և զոր աստուածայինն գարման ամրացոյց՝ խէլաժէտ մարմանըն իմ ելոյծ: Մորթն որ ի վերայ եկեալ վիրաց՝ ծածկեալ ունէր զախան, ի բղիսել շարաւոյն՝ նեխեալ պականեցաւ. զի կրկնեալն շարութիւն ունայնացոց ըզնորհեալն ողորմութիւն. զի ծանեայ զգրեալն եթէ յորում

ժամու մեղիցէ արդարն ոչ յիշատակեսցին ամենայն արդարութիւնքն որպարան է Յթէ արդարութիւն արդարոյ զթելց՝ ջնի, քանի առաւել ապաշխարութիւն մեղաւորին դարձելոյ ի նոյն մեղս։ Քանից իրեւ շոն դարձայ առ փսխածն իմ, և իրեւ խող կրկին ի տիղմն թաւալեալ։

Գ. Խոստովանիմզի անհնար է ինձ յիշատակել՝ եթէ որքան անգիտակ մականացուաց՝ ուսուցի մեղանել, և զորս ոչ կամէին յանցանել՝ ի հաւան ածի. զընդդիմացողմն բանադատէի, յօժարելոցն հաճ և հաւան լինէի. քանի ողջիկ ընթացողաց որոգայթս թագուցի, և զճանապարհ խնդրոց զաց, զուբս ցուցի. և զի մի խորշեցաց ի գործելոյ ոչ զանգիւտեցի ի մոռացնս արկանելոյ։ Այլ դու արդար դատաւոր, նշանակելով զյանցանս, իր ի պարկի պահեցեր զամենայն շաւիզս իմ, և զամենայն քայլս ոտից իմոց թուեցեր. ծածկեցեր լրեցեր միշտ, անմռունչ կացեր, համբերեցեր. վայ ինձ, հուսկ ուրեմն բարբառեսցիս իրու զՃննդական։

ԳԼՈՒԽ Դ.

Երկիւղ ի դատաւորէն։

Ա. Աստուած աստուծոց, Տէր հզօր ընդդէմ շարութեանց. զիտաց ի զի յայտնապէս եկեսցես, զիտացի զի ոչ միշտ լրեսցես, յօրժամ առաջի քո հուր բորբոքեսցի, և շուրջ զքեւ մրրիկ յոյժ. յորժամ կոչեսցես զերկինս ի վերուստ, և զերկի՞ առ ի ընտրել զբողովուրդ քո։ Եւ ահա այնչափ բիւրաւորաց ժողովրդոց յայտնեսցին ամենայն անօրէնութիւնք իմ, այնչափ դասուց կրեշտակաց երկեսցին շարիք իմ համօրէն, ոչ միայն գործոց՝ այլ և խորհրդոց միանգամայն և բանից. այնչափ դատաւորաց առաջի կացից մնացեալս՝ որքյառաջեցին քան զիս ի գործս բարիս։ Այնքան ի կշտամբոլաց ամաշեցից՝ որքան ցուցին ինձ օրինակ բարի կենաց. այնչափ ի վեայից ափ ի բերան եղէց որքան ազդ

արարին ինձ օգտակար խրատիւք այլ և արդար գործովք՝ եղին զանձինս նպատակ հետեւողութեան։ Տէր իմ, ո՞ օգուտ ի բանիցս. աւելի է ինձ առնել պատասխանի, և մինչ արդէն իսկ ի ներքոյ անկեալ կամ այնմ խստագոյն ընտրութեան՝ տանջէ զիս խիզճ մտացս. շարշարեն զիս ծածուկք սրտիս. բռնագտատէ ագահութիւնն, ամբաստան իլնի հպարտութիւնն, նախանձն սպառէ, ցանկութիւնն տուշորէ, ապականէ պղծութիւնն, անարգէ որկորն, կշտամբէ զիներբութիւնն, վիրաւորէն բամբասանքն, դաւաճանէ փառասիրութիւնն, խոշտանգէ յափշտակութիւնն, ցրուէ անմիաբանութիւնն, խռովէ բարկութիւնն, լուծանէ թեւթեամութիւնն, նկուն առնէ թմբրութիւնն, խարբէ կեղծաւորութիւնն, խորտակէ շողքորթութիւնն, ի բաց բառնան երաբատիքն, խայթէ շարախօսութիւնն։

Բ. Ահաւասիկ, փրկիչ իմ յազգաց ցասուցելոց, ահաւասիկ ընդ օրս կեցի յօրէ ծննդեանն իմոյ՝ յորոց ուսայ, առ օրս հաւատարիմ եղէ. այսոքիկ վարժութիւնք զորս սիրէի՝ զիս դատապարտէն. զորս գովիչ՝ պարսաւեն. այսոքիկ են բարեկամք՝ որոց զիլայ, վարժապետք՝ որոց հաւանեցայ, տեարք՝ որոց ծառայեցի, հիւպատք՝ որոց հաւատացի, քաղաքացիկ՝ ընդ օրս բնակակից եղէ, ընտանեալք՝ որոց համակամեղէ. վայ ինձ, թագաւոր իմ և Աստուածիմ, զի ընդերկար եղեւ պանդիստութիւն իմ։ Վայ ինձ, լըս իմ, զի բնակեցայ ես ընդ բնակիչս կերպարու։ Եւ եթէ Դաւիթ սուրբն ստէպ ասէր, գանի առաւել ես ապերջանիկս ասել կարեմ, եթէ, Ընդերկար եղեւ պանդիստութիւն հոգւոյ իմոյ։ Աստուած հաստատիչ իմ, ոչ արդարասցի առաջիքո ամենայն կենդանի. յօյս իմ ոչ է յորդիս մարդկան. զո՞լ ոք՝ եթէ անմասն ի գթութենէդ դատեսցիս՝ արդար գտցես. և եթէ ոչ կանխեսցես ողորմելով ամբարցուին, ոչ եւս գտցի որ փառաւորեսցէ զգթածն։

Գ. Զի և հաւատամ, փրկութիւն իմ՝ որ լուայ եթէ քաղցրութիւն քոյապաշխարութիւն զիս կոչէ. քոյ բերանոյ անուշահոտ շրթունք՝ ձայն արձակեցին ինձ, Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայր իմ՝ որ առաքեաց զիս, ձգեսցէ զնաառ իս. (Յովէ. 2)։ Եւ քանզի ուսուցեր ինձ, և որպէս քա-

փիչ՝ ուսմամբ մարզեցեր, բովանդակ ուղղօք սրտի, բովանդակ ջանիւք մտաց աղաշեմ զքեզ, Հայր ամենակալ, ընդ ամենասիրելի Որդւոյ քո, և զքեզ ամենաքաղցր Որդի, ընդ ամենապայծառ Միկիթարշիդ, մաղթանօք հայցեմ, ձգեաւ զիս յոր վայր ընթացայց զհետ քո քաղցրութեամբ ի հոտ իւղոց քոց:

ԳԼՈՒԽ Ե.

Մաղրանք առ Հայր ի ձեռն Որդոյ:

Ա. Կարդամ առ քեզ Աստուած իմ, կարդամ առ քեզ, զի մերձ ես առ ամենեսեան՝ որք կարդան առ քեզ ճշշմարտութեամբ, քանզի դու ճշմարտութիւն ես. ուստինձ աղաշեմ՝ զթութեամբդ քով, ճշմարտութիւն ամենասուրը, ուստինձ կարդալ առ քեզ ճշմարտութեամբ. քանզի եթէ զիարդ մարթ է լինել այդմ՝ ոչ գիտեմ, այլի քէն՝ երանական ճշմարտութիւն, խոնարհութեամբ ուսանիւ պաղատիմ: Քանզի գիտել առանց քո՝ է ոչ գիտել. բայց գիտել զքեզ՝ է ամենակատար գիտութիւն: Մարզեավիս, աստուածային իմաստութիւն, և ուստինձ զօրէնս քո: Քանզի հաւատամ՝ եթէ երանելի ինի զոր զու խրատես, և յօրինաց քոց ուսուցանես. ցանկամ կարդալ առ քեզ, և ինոքեմզի կատարեացի ճշմարտութեամբ: Զի՞նչ իցէ ճշշմարտութեամբ կարդալ առ ճշմարտութիւնն, եթէ ոչ՝ ի ձեռն Որդւոյ կարդալ առ Հայրն: Ուրեմն, Հայր սուրբ, բանքո ճշմարտութիւնն է, և սկիզբն բանից քոց ճշմարտութիւն. այս իսկ է բանից քոց սկիզբն, զի ի սկզբանն էլ Բանն. յայսմ սկզբան քեզ ծայրագունիդ սկզբան՝ երկիր պագանեմ. յայգմ Բանի ճշմարտութեան՝ առ քեզ կատարեալով պաղատիմ ճշմարտութիւն, յորում է նոյն ինքն ճշմարտութիւն, զի առաջնորդեցես ինձ ճշմարտութեամբ և ուսուցես:

Բ. Քանզի զի՞նչ այլ քաղցրագոյն՝ քան կարդալ առ ծնողն յանուն միածնին. զՀայրն՝ յիշատակութեամբ Որդւոյն ի զթութիւն համոզել. զթագաւորն՝ ամենասիրելի զաւակին անուանակոչութեամբ զիշուցանել: Քանզի այսպէս դատապարտեալքն ի բանտս՝ սովոր են ազատի. այսպէս ըմբանեալքն ի կապանս լուծանին. այսպէս գոյսալից գիսապարտութեամն վճիռ ընդունողք՝ ոչ միայն ընդունին զներումն, այլ և գեր ի վերոյ ևս պատահեն չնորհաց արտօնութեան, եթէ բաւական լինիցին միայն առաջարկել զսէր սիրեցելոյ գաւակին՝ առ իշխանուն ցասուցեալս. այսպէս եղեռնագործ ծառայք ճողովրինի խոշտանգանաց տեարց իւրեանց, եթէ միջնորդ լիցի նոցա քաղցրութիւն որդւոց: Սյոյնպէս առ քեզ Հայր ամենակալ, սիրով ամենակալ որդւոց քո պաղատիմ, հան իբանտէ զանձն իմ՝ գոհանալ զանուանէ քումմէ: Ազատեալ զիս ի կապանաց մեղաց, թափանձանօք յաւիտենականից միածնիդ. և զիս՝ որում սեպհական արդիմնքս զմահաբերն սպառնան զիմիրո, ընդ ամենէ քումմէ բազմելոյ ամենասիրելի Որդւոյդ միջնորդութեամբ՝ հաշտեալ նորոգեալ ի կեանս:

Գ. Քանզի զո՞այլ միջնորդ կարգեցից առ քեզ՝ ոչ գիտեմ. բայց եթէ զնա՝ որ է քառութիւն մեղաց մերոց, որ նստի ընդ ամենէ քումմէ բարեխօս վասն մեր: Ահա վաստաբանն իմ առ քեզ, Աստուած Հայր, ահա քահանայապետ մեծ՝ որ ոչ կարօտի արեամբ օստարաց ի քատել, քանզի իւրով արեամբն հեղլով արտափայլէ: Ահա՝ զոհ սուրբ՝ համոյական և կատարեալ՝ ի հոտ անուշից մատուցեալ և ընկալեալ: Ահա գառն անարատ՝ որ առաջի կտրըշաց անմոռունչ կայր, որ ապտակահարեալ, թքով անարդեալ, թշնամանօք արհամարհեալ, ոչ երաց զբերան իւր: Ահա որ զմեզս ոչ արար, որ զմեզս մեր երարձ, և զիիւանդութիւնս մեր իւրով վիրօքն բժշկեաց:

ԳԼՈՒԽ Զ.

**Աստանօր մարդ առաջի առեն Հօր զշարչարան
Որդույն:**

Ա. Հայեաց Հայր գթած, յամենագութ Որդիկ, վասն մեր այնշափ անողորմ տանջեալ: Հայեաց ամենագութթագաւոր, ո՞ է որ չարչարի, և յիշեա բարեգթութեամբ վասն որոյ չարչարի: Ո՞չ ապաքէն տէր է իմ նա անմեղն այն՝ զր՝ առ ի փրկել զծառայն՝ մատնեցեր զՈրդիկ, ո՞չ ապաքէն նա է տէր կենաց՝ որ իրեւ ոչլար ի գենումն ածեալ, և քեզ մահուչափ լեալ հնազանդ՝ ոչ զանդիտեաց յանձն առանուլ զմահ դժոխւմբեր: Յիշեա՛, մատակարարդ բովանդակ փրկութեան, զի սա էնա՝ զոր թէ և ի քումէ զօրութենէ ծնար, սակայն իմումն տկարութեան հաղորդ լինել նմա համեցար: Ճշմարտիւ սա է քոյդ աստուածութիւն՝ որ զիմս զգեցաւ զբնութիւն, ամբարձաւ ի կախաղան խաչի, որ կրեաց առեցելով մարմնովն զգմնեայ տանձանս: Դարձո՞ւ տէր Աստուած զաշս իմ, մեծվայելը լութեան քոյի գործս յայս անձառելի զթութեան: Հայեաց ի քաղցրիկ ծնունդ քո՞ բովանդակ մարմնովն տարածեալ. տե՛ս զծեռուն անմեղն՝ որ հոսեն արիւն անարատ, և հաշտեալ ներեալ անօրէնութեանց՝ զորս ձեռք իմ արարին: Այնարկեա յանպատապար կողմն դաժանական տիգաւն խոցեալ. և նորոգեա զիս սուրբ աղքերաւն՝ զոր բղխեալ անտի հաւատամ:

Բ. Տե՛ս զանարատ կնկաս ընթացիցն՝ որք ո՞չ կացին ի ձանապարհի մեղաւորաց, այլ միշտ ընթացան ի շաւիդս պատուիրանաց քոց, սեւեռեալս խստագոյն բեւեռգք, և կատարեա՛ զլնթացս իմ ի շաւիդս քո. և արա՛ բարեգութ, ատել ինձ զամենայն ձանապարհս անօրէնութեանց: Ձնանապարհս անօրէնութեան հետի արա յինէն, և տուր ինձ քաւիչ իմ ընտարել զճանապարհն ճշմարտութեան: Աղաշեմ զքեզ, թագաւորդ սրբոց, տուր ինձ՝ ի ձեռն սորին սըր-

բութեան սրբոց, սորին փրկչի իմոյ՝ ընթանալընդ շաւիդս պատուիրանաց, զի կարող եղէց միանալ հոգւով ընդ նմա՝ որ ո՞չն գարշեցաւ զիմս զգենուլ մարմին: Միթէ ո՞չ նկատեացես Հայր բարեգութ, զառոյգանձն Որդւոյդ սիրեւոյ գլուխ՝ ձինափայլ պարանոցաւն ծիւրեալ՝ լուծանիլ ի մահ ամենապատուական: Հայեաց, քաղցրաբուն արարիչ, ի մարդասիրութիւն սիրելի Որդւոյդ, և ողորմեա տկարութեան ախտացեալ ստեղծուածոյս:

Գ. Պաղպալն կուրծքն մերկացեալք. կարմրափայէ կողն արեամբ թաթաւեալ. ձնշեալ տողորին աղիկն. նուազին չքնազափայլ աշկունքն. այլագունի արքայական բերանն. պաղին բազուկըն բարգաւաճք. կախեալ կան սրունդ քըն մարմարեայք. վտակք երանելի արեան ոռոգանեն զոտսն շաղափով ծակեալս: Հայեաց փառաւորեալդ ծնող, ի վիրաւորեալ անդամն չնորհաշուք Որդւոյդ, և յիշեալ բարեգութ, զի գոյութիւն իմ է: Նայեաց ի խոշտանգանս Աստուած ամարդոյն, և թոյլ արա ստեղծելց մարդոյն թշուառութեան: Նկատեա՛ զփրկչին տանջանս, և զփրկելց թոյլ զյանցանս: Սա է տէր իմ, զոր վասն մեղաց ժողովրդեան քո հարեր, թէպէտ նա ինքն էր սիրելին՝ ընդ որ հաճեցար: Սա է անմեղն այն՝ յորում նենգութիւն ո՞չ դտաւ, և սակայն ընդ անօրէնս համարեցաւ:

ԳԼՈՒԽ Է.

Աստանօր ձանակէ մարդ երկ ինքն է պատճառ

Զարչարանացն:

Ա. Զինչ գործեալ է քո Մանուկ ամենաքաղցր, զի այդպէս դատեացիս: Զինչ գործեցեր պատմանեակդ ամենասիրելի, զի այդպէս դատմանութեամբ վարեցան ընդքեզ: Ո՞ր յանցանք քո, ո՞ր վնաս, զինչ են պատճառք մահուանդ, զինչ առիթ դատապարտութեան քո: Ես, ես եմ

թիւնն աստուածային: Զիք հնարել ստեղծուածոյ սպասահարութիւն ինչ, որով արդարապէս վճարեսցի ինաւակալութեան ստեղծողին: Բայց գոյ, Որո՞ի Աստուածոյ, յայդմ քոյին սիրալի տնտեսութեան, գոյ՝ որով տկարութիւն իմ այլով իւկր լուռ զտեղին, եթէ քոյով այցելութեամբ ի զիզլ հարեալ միտքն՝ զմարմին իւր ի խաշ հանցէ կարեօք և ցանկութեամբ հանդերձ. և զի ի քէն չնորհի այդ՝ գոյզիր եթէ արդ իսկ սկսանի կարեկից լինել. քանզի և գու վասն մեղաց իմոց հանցեցար մեռանել: Եւ այսպէս սակս յաղթութեան ներքին մարդոյն՝ քոյին առաջնորդութեամբ գոտեւորի առ մրցանակն արտափին, ցորչափ յաղթելով հոգեւորական հալածանացն՝ ոչ զանգիտեսցէ վասն սիրոյ քո տալ զանձն ի սուր նիւթեղին: Եւ այսպէս նուաստութիւն վիճակին՝ եթէ հաճոյացի գթութեանդ, իրեւ մեծ իմ համեմատեալ՝ զօրեցից փոխարինել Ստեղծողիդ: Եւ այս՝ դեղ երկնային, բարի Յիսուսա այս սիրոյ քոյին դեղթափ: Աղաշեմ զըեզ վասն ողորմութեանց քոյ առաջնոց, հեղ ի վերս իմ, որպէս զի արտաքր ժայթքեալ զիշարկիչ մաղձ իմից, վերածցէ զիս ի նախկին ողջանդամ անարատութիւն, և ճաշակմամբ քումդ անուշահոտ քաղցրութեան՝ տացէ ինձ արհամարհել համայն ախորժակօք գհրապոյր աշխարհի, և ոչ զանգիտել վասն քո ընդ հակառակութիւն նորին, և յիշատակերով զմշնջնականն աղնուութիւն՝ միշտ տաղտկացայց ի հողմոց անցաւոր արհարացս այսոցիք:

Դ. Ո՛չ մի ինչ, աղաշեմ, քաղցրասցի ինձ առանց քո, ոչինչ հաճոյացի, ոչինչ պատուականագոյն, ոչինչ գեղատեսիլ հաճոյ լիցի ինձ, բաց ի քէն. անարդ երևեսցի ինձ՝ աղաշեմ ամենայն ինչ՝ բաց ի քէն, պիզծ լիցին համօրէն: Որ ինչ հակառակ է քեզ՝ լիցի ինձ դժուհի. և որ քեզ հաճոյականը, լիցեն ինձ անպակաս հեշտալիք: Նողուկալի լիցի ինձ խնդան առանց քո, և հեշտալի՝ լինելն արտմակից վասն քո: Անուն քո լիցի ինձ սփոփանս, և յիշատակ քո քաղակերութիւն: Լիցին ինձ արտասուք իմ հաց ի տուէ և ի զիկերի՝ քննելով զարդարութիւնս քո: Լիցի ինձ բարի՝ օրէնք բերանոյ քո, քան զհազարս ուկոյ և և արծաթոյ:

Հարուածք վիրաց քոց, ես յանցանք սպանման քո: Ես պարտք մահուան քո, անօրէնութիւն վրէժխնդրութեանն առ իրէն, ես շարչարանաց քոց հարուածք, և խաշիդ տառապանք: Ո՛ս սրանշելի հանգամանք վճռոյն, և անձառելի անօրէնութիւն խորհրդոց. մեղանչէ անօրէնն, և պատժի արդարն. յանցանէ մեղապարտն, և խոշտանգի անմեղն. անարդէ ամբարիտն, և դատապարտի բարեպաշտիկն: որում արժան է շարն՝ կրէ բարին. զոր գործէ ծառայն՝ հատուցանէ տէրն. յորմէ հրաժարէ մարդն՝ կրեալ համբերէ Աստուած: Ուրանօր Սստուած, ուրանօր էջ խոնարհութիւնն քո, ցոր վայր թախանձեաց սէր քա: ուր գիմեալ եհաս գթութիւնդ. ցոր վայր աճեաց բարեհաճութիւնդ: ուրանօր ժամանեալ եհաս սէր քո, ցոր վայր ժամեաց կարեկցութիւնդ:

Բ. Քանզի ես գործեցի անօրէնութեամբ, զպատիժն դու պահանջիս. ես արարի ահազին ապիրատութիւնս, դու վրիժութուք խոշտանգիս. ես զեղեռն գործեցի, դու ի տանշանս մատնիս. ես ամբարտաւանեցայ՝ դու խոնարիս. ես վրացայ, դու զիշանիս: Ես անջնագանդ եղէ, դու հնազանդեալ զարատատ անհնազանդութեանն կրես. ես եղէ որ կորաժէտ, դու անսուլաղութեամբ տառապիս. յափշտակեաց զիս բորբոքն առ անարժան ցանկութիւնն, զքեզ սէրն կատարեալ էած առ խաշ. ես յանդզնեցայ, առ արգիլեան, դու ներքոյ արկար խայթից խթանաց. ես հեշտանամ յուտելիս, դու տառապիս ի կախաղանի. ես վայելեմ ի փափկութիւնս, դու պատառոտիս բեկուք. ես զիմնորոյն անուշութիւն, դու զիեղոյն առնուս ճաշակ. ինձ ծիծաղելով ուրախակից Եւա, քեզ ողբալսվ տրտմակից Մարիամ: Ահա թագաւոր փառաց, ահա իմս ամբարշտութիւն, և քոյդ փայլէ գթութիւն. ահա իմս անիրաւութիւն, և քոյին արտափայլէ արդարութիւն:

Գ. Զինչ թագաւոր իմ և Աստուած իմ, զինչ հատուցից քեզ ընդ ամենայնի զոր ետուր ինձ: Զիք ինչ գտանել ի սրտի մարդոյ՝ որ իցէ արժանաւորդի հատուցումն այսպիսի վարձուց: Միթէ խորագէտ ճարտարութիւն մարդկային զօրեսցէ մեղենայել ինչ՝ որում համեմստեսցի ողորմու-

Հնազանդիլն քեզ՝ լիցի ինձ սիրելի, և կամոկորելն ընդդէմ
քո՝ նզովելի։ Հայցեմ ի քէն, յօս իմ, վասն գթութեան
քո համօրէն, զի ինայեսցես յամբարըշտիւնս իմ.
բացցես զլսելիս իմ ի լուր պատգամաց քոց, և մի տացես
խոտորել սրտիս՝ պաղատիմ յանուն քո՝ ի բանս չարու-
թեան, առ ի պատճառել զպատճառս մեղաց։ Հայցեմ և
ևս վասն սիրալի խոնարհութեան քո, զի մի եկեսցեն յիս
ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի դողացու-
ցեն զիս։

ԳԼՈՒԽ Ը.

Աստանօր մարդն առաջի առնե Հօր Աստուժոյ զչարչարան
Որդուոյ նորա առ իշր հաշոռքիշն։

Ա. Ահաւասիկ Աստուած ամենակալ հայր տեսառն իմց,
տնօրինեա, բարեգութ, որպէս զիարդ և ողորմեացիս ինձ.
քանզի զոր ինչ ցանկալի ի ձեռու բերի՛ եռանդուն ըղձիւ
մատուցի. զոր ինչ ցանկալի ի ձեռու բերի՛ եռանդեամբ
սրտիյանդիման կացուցի։ Ոչինչթողի ինձ զոր թէ ոչ քումէ
մեծվայելզութեան նուրբեցի. չմաց ինչ այլ՝ զի յաւելից.
քանզի զբովանդակ յօս իմ քեզ յանձն արարի։ Առ քեզ
ուղղեցի զբարեխօսն իմ՝ զսիրելի Որդին քո. եղի զփառա-
ւորեալ միածին քո միջնորդ ընդ իս և ընդ քեզ. եղի ասեմ
զբարեխօսն՝ որով վստահ եմ հասանել թողութեան։ Եղի
բանիւք զբան քո, զոր վասն իմց առաքեալ ասացի գոր-
ծոց, և ի հաջիւ արկի քեզ զամենասուրբ Որդւոյդ զմահ,
զոր վասն իմ հաւատամ ի յանձն առեալ։ Դաւանեմ ի
քէն առաքեալ զաստուած ութիւնն առնուլ զիմ մարդկու-
թիւն, յորում յանձն էառ ընդունել զապտակս, զկապանս,
զթուքն, զկատականաց համբերելն, այլ և ընդունել զիման,
զբևեռս, զքուեայս։ Զսա՛ վազ ուրեմն մանկութեան լա-
լեօն տառապեալ, տղայութեան խանձարրօքն ձնչեալ,

պատանեկութեան քրտամբքն նեղեալ, ծոմապահութեամբ
տկարացեալ, հսկմամբ տուայտեալ ճանապարհորդու-
թեամբ վաստակեալ, և յետ այնր հաճեալ ընդ գտնս, կոշ-
կոճեալ շարշարանօք, ընդ մեռեալս համարեալ, ճոխացեալ
փառօք յարութեան, եմոյծ յուրախութիւն երկնից, և
ընդ աջմէ բարձրութեան քոյ բազմեցոյց։ Այդ՝ հաշու-
թիւն իմ, և բցոյ բաւութիւն։

Բ. Աստանօր միտ դիր, գթած, յՈրդին՝ զոր ծնար և ի
ծառայն զոր փրկեցեր։ Աստանօր հայեաց յարարողն՝ և
մի անտեսս առներ զարարածն։ Գրկեա զուարթագին
դշովիւն, և հայեաց ողղոմած, ի յուս իւր բարձեալ յոշ-
խարն։ Դա է ամենահաւատատարիմ հովիւն այն՝ որ զոյխարն
երբեմն թափառեալ ի վախս լերանց, ի գահավէժս
ձորոց, բազմապատիկ տառապանօք խնդրեաց. որ եւ արդ
իսկ օրհասականին, արդ իսկ ընդ երկար տարագրութեամբ
լըելոյն՝ և ուր ուրեմն գտելոյն, ուրախութեամբ եդ զինքն ի
ներքոյ, և սքանչելահրաշ ջանիւք սիրոյն՝ ընդ ինքն զոդեալ
ի խորոց անդնդոց ամօթոյն բարձրացոյց, և զթութեամբ
ի գիրկն պնդեալ, առ իննսուն և ինն՝ զմին որ կորուսեալ
եր՝ վերածեաց։

Գ. Ահաւասիկ տէր իմ թագաւոր, Աստուած ամենա-
կալ, ահա հովիւն բարի մատուցանէ քեզ՝ զոր նմա աւան-
գեցեր։ Յանձն էառ ըստ տնօրէնութեան քո փրկել զմար-
դըն, զոր և վերննծայէ քեզ մարբեալ յամենայն արատոյ.
ահա զքո ստեղծուածդ՝ ամենասիրելի ծնունդդ հաշտե-
ցոյց ընդ քեզ վերստին, որ տարագնաց էր առ ի քէն։
Ահա հովիւն հեզ վերաբերեաց ի հօտ քո՝ զայն որ յափըշ-
տակեալ մեկուոի կայր։ Հատոյց քում տեսութեան զծա-
ռայն՝ իւրով խոճիւ փախստական, որպէս զի որ իրաւամբ
պարտական գտաւ պատժոյ, վճարմամբ սորա արժանասցի
թողութեան, և որում՝ առ յանցանացն ի վերաց կայր գե-
հեան, այսպիսի առաջնորդաւ ակն կալցի ի վերակոչումն
հայրենեաց։ Կարող եղէ Հայր Սուրբ, ինքնին թշնամանել,
ոյլոց կարացի ինքնին հաշտիլ ընդքեզ։ Եղեւ ինձ օգնական,
Աստուած իմ, սիրելի Որդի քո, հաղորդեալ մարդկութեանս
իմց՝ զի գարման տարցէ տկարութեանս, իբր զի ուստի

պատճառ արհամարհութեանն ծագեաց՝ անտի մատուցէ քեզ պատարագ գովութեան, և զիս նովաւ դարձուսցէ ի հաշտութիւն ընդ գթութեան քում. որով բազմեալ յամէ քումմէ հանապազ յանդիման երեւեցուացէ զինքն հաղորդ գոյութեանս իմոյ: Ոհա յօյս իմ, ահա վստահութիւն իմ:

Դ. Եթէ զիս վասն անօրէնութեան իմոյ անտես արաւ ցես, որպէս արժան է, հայեաց յիս՝ ողորմած, գէթ վասն սիրոյ Որդւոյդ սիրելոյ: Ուշ կալ Որդւոյդ՝ որով ներեսցես ծառային: Տես զնուէր մարմնայն՝ և թող զպարտու մարմայոյ: Քանից երեւեցին քեզ երանելի վէրք Որդւոյդ՝ ծածկեսցին, աղաշեմ, անօրէնութիւնք իմ: Քանից կարմրափայլ նկարեսցի կողաբուղլս արինն՝ գթութեամբ չնջեսցին, աղաշեմ, բիծք պղծութեան իմոյ: Եւ զի մարմին շարժեաց զքեզ ի բարկութիւն, մարմինն զքեզ զիջուսցէ, աղաշեմ՝ առ ողորմութիւնն. զի որպէս մարմինն հրապուրեաց զիս ի յանցանս, այսպէս մարմինն վերածեսցէ առ թողութիւնն: Արդարեւ բազում ինչ է՝ որում պարտաւորի իմս ապիրատութիւն, այլ յոյժ առաւել մեծագոյն է զոր իրաւամբ Փրկչին իմոյ պահանջէ իգթութիւն. և եթէ՝ մեծ է անօրէնութիւնն իմ, այլ մեծագոյն եւս է արդարութիւնն Փրկչին: Քանզի որչափ գեր ի վերայ է Աստուած քան զմարդն, այնշափ ստորին է շարութիւն իմ քան զնորսյն բարութիւն, որպիսութիւն՝ և որ քանութիւն:

Ե. Քանզի զօր յանցանս գործեաց մարդ՝ զոր ոչ հատոյց Որդին Աստուծոյ եղեալ մարդ: Որո՞վ հապատութեամբ այնշափ ուռուցեալ էր, զոր անշափ խոնարհութիւնն ոչ զգետնեաց: Ո՞ր մահուան տէրութիւն այնշափ՝ զոր տանջնարանք խաչի ծնելոյն Աստուծոյ ոչ էր չնջեալ. Արդարեւ Աստուած իմ՝ եթէ հաւասար կշռորդով կշռեսցին յանցանք ապիրատ մարդոյն՝ և չնորհք չեղինակի փրկողին, ոչ այնշափ արեւելք յարեւմտից՝ կամ ստորինագոյն գժոփաք տարակային յամենաբարձր յերկնից ծղբննեաց: Արդ այժմ, գերահրաշ լուսոյ արարիչ, արդ՝ այժմ անտես արա յանցուածոցս վամն այնշափ վաստակոցն սիրելի Որդւոյդոյ: Այժմիսկ աղաշեմ՝ գթութեամբ նորա

ապիրատութիւնս իմ, ուզզութեամբ նորա թիւրութիւնս իմ, հեղութեամբ նորա կատաղութիւնս իմ նուաճեսցի: Այժմ նորին խոնարհութիւնն զհպարտութիւն իմ, համբերութիւնն զանհամբերութիւնս, բարեգթութիւնն զխստարտութիւնս, հնազանգութիւնն զանհազանդութիւնս, խաղաղութիւնն զխսովութիւնս, քաղցրութիւնն զդառնութիւնս, հեղութիւնն զբարկութիւնս, ոչըն զանգթութիւնն իմ շահեսցի:

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս կարդալոյ առ Հոգին Սուրբ:

Ա. Եւ արդ՝ ով Աստուածային էսթեան սէր. Զօրն ամենակալի՝ և ամեներանեալ Որդւոյն սուրբ հաղորդութիւն, Մխիթարիչը Հոգի Սուրբ, տրտմեցելոց ամենագութ քալալեր. արդէն իսկ կարօղ զօրութեամբդ մնւած ի ներքս ի խորշ սրտի իմոյ, և զիմաւարային ծերպս ամայացեալյարկւ՝ ի պածառափայլ լոյս բնակիշչք՝ ուրախ արա, և հոսանաց քոց առատութեամբ զընդերկար ցամաքութեամբ անշուք ապականութիւնն այցելութեամբ քոյլեղմնաւոր արա: Զկարեվէր խոցեալ գաղտնիս ներքին մարդոյն՝ ոլաքաս սիրոյքս, և զուղեզ գաղջացեալ հոգւոյս՝ փրկաւէտ բոցով թափանցեալ բորբոքեա, սուրբ եռանցեան հրով լուսաւորելով՝ զներքինս մոացս և առ հաստակ զմարմինս ծախեա:

Բ. Արքո՛ ինձ զուղիս փափկութեան քո, զի մի եւս յօժարեցաց ճաշակել զաշխարհայնոցն զթունաւորեալ քաղզ ցրութիւն: Դատ արա ինձ տէր, և իրաւ արա զդատաւատանս իմ յազգէ որ ոչ է սուրբ. ուսո՞ ինձ առնել զկամս քո, զի զու ես Աստուած իմ: Ապա՝ գաւանեմզի յորում և բնակեսցիս, Զօր՝ միանգամայն և Որդւոյն կազմես բնակարան: Երանի որում չնորհեսցի զքեզ հիւրընկալել, քան-

զի քեւ Հայր և Որդի առ նմա օթեվանս արասցեն։ Ե՛կ
արդ, Եկ ամենագութ միսիթարիչդ ցաւագնեալ հոգւոյս,
պաշտպանդ ի յաջողուածու և օգնականդ ի նեղութիւնս։
Ե՛կ մաքրիչդ ապիրատութեանց, զարմանիչդ վիրաց։ Ե՛կ
զօրութիւնդ տկարաց, կանգնիչդ գթելոց։ Ե՛կ խոնարհաց
ուսուցիչդ, հապարտաց հերքիչդ։ Ե՛կ որբոց գթած Հայր,
այրեաց գատասոր քաջոր։ Ե՛կ յշող աղքատաց, սփոփիչդ
լքելոց։ Ե՛կ նաւելոց աստղ առաջնորդական, նաւակոծեւ
լոց նաւահանգիստ, Եկ Աստուած, կենդանեաց անհամեւ
մատ վայելզութիւն, մահացելոց միակ փրկութիւն։ Ե՛կ ա-
մենասուրբ Հոգի և ողորմեա ինձ. յարմարեա զիս քեզ։ և
Էջ առ իս հաշտարար, որպէս զի ոչնչութիւն իմ մեծու-
թեան քում, և տկարութիւն՝ զօրութեան քում վասն բազ-
մապատիկ ողորմութեանց քոց՝ հաճոյական լիցի, ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի փրկչին իմայ, որ ընդ Հօր ի քում միու-
թեան կեայ և թագաւորէ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԼՈՒԽ Ժ.

Աղօրք ժառայի Աստուածոյ՝ նուաստորեանք
անձին իշրոյ զիտողի։

Ա. Գիտեմ, Տէր, գիտեմ և խոստովանիմ, զի չեմ ար-
ժանի՝ եթէ սիրեսցես դու զիս, այլ ստուգիւ դու չես ան-
արժան՝ զի սիրեցից գեղ։ Յիրաւի անարժան եմ ծա-
ռայելոյ քեզ, այլ դու չես անարժան ծառայութեան ստեղ-
ծուածոյ քո։ Ապա տուր ինձ տէր, որով դու ես արժանի,
և ես եղէց արժանի՝ որով եմս անարժան։ Արա ընդ իս՝
զի որպէս կամիս գալարեցաց ի մեղանչելոյ, և զի որպէս
պարտիմն՝ կարացից ծառայելքից։ Պարգեւեա ինձ այն-
պէս պահպանել՝ ուղղել և աւարտել զկեանս իմ, զի իսաւ-
դալութեամբ ննիցից, և խաղաղութեամբ հանգեաց։
Շնորհեա ինձ հուսկ ուրեմն՝ զի ընկալցի զիս քունն հան-
գըստեամբ, հանգիստն ապահովութեամբ, ապահովու-
թիւնն ի յաւիտենականութեան. ամէն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Աղօրք առ ամենասուրբ Երրորդուրիւնն։

Ա. Զքեզ Աստուած Հայր անձին, զքեզ Որդիդ միածին,
զքեզ միսիթարիչ Սուրբ Հոգի, զսուրբ զանբաժանելի Եր-
րորդութիւնն, բոլորական սրտիւ և բերանով խոստովա-
նիմք, գովեմք և բարեբանեմք. քեզ փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Խոստովանեորդիւն ամենակալին Աստուածոյ և.

Անձի վայելչորեան նորա։

Ա. Ո՛վ ծայրագոյն միակ զօրութիւն, և անորիշ մեծվա-
յելչութիւն Երրորդութեան, Աստուած մեր, Աստուած ա-
մենակալ, խոստովանիմ քեզ ես յետինս ծառայից քոց և
նուաստ անդամն եկեղեցւոյ քո։ Խոստովանիմ զքեզ և փա-
ռաւորեմ զքեզ արժանաւոր պատարագաւն գովութեան,
վասն զիսելց և կարող լինելց՝ զոր ինձ փոքր ի շատէ
շնորհել հաճեցար։ Եւ զի արտաքին ընծայք պակասեն ինձ
առ ի կարօղ լինել մատուցանել, զօրս ենն յիս նուէրք
գոկութեան ի պարգեւաց ողորմութեան քո, ահա ինքնա-
յօժար՝ այլ հանդիսաւոր ցնծութեամբ քեզ մատուցանեմ՝
անկեղծ հաւատով և մագուր խղճիւ։

Բ. Արդ հաւատամի քեզ բոլորով սրտիւ թագաւոր եր-
կնի և երկրի տէր, և զքեզ բերանով խոստովանիմ՝ Հայր
և Որդի և Հոգի սուրբ, յերիս անձինս ի միակ էութեան,
ճշմարիտ Աստուած ամենակարօղ, մի, պարզ, անմարմին,
աներեւոյթ և անպարագրելի բնութիւն։ որոյ չիք ոչ

վերնագոյն ոչ ստորին կամ մեծագոյն էակ ինչ, այլ ամենայնիւ առանց իմն տձեւութեան կատարեալ, առանց որքանութեան՝ մեծ, առանց որպիսութեան՝ բարի, առանց ժամանակի՝ յաւիտենական, առանց մահուան՝ կեանք, առանց տկարութեան՝ հզօր, առանց ստութեան՝ ճշմարիտ, առանց դրից, առանց դրից՝ ամէնուրեք ներկայ, առանց տեղոյ՝ ամէնուրեք բովանդակ, առանց տարածելոյ՝ զտուենայն լցուցիշ. առանց ընդդիմութեան յամենայն տեղիս հասանող, առանց շարժման՝ ընդ ամենայն թափանցող, առանց կայից՝ ամէնուրեք մնայուն. առանց կարօտութեան՝ ամենցուն ստեղծօղ, առանց աշխատութեան՝ ամենայնի տիրող, առանց քոյ սկզբան՝ ամեննեցուն սկիզբն տուող, առանց քոյ փոփոխութեան՝ ամենայն փոփոխելեաց արարօտ: Ի մեծութեան անսահման, ի կարողութեան ամենակարօղ, ի բարութեան անշափառ, ի միաստութեան անշափ, յիմաստութեան անըմբըսնելի, ի խորհրդեան ահաւոր, ի գատասատանի՝ արդար, ի խորհրդածութիւնն ամենագաղտնի, ի բանս ճշմարիտ, ի գործս՝ սուրբ, յօղորմութիւնս՝ ամենառատ, առ յանցաւոր՝ ամենեւին երկայնամիտ, առ ապաշխարօղս ամենագութ. միշտ նոյն ինքն յաւիտեան և մշտնչենառ, անմահ և անփոփոխ, զոր ոչ տարածութիւնք ընդարձակեն, ոչ կարճութիւն տեղեաց նուազէ, և ոչ ընդունարանք ինչ ամփոփեն. ոչ կամքն փոփոխէ, և ոչ հարկն եղծանէ, ոչ տիրութիւնք խռովին, և ոչ ուրախութիւնք ամոքեն. յորմէ՝ ոչ մոռացումն ինչ բառնայ, և ոչ յիշատակութիւնն յաւելու. ոչ ներկայքն անցանեն, և ոչ ապագայքն յաջորդեն. որում ոչ ծագութն՝ զսկիզբն, ոչ ժամանակն՝ զանումն, ոչ դիպուածն՝ վախճան տացեն. այլ յառաջ քան զդարս, և ի դարս, և ի ձեռն դարուց ի յաւիտեան կեաս. և է քեզ մշտնչենառ օրհնութիւն, և յաւիտենական փառք, գերագոյն կարողութիւն, անզուգական պատիւ, անեղբական թագաւորութիւն, և անվախճան տէրութիւն, ընդ անհուն, անոպառ, և անմահական յաւիտեանս յաւիտենից:

Գ.ԼՈՒԽ ԺԳ.

Զիարդ մարդկային ազգի համեցաւ օգնել Աստուած Հայր, և յաղագս մարդեղորեան Բանին, և շնորհակարութեան:

Ա. Մինչեւ ցարդ, ամենակալ Աստուած, տեսող և քննիչ պատի իմոյ, խոստովան եղէ զամենակարողութիւն մեծվայելչութեան քո, և զմեծվայելութիւն ամենակարողութեան քո. և այժմ եթէ զիարդ մարդկայինս ազգի օժանդակել կամեցար ի վախճան ժամանակաց, որպէս սրտի հաւատամ յարդարութիւն՝ այսպէս բերանով առաջի քո խոստովանիմի փրկութիւն. Զքեզ միայն ապաքէն Աստուած Հայր, ոչ երբէք և ոչ ուրեք ընթեռնումք առաքեալ իսկ վասն Որդւոյ քո այսպէս զրէ Առաքեալն. « Իրբեւ եկն լրումն ժամանակի՝ առաքեաց Աստուած զՈրդի իւր ». (Քաղ. Դ): Յասելն « առաքեաց », յայտնի ցուցանէ թէ եկն առաքեալ յայս աշխարհ, և յերանելոյ Մարիամայ միշտ կուսէն ծնեալ՝ ճշմարիտ և կատարեալ մարդ ի մարմին երեւեցաւ:

Բ. Ա.Ա. զի՞նչ է՝ զոր զնմանէ ասէ նա ինքն գլխաւորն աւետարանչաց. « Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղեւ ». (Յովի. Ա). Անդ արդարեւ առաքեցաւ մարդկութեամբ՝ ուր միշտ եղեւ և է աստուածութեամբ. և զայդ առաքումն գործ լինելուր օրբոյ Երրորդութեանն՝ սրտի հաւատամ, բերանով խոստովանիմ: Զիարդ ապա սիրեցեր զմեզ Հայր սուրբ և բարի. որչափ ընդ մեզ բարեհաճեցար, գթած սուեղծօղ զի և յՈրդի քո ոչ խնայեցեր, այլ վասն մեր ամբարշտաց մատնեցեր զնա, հնապանդ իւալ նորա քեզ մահու շափ և մահու խաչի, բառնալով զձեռագիր յանցանաց մերոց, բեւեռելով զայն ի խաչափայտն, ի խաչ եհան զմեղս՝ և սպան զմահ: Միակ նա ի մեռեալս ազատ, ունելով իշխանութիւն դնելոյ զանձն իւր վասն մեր, և դարձեալ առնլոյ վասն մեր:

Գ. Ուրեմն յաղթօղ և պատարագ. և յայն սակս յաղ-

թօղ՝ զի պատարագ վասն մեր։ Քեզ՝ քահանայ և պատարագ։ և վասն այնր քահանայ՝ զի պատարագ։ Ապաքէն յոյս իմ հզօր ի նա, զի ողջացուցես զամենայն կթոտութիւնս իմ նովալ՝ որ նստի ընդ աշմէ քումմէ և բարեխօսէ վասն մեր։ Կթոտութիւնք իմ, Տէր, մեծ են և բազում, բազում են և մեծք։ Քանզի բազում ինչ ունի յիս իշխան աշխարհիս այսորիկ, գիտեմ և խոստովանիմ։ այլ աղախմ զքեզ՝ աղատեա զիս վասն ընդ աշմէ քումմէ բազմելոյն Փրկչին իմց, յորում ոչ ինչ յիւրացն շարեաց կարաց գտանել։ Արդարացո զիս սովաւ որ զմեղս ոչ արար, և ոչ գտաւ նենդութիւն ի բերան նորա։ Սովա՛ որ է զլովս մեր՝ յորում չք արատ ինչ, աղատեա զիս զանդամնորա՝ թէեւ չնշին և ախտամէտ։ Ազատեա զիս տղաշեմ ի մեղաց, յախտից, յանցանաց և ի զանցառութեանց իմոց։ լցո զիս քոյով սուրբ զօրութեամբ, և ճոխացո՛ զիս վարուք բարեօք։ Տուր ինձ ի գործս սուրբս՝ վասն անուան քոյ սրբոյ՝ յարատեւել մինչեւ ի վախճան, ըստ կամաց քոց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս ասպահնորդեան՝ զոր արժան է ունել
հոգոյ ի Տէր Յիսուս, և ի չարչարան նորա։

Ա։ Յուսահատել մարթ էր ինձ, Աստուած, առ անհնարին բազմութեան մեղաց իմոց՝ և անբաւ զանցառութեանց իմոց, եթէ Բանք քո չէր մարմին եղեալ և բնակեալ ի մեզ։ Այլ արդ ոչ իշխեմ յուսահատել, զի մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք մահուամբ Որդոյ քո, քանի՛ առաւել հաշտեալքս փրկեալք եմք նովաւ։ Զի և ամենայն յոյս և բովանդակ ստուգութիւն ապաւինութեան է ինձ ի պատուական արիւն նորա, որ հեղաւ վասն մեր և վասն մերոյ փրկութեան։ Ի նմա ոգի առնում, և նովաւ պատապընդեալ առ քեզ ժամանել տենչամ։ ոչ ունելով զիմինչ ար-

գարութիւն, այլ զայն որ է յՈրդին քո ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս։ Ապա չնորհս մատուցանեմք քեզ ամենագութ և բարերար մարդասէր Աստուած, որ Յիսուսի Քրիստոսի որդւով քով Տերամբ մերով՝ մինչ ոչն էաք՝ կարողապէս արարեր զմեղ։ և մինչ կորուսեալ էաք սակա յանցուածոց մերոց, սպանչելապէս ազատեցեր և վերանորոգեցեր զմեղ։

Բ. Շնորհս մատուցանեմք թութեան քում, և բազմապատիկ զօնութիւնս վերընծայեմ ի բոլոր սրտէ իմմէ, որ վասն քոյ անձառելի բարեհաճութեանդ՝ որով զմեզ ողորմելիս և զանարդանս սպանչելահրաշ բարութեամբ սիրել համեցար, առափեցեր զնոյն ինքն մկմաժինդ ի ծոցոյ քումմէ առ ընդհանուր օգուտ մեր, փրկել զմեղ զմեղաւորս՝ որ յայնժամ որդիք էաք կորստեան։ Շնորհս մատուցանեմք քեզ վասն սրբոյ մարդեղութեան և ծննդեան նորա, և փառաւորեալ ծնողի իւրոյ, յորմէ մարմին առնուլ հաճեցաւ վասն մեր և վասն փրկութեան մերոյ. զի սրպէս Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ, նոյնպէս և մարդ ճշմարիտ՝ ի մարդոյ լինիցի։ Շնորհս քեզ մատուցանեմ վասն չարշարանաց և խաչի նորա, վասն մահուան և յարութեան նորա, վասն համբարձման նորա յերկինս և նստելոյ մեծվայելչութեան նորա ընդ աշմէ քումմէ։ Զի նա ինքն ի քառասներորդի առուր զինի յարութեան իւրոյ՝ համբարձեալ ակներեւ աշակերտացն ի վերոյ քան գերկինս, և նըստեալ ընդ աշմէ քումմէ՝ զՀոգին Սուրբ ըստ խոստան իւրում՝ եկելյորդիսն որդէգրութեան։

Գ. Շնորհս քեզ մատուցանեմ վասն ամենասուրբ հեղման արեան նորա, որով փրկեցաք. միանգամբյան և վասն սրբագործ և կենարար խորհրդոյ մարմիոյ և արեստն նորա, որով հանսպատ յեկեղեցւով քում ճաշակեմք և ըմպեմք, լուացեալ լինիմք և սրբիմք, և միաննական գերագոյն աստուածութեանն հաղորդս լինիմք։ Շնորհս քեզ մատուցանեմ վասն հիանալի և անձառելի սիրոյ քոյ, որով զմեղ զանարժանս այսպէս սիրեցեր և փրկեցեր միակ և սիրելի Որդւով քով։ Քանզի այնպէս սիրեցեր զաշխարհ՝ մինչեւ զՈրդին քո ետուր, զի ամենայն որ հաւատայ ի նա՛ ոչ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յափառեականս։ Քանզի այս

Են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առափեցերդ զՅիսուս Քրիստոս, ուղիղ հաւատով և արժանաւոր գործովիք հաւատոյ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն անբաց սիրոյ Հօրն յաշխտենականի առ ազգս մարդկան:

Ա. Ո՛վ անբաւ զթութիւն և անկըսելի սէր, զի առ ի ազատել զծառայն՝ զՈրդիդ մատնեցեր: Աստուած՝ Եղեւ մարդ, զի մարդն Կորուսեալ՝ զերծցի յիշխանութենէ դիւաց: Փանի ամենագութ մարդասէր է Որդի քո Աստուած մեր, որոյ ամենախնամ զթութեանն ոչ էր բաւական՝ զի զանձն խօսարհեցոյ եղեալ մարդ ի Մարիամց կուսէն, եթէ ոչ յանձն առնոյր և գտանջանս խաչի, հեղլով զարիւն իւր վասն մեր և վասն մերոյ ֆրկութեան: Եկն բարեգութն Աստուած, եկն վասն զթութեան և բարութեան իւրոյ. եկն խնդրել և կեցուցանել՝ որ կորուսեալն էր: Խնդրեաց զիորուսեալ ոչխարն, խնդրեաց և եզիտ, և ուսով իւրով էած ի փարախ հօտին, զթածն տէր և ճշմարիտ հովիւն, ներողամիտ բարեխնամին:

Բ. Ո՛վ սէր, ով զթութիւն. ո՞ երբէք լուաւ զայսպիսիս: Ո՞ ոչ ընդարմասցի ընդ այսպան ողորմութիւն. ո՞ ոչ սփանչացցի: Ո՞ ոչ խնդրապատար գուարհնասցի ընդ չնախարհիկ սէր քո՝ որով զմեզ սիրեցեր, Առաքեցեր զորդի քո ի նմանութիւն մարմնոյ մեղաց, զի վասն մեղաց գատապարտեսցէ զմեզու, զի մեքի նմին լիցուք արդարութիւնքո: Փանդինա է ճշմարիտ գառն անարատ՝ որ երարծ զմեզու աշխարհի, որ զմահ մեր՝ մեռանելմի բնաջինջ արար, և զկեանս՝ յարութեամբն վերաստեղծեալ նորոգեաց:

Գ. Այլ զի՞նչքեզ հաստուցանել կարեմք Աստուած մեր, վասն այդշափ բարերարութեանց ողորմութեան քո. զ՞ո՞ր

գովութիւնս, զո՞ր շնորհակալութիւնս: Այս, այս. եթէ և նոցին իսկ երանեալ հրեշտակացն զիտութիւն և կարողութիւն՝ մեր լինէր, սակայն տակաւին ոչինչ արժանի այդշափ զթութեան և բարութեան քո փոխարինել զօրէաք: Եթէ ամենայն անդամնի մեր փոխարկէին ի լեզուս՝ առի հատուցանել քեզ զպարառուպատշաճ գոհութիւնս, ոչ լինէր ամենեւին բաւական նուսասութիւնս մեր: Գերազանցէ քան զամենայն զիտութիւն քոյդ անըմբոննելի սէր, զոր ցուցեր մեզ անարժանիցս վասն միայնոյ բարութեան և զթութեան քո. զի և Որդի քո Աստուած մեր՝ ոչ զհրեշտակաց՝ այլ զզաւակէն Աբրահամու բուռն եհար, նմանեալ մեզ ըստ ամենայնի՝ բաց ի մեղաց: Զմարդկայինն ասպակ և ոչ զհրեշտակացն առեալ զբնութիւն, և զնոյն՝ պատմուճնաւ յարութեանն սրբոյ և անմահութեան փառազգեստեալ, բարձրացցոյ ի վերոյ քան զերկինս, ի վեր քան զքերովքէս և զսերովքէս բազմեցոյց ընդ աշմէ քումէ: Զսագովին հրեշտակք, սմա երկիր պազաննեն տէրութիւնք, և ամենայն զրութիւնք երկնից դողան յաւէտ ի մարդոյն Աստուածոյ:

Դ. Որդ զի դա է իմ բովանդակյոս և ամենայն վատահութիւն. քանզի ի նոյն ինքն Ցիսուս Քրիստոս Տէրն մեր՝ է իւրաքանչիւր մեր մասն՝ մարմին և արիւն. ուր ապա մասն ի մարմին անդ և ես թագաւորել հաւատամի. ուր մարմին իմ ֆաւաւարի՝ անդ փաւաւարեալ զիս ճանաչեմ. ուր ամիրէ արիւն իմ՝ անդ իմանամ տիրել և ինձ: Թէ պէտ և մեղաւոր իցեմ՝ յայս հաղօրգութիւն շնորհաց ոչ երկուանամ: Թէ և մեղք իմ արդեցեն՝ բնութիւն իմ պահանչէ. եթէ յանցանք իմի բաց վարեսցեն զիս, բնութեանս հաղօրդութիւն ոչ հանցէ ի բաց: Քանզի ոչ այնչափ բարկանայ Աստուած մինչ զի մոռասցի զմարդն, և ոչ յիշեսցէ զոր ինքն յինքեան ունի, և զոր ի պատճառու իմ էառ, և ի պատճառու նորա զիս ոչ խնդրեսցէ:

Ե. Հեզ է ապաքէն և կարի բարեգութ Տէր Աստուած մեր, և սիրէ զմարմին իւր և զանդամն իւր, զալիս իւր ի նոյն Աստուած և ի Տէր մեր Ցիսուս Քրիստոս, յամենաւ քաղցրն յամենախնամն և յամենագութն, յորում յա-

բեաք՝ և արդէն յերկինս ամբարձաք, և ընդ երկնաւորս նստիմք։ Մարմին մեր զմեղ սիրէ։ և նովաւ ունիմք զձիր շնորհի արեան մերոյ. քանդի եմք անդամք նորա և մարմին նորա։ Քանդի նա է զլուխ մեր՝ յորմէ բրդոր մարմինն, որպէս գրեալ է, « Ոսկը յոսկերաց իմոց և մարմին ի մարմնոյ իմմէ։ Եւ եղիցին երկուքն ի մարմին մի »։ Եւ ոչ ոք զմարմին իւր ատէ, այլ սնուցանէ զնա և սիրէ։ Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմի Փրիստոս և յեկեղեցի, ասաց Առաքեալն։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յաղագս կրկին բնուշեանց Փրիստոսի, որ մեզ
ողորմի, և վասն մեր բարեխօսէ։

Ա. Եւ արդ՝ շնորհ ունիմ շրթամբք և սրտիւ և ամենայն կարողութեամբս զանչափ զթութենէ քումմէ, Տէր Աստուած մեր, վասն ամենայն ողորմութեանց քոց, որով արդահատելով մեղ կորուսելոցս՝ օժանդակել կամեցար, ի ձեռն Որդւոյ քո Փրկչին և կեցուցչին մերոյ, որ մեռաւ վասն մեղաց մերոց, և յարեաւ վասն զմեղ արդարացուցանելոյ. և այժմ կենդանի է անվախճան, նստելով ընդ աշմէ քումմէ, և բարեխօսէ վասն մեր համանգամայն ընդ քեզ ողորմելով։ Զի Աստուած է ի քէն ի Հօրէդ, յաւիտենականակից և համագոյակից քեզ ամենայնիւ. ուստի կարէ յաւիտեանս փրկել զմեղ. այլ ըստ որում մարդ՝ փոքր է քան զքեզ. տուաւ նման իշխանութիւն յերկինս և յերկիր, Զի յանուն Յիսուսի Փրիստոսի ամենայն ծունը կրկնեցի երկնաւորաց երկրաւորաց և սանդարամետականաց, և ամենայն լեզու խոստովան լիցի՛ եթէ տէր Յիսուս Փրիստոս է ի փառս քո, Աստուած Հայր ամենակալ։ Ասպաքէն նա ինքն կացուցաւ առ ի քէն դատաւոր կենդանեաց և մեռելոց, զի դու ոչ դատես զոք, այլ զամենայն

դատաստանքո ետուր Որդւոյ քում, յորոյ ծոցի ամբարեալ կան ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան։ Բ. Եւ ինքն է վիայ և դատաւոր, դատաւոր և վկայ, յորմէ խիղճ մեղսամակարդ ոչ կարէ փախչել. քանդի ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աշաց նորա։ Ինքն արդարեւ՝ որ յանիրաւի դատեցաւ՝ դատեցէ զաշխարհս իրաւամբ, և զգողովուրդս ուղղութեամբ։ Որհնեմ ապա զմնուն սուրբ քո ի յաւիտեան, և փառաւորեմ յամենայն սրտէ իմմէ ամենակարօդ և ողորմած տէր, վասն այնր անձառելի և պանչելի միաւորութեան աստուածութեանն և մարդկութեան ի միութեան անձին. զի մի այլ ոմն մարդ՝ և այլ ոմն Աստուած լինիցի, այլ մի և նոյն Աստուած և մարդ, մարդ և Աստուած։ Եւ թէպէտ և պանչելի անտրամեծարութեամբ բանն մարմին եղեւ, սակայն և ոչ մի յերկուցն բնութեանց փոխեցաւ յայլ գոյացութիւն. և ի խորհուրդ Երրորդութեան ոչ յաւելսւ շորրորդ անձն. քան զի միացեալ է և ոչ շփոթեալ բանին Աստուծոյ և մարդոյն գոյացութիւն, զի յԱստուած ժամանեցէ որ ինչի մէնչն առեալ էր, և այն որ չէրն եղեալ նոյն որ միշտն էր՝ մնացէ։

Գ. Ո՛վանշելի խորհուրդ, ով անձառելի տուրեւառութեանս. ով զարմանալեացս, և միշտ զարմանալի, և միշտ սիրելի բարութիւնն աստուածային հաշտութեան։ Ոչ էաք ծառայք արժանիք, և ահա եղաք որդիք Աստուծոյ, և ժառանգք Աստուծոյ, և ժառանգակիցք Փրիստոսի։ Ուստի իցէ մեղ այս, և ո՞զմեղ առ այն տարեալ եհան։ Այլ աղայեմ զքեզ ամենողըմ Աստուած Հայր, վասըն այդր անհասանելի զթութեան, բարութեան և սիրոյ քո, զի արժանիս արաւոց զմեղ բազմացն և մեծամեծ խոստմանց նորին իսկ Որդւոյ քո տեառն մերոյ Յիսուսի Փրիստոսի։ Առաքեալ զօրութեամբ քով և զօրաց զայս՝ Դոր հաստատեցեր ի մեղ, և կատարեա զօր սկսարդ, զի առ լիակատար շնորհս քոյս գթութեան՝ արժանասցուք հասանել։ Արա մեղ Հոգեովն Սրբով ի միտ առնուլ և արդիւնաւորի՛ և պարտուպատշաճ պատուով միշտ յարգել զայս խորհուրդ բարութեան, « Որ երեւեցաւ մարմնով, ար-

գարացաւ հոգւով, երեւեցաւ հրեշտակաց, քարողեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ աշխարհի, և վերացաւ փառօք »:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Յաղագս շնորհապարտուրեան մարդոյ առ Աստուած վասն բարերարուրեան փրկագործուրեան:

Ա. ՈՇ, թէ քանի՞ պարտական եմքքեզ, տէր Աստուած մեր, վասն այնքան զնոյ փրկութեան, և այդպիսի պքանչելահրաշ նպաստի բարերարութեան: ՈՇ, քանի՞ ի մէնջ սղորմելեացս երկիւղալի, սիրելի, օրհնելի, գովիլի, պատուելի, և փառաւորելի ես, որ այդպէս սիրեցեր, այդպէս փրկեցեր, այդպէս սրբեցեր, այդպէս բարձրացուցեր: Քանզի քեզ պարտական եմք վասն ամենայնի՝ զոր կարեմք, ամենայնի՝ որով կեամք, ամենայնի՝ զոր իմանամք: Ա. Ա զի՞նչ որ ունիցի որ ոչ իշէ քոյդ: Դու տէր Աստուած մեր՝ յորմէ թղթեն ամենայն բարիկ, վասն քո և վասն անուտն քո սրբոյ տուր մեզի պարզեւաց և ի տրից բարեաց, զի ծառայեսցուր քեզ և ճշմարտութեամբ հաճոյացուք, այլ և զարժանաւորն հանապազորդեան գոհութիւն մատուացուք քեզ, վասն այսափի բարերարութեանց ողորմութեան քո: Քանզի այլազգ ոչ եմք բաւականք ծառայել քեզ, այլ եւ ոչ իսկ հաճյ լինել մարթիմք առանց քոյց պարզեւաց: Քանզի ամենայն տուրը բարիկ՝ և ամենայն պարզեւք կատարեալք ի վերուստ են իշեալ առ ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն և կամշընելոյ ստուեր:

Բ. Տէր Աստուած մեր, Աստուած զթած, Աստուած բարի, Աստուած ամենակարօղ, Աստուած անձառելի և անպարագրելի բնութիւն, իրաւացուցիչ ամենայն իրաց, և Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զնոյն զմիւթիւն քո զամենաքաղցր Տէրն մեր՝ առաքեցեր ի

ծոցյ քումիմէ առնուլ զմեր կեանս, առ հասարակաց մեր կատարելութիւն, զի զիւրն չնորհեցէ մեզ. և իցէ կատարեալ Աստուած ի քէն՝ Հայր, և կատարեալ մարդ ի մօրէ: Աստուած բոլոր և մարդ բոլոր, մի և նոյն Քրիստոսոյաւ փուենական և ժամանակաւոր, անմահ և մահկանացու, ստեղծող և ստեղծեալ, հզօր և տկար, յաղթօղ և յաղթեալ, սնուցիչ և սնեալ, հովիւ և ոչխար, ժամանակեայ մեռեալ՝ և յաւիտեան կենդանի ընդ քեզ: Որ սիրելեաց իւրոց խոստացեալ զքաղաքն կենաց՝ ասաց աշակերտացն: « Զորինչ խնդրեսնիքի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ ». (Յովհ. Գլ. ծ.2): Սովորմ ծայրագոյն քահանայիւս և ճշմարիտ քահանայապետիւս և բարի հովուիւ, որ զինքն մատոյց պատարագ՝ եղեալ զանձն վասն հօտի իւրոյ, զքեզ աղաչեմ. սովու՛ որ փրկիչ և փաստաբան մեր է, և որ նստի ընդ աղմէ քումիմէ և բարեխօսէ վասն մեր, պաղատմիմ գթութեան և բարութեան քում, ամենազութ և ամենասիրելի և բարերար մարդամէր Աստուած, զի տացես ինձ ընդ Որդւոյ քո և Հոգւոյդ Արբոյ՝ զքեզ յամենայնի օրհնել և փառաւորել մեծաւ սրտի զղմամբ և արտասուաց աղբերօք, և բազում յարգանօք և երկիւղիւ: Զի որոց մի է բնութիւն՝ մի է և պարզեւ բարի:

Գ. Ա. Ա քանզի մարմինն որ ապականի՝ ծանրացուցանէ զհոգի, պարթօն աղաչեմ զթմրութիւն իմքոյով խթանաւ, և տուր ինձ քանութեամբ յարատեւելի պատուիրանս քո և ի գոհութիւնս զտիւ և զգիշեր: Տնուր ի ներքս ի սրտի իմում շնուռուլ, և ի խորհուրդս իմք վառեսցի հուր: Եւ զի Միածինդ քո ասաց: « Ոչ ոք գայ առիս, եթէ ոչ Հայրն որ առաքեաց զիս ձգեսցէ զնա ». և « Ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ ». աղաչեմ կողկողազին, դու զիս ձգեաւ առ նա միշտ, զի ինքն ապա վերածցէ զիս առ քեզ անդ՝ ուր ինքն է բազմեալ յաղմէ քումիմէ: ուր է մշտնչենաւոր կեանք յափուեան երանեալ: ուր է ոէր կատարեալ՝ և երկիւլ և ոչ մի: ուր է օր յաւիտենական, և մի հոգի ամենեցուն: Ուր ծայրագոյն ապահովութիւն և սոյդ, և ապահով անդորրութիւն, և անդորր զուարձութիւն, և զուարձալի երջան կութիւն, և երջանիկ յափուենականութիւն, և յափուե-

Նական երանութիւն, և անվախճան երանական քոյդ տեսութիւն և գոլութիւն, ուր գու ընդ նմա և նա ընդ քեզ՝ ի հաղորդակցութեան Հոգւոյն Արքայ, իրավէս և մշտնջենաւրապէս կեսա և թագաւորես ընդ ամենայն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Ազօրք չերմեռանդն առ Քրիստո:

Ա. Քոյս իմ Քրիստոս Աստուած, դու քաղցր, մարդաբէր, լոյս, ճանապարհ, կեանք, փրկութիւն, գեղ, և ամենայն վայելութիւն քոյոցդ. յորոց ի սակս փրկութեան կամեցար՝ կրել զամենայն, զմարմնոյ կապանս, զիաչ, զվէրս, զմահ, այլ և զթաղումն. ապա յետ երից աւուրց յալթեալ մահու յարեար. երեւեալ աշակերտացն՝ զերկրայութիւն սրտիցն փարատեցեր, լուսով քառասնօրեայ ի բարձունս երկնից վերացար. կեսա յաւերժարար, այժըմ և ի յաւիտեանս թագաւորելով:

Դու ես Աստուած իմ կենդանի և ճշմարիտ, Հայր իմ սուրբ, տէր իմ զթած, թագաւոր իմ մեծ, հովիւ իմ բարի, վարդապետ իմ միակ, օգնական իմ ամենաբարի, սիրելի իմ ամենազեղցիկ, հաց իմ կենդանի, քահանայ իմ յաւիտեանական, առաջնորդ իմ առ հայրենիս, լոյս իմ ճշմարիտ, քաղցրութիւն իմ սուրբ, ճանապարհ իմ ուղիղ, իմաստութիւն իմ ամենապայծառ, պարզութիւն իմ անապակ, միաբանութիւն իմ խաղաղական, պահպանութիւն իմ աներկեւան, մասն իմ բարի, փրկութիւն ի մշտնջենական, ողօրմութիւն իմ մեծ, համբերութիւն իմ ամենազօր, զոհ իմ անարատ, փրկագործութիւն իմ սուրբ, լոյս իմ հաստատուն, սէր իմ կատարեալ, յարութիւն իմ. ճշմարիտ, կեանք իմ յաւիտենական, ուրախութիւն և տեսութիւն իմ ամեներանեալ, և տեւողութիւն անվախճան: Զքեզա-

դաշեմ, պաղատիմ, և մաղթեմ, զի քեւ ընթացայց, առ քեզ ժամանեցից, ի քեզ հանգեայց, որ ես ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք, առանց որոյ ոչ գայ առ Հայր. քեզ ցանկամ ամենաքաղցր և գեղապայծառ Տէր:

Բ. Ո՛վ ճառագայթ հայրական փառաց, որ նստիս ի վերայ քերովբէից և հայիս յանդունդո. լոյս կենդանի, լոյս ճշմարիտ, լոյս անսպառ, յոր հայել ցանկան հրեշտակը: Ահա սիրո իմ առաջի քո է, հալածեալ զիսաւար սորսա, զի պայծառութեամբ սիրոյ քո լցցի լիսպատար: Տնւր ինձ զքեզ, Աստուած իմ, հատու ինձ զքեզ. ահա սիրեմ զքեզ. և եթէ գոյզն իմն է՝ սիրեցից և եւս ուժին: Ո՛չ կարեմ չափել զի գիտացից թէ որչափ պակասի ինձ ի սիրոյ քումմէ՝ առ ի բաւական լինել, և ընթացեալ զիմեսցէ կեանք իմ զիրկո քո, և մի դարձցի մինչեւ ծածկեսցի ի ծածկոյթ երեսաց քոց: Աակայն զիտեմ զայս, զի առանց քո վնաս մեծ է ինձ, Տէր, ոչ միայն արտաքսապէս՝ այլ և ներքսապէս յիս ինքն. քանզի ամենայն լիութիւն որ ոչ է Աստուածն իմ՝ չքաւորութիւն է ինձ:

Գ. Քանդի բարին՝ զոր ոչ ի լաւագոյն և ոչ ի յոռեգոյն փոխել կարես, զու միայն ես, որ պարզապէս միայնդ ես, որում ոչ այլ ինչ է կեալն և ոչ այլ երանապէս կեալն. զի քո երանութիւն՝ զու ես: Բայց ստեղծուած քո՝ որում այլ ինչ է կեալն, և այլ ինչ երանապէս կեալն, զամենայն որով կեայ՝ և երանապէս կեայ, պարտի շնորհաց քոց վերագրել: Եւ վասն այսորիկ մեք քեզ կարօտմիք, այլ ոչ զու մեզ. զի թէ ամենեւին չէր մեր եղեալ՝ ոչինչ պակասէր քեզ ի բարւոցն՝ որ զու ես: Եւ այսպէս հարկ է մեզ միշտ յարիլ ի տէր Աստուածդ մեր, զի յարաժամ օժանդակութեամբ քով սրբութեամբ և երկիւլածութեամբ, և ուղլութեամբ մարթացուք կեալ: Որովհետեւ ծանրութեամբ տկարութեան մերոյ ձգիմք ի վայր. իսկ քոյին պարզեւօք՝ արծարծիմք և ի բարձունս թեւակոխեմք, վառեալ բորբոքիմք, և գնամք ելանեմք ելս եղեալ ի մոի, և երգեմք զերգս աշտիճանաց. հրովքով բարեաւ՝ վասիմք և գնամք:

Դ. Որով ի բարձունս զնամք առ խաղաղութիւնն Երուսաղէմի. քանդի « Ուրախ եղէ ընդ այնոսիկ որք ասացին

ինձ, ի տուն Տեառն Երթիցուք»: Անդ զետեղեաց զմեզ կամբնքարի, զի մի այլ ինչ կամեացուք, քան զի ինչն անդ ի յաւիտեան: Այլքանզի ցորշափ յամեմք ի մարմին՝ օտարանամք ի քէն: Տէր, ոչ ունիմք աստ քաղաք՝ որ մնալց է, այլ զհանդերձեալն խնդրեմք, զի մեր առաքինութիւն ի յերկինս է. սակա այնորիկ առաջնորդութեամբ չնորհաց քոց մտից ի սենեակ սրտի իմոյ, և երգեցից քեզ զերզս սիրելոյ, թագաւոր իմեւ Աստուած իմ, ողբալով զանպատմելի ողբն ի տեղով պանդխութեան, ուր երգի իմ եղեն արդարութիւնք քո:

Եւ Եւ յիշելով զԵրուսաղէմ՝ ինա ուղղեմ զիսորհուրդս սրտի իմոյ. զԵրուսաղէմ զհայրենիս իմ, զԵրուսաղէմ զմայր իմ, և զքեզ ի վերայ նորա՝ զթագաւորդ, զամյժառացուցիչ, զհայրդ, զտեսուցդ, զինամակալդ, զկառավարիչդ, զհովիւդ, զսուրբ և զօրեղ փափկութիւնս, զանյեղի ուրախութիւնն, և զամենայն անճառելի բարիսն, զմմենայն համօրէն. այս է, զմի ծայրագոյն և զճշմարիտ բարին. և ոչ կացից ի բայց մինչեւ ի խաղաղութիւն նորին մօրն սիրելուոյ, յորում են երախայրիք հոգւոյ իմոյ՝ հաւաքեցես զբովանդակն զոր եմս՝ ի ցրմանէ աստի և ի տգեղութենէ, և կերպարանեսցես և հաստատեսցեսի յաւիտեան, Աստուած իմ, ողորմութիւն իմ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Հանագանորիշն իմաստորեան՝ որ տուն Աստուածոյ է, և իմաստորեան՝ որ աստուածային է:

Ա. Այս է տունքո Աստուած, ոչ երկրաւոր՝ և ոչ յերկնային ինչ մարմնաւոր զանգուածոյ, այլ հոգեւորական և հաղրդդ յաւիտենականութեան քո, զի անապական մնայի յաւիտեանս, քանզի հաստեցեր զայն ի յաւիտեանս յաւիտենից, սահման եղեր և ոչ անցանէ: Սակայն ոչ յեր-

Աստուածոյդ յաւիտենակից, զի չէ անսկիզբն, քանզի արարեալ է: Զի յառաջքան զամենայն ստեղծաւ իմաստութիւն: Ոչ այն իմաստութիւն չօր Աստուածոյ՝ իսկութեամբ յաւիտենականակից և համահաւասար, որով ստեղծան ամենայն ինչ, և յորում սկզբանն եղեն երկինք և երկիր. այլ ապաքէն իմաստութիւնն որ ստեղծաւ հոգեւորական ընաւթիւն, որ նկատողութեամբ լուսոյն է լոյս. և ասի եւս և ինքն իմաստութիւն՝ թէ և ստեղծեալ: Այլ որչափ տարանջատ է լոյսն լուսաւորեալ, և լոյսն լուսաւորեալ, այնչափ տարակայի ծայրագոյն իմաստութիւնն՝ որ եսդ և ես ստեղծող, և այն որ ստեղծեալն է, որպէս արդարութիւն արդարացուցիչ, որ ես զու տէր Աստուած մեր, և արդարութիւնն որ լինի արդարացուցմանք մերով: Զի և մեք ամիմք արդարութիւն Աստուածոյ չօր՝ ի քեզ յՈրդիդ նորա ի Տէր մեր, ըստ վկացելոյ առաքելոյն:

Բ. Արդ որովհետեւ յառաջքան զամենայն ստեղծաւ իմաստութիւն ինչ, որ ստեղծաւ միոք բանական և իմացական՝ անարատ սրբոյ քաղաքի քո մօր մերոյ, որ ի բարձունս է և ազատ և յաւիտենական ի յերկինս, Յո՞ր երկինս, եթէ ոչ որք զքեզ գովեն երկինք երկնից, զի այս իսկ է երկինք երկնից Տեառն: Եւ եթէ ոչ զտանեմք զժամանակ յառաջքան զայն որ յառաջ է քան զստեղծեալն ի ժամանակի, զի յառաջքան զամենայն ստեղծաւ, սակայն յառաջքան զնա զու ես Աստուած յաւիտենական, ստեղծող ամենեցուն, յորմէ է նորին իսկ ստեղծուածոյն մշտընչենաւորութիւն. յորմէ եղեան էտո սկիզբն ինչ, ոչ ի ժամանակի՝ զի չեւ եւս էր ժամանակն, այլ ի նոյն իսկ ի քոյ հանգամանաց. ուստի այնպէս է ի քէն տեառնէ Աստուած մերմէ՝ որպէս զի ստուգապէս այլ ինչ իցէ ի քէն. թէպէտ և ոչ յառաջքան զնա և ոչ ի նմա զտանիցեմք ժամանակ: Ի գէպ է արդարութեաննել միշտ զերեսս քո, և ոչ երբէք տերանջատել ի նմանէ. որով ոչինչ փոփոխութեամբ այլլայլի: Բայց է յինքեան փոփոխութիւն՝ որով մթազնէր և ցրտանայր, եթէ ոչ յարեալ մեծաւ սիրով ի քեզ, և իւրեւ առաւել քան զմիջօրէ լուսաւորէր և բորբագէր առ ի քէն:

Գ. Քանզի այնքան սուրբ սիրով յարի ի քեզ ի ճշմարտուած՝ և ի ճշմարիտ յաւիտենականդ, զի թէ և ոչ իցէ քեզ յաւիտենակից, սակայն և ոչ իւիք ժամանակի փոփոխութեամբ կամ յաջորդութեամբ քակատի և հոսի ի քէն, այլ ի քոյ միայն ճշմարտագոյն տեսութիւնդ հանգուցեալ դադարէ: Քանզի դու Աստուած՝ սիրովին զքեզ որչափ կանխես ցուցանես, բաւական է նմա. ուստի ոչ հեռանայ ի քէն՝ և ոչ գքեզ հեռացացանէ յիւրմէ, այլ միշտ ի նմին պայմանի մնայ անպակաս, տեսանելով զքեզ անպակաս, սիրելով զցմարիտ լոյսդ և զանարատ սէրդ: Ո՛վ երանելի և գերագոյն ստեղծուած ստեղծուածոց, առաւել եւս երանելի՝ յարելովին միշտ յերանութիւն քո երջանիկ, և առաւել երջանիկ քոյին մշտըն չենական բնակութեամբդ և լուսաւորութեամբ:

Դ. Ոչ գտանեմ զինչ այլ նախընտիր համարեցուք անուանել, երկնք երկնից Տեառն, քան թէ տուն քո, նկատող աննուազ զուարձութեան քո, և ոչ ախորժելով անցանել յայլ ինչ. միտք միակ մաքուր համակիր, բնակարան խաղաղութեան երանեալ հոգուց: Յերկինս են երկնայինք այսրիկ. որով ի միտ առցէ հոգի՝ որոյ պանդիստութիւնն ընդ երկար եղեւ, եթէ ծարաւի իսկ է քեզ, եթէ եղեն արտասուք իւր հաց իւր, և թէ արդ ինդրէ զմին և զսյն ազաշէ, զի բնակեցէ ի տան քում զամենայն աւուրս կենաց իւրոց:

Եւ ո՞ր այն իցէ կեանք նորա, եթէ ոչ դու, և ո՞ր աւուրք նորա, եթէ ոչ յաւիտենականութիւն քո. զի ամք քո ոչ պակասեն: Աստ աւասիկ իմասցի հոգի որ կարէ, քանի առաւել քան զամենայն ժամանակս յաւիտենական իցես դու, յորժամ տուն քո՝ որ ոչ է նժդեհացեալ, թէ և ոչ իցէ յաւիտենակից, այլ անպակաս և անանջատ ի քեզ յարելով ոչ կրէ ինչ ժամանակի փոփոխութիւն, և զքեզ միշտ յարատեակ ողջախոհութեամբ ներընդունելով զանփոփոխութիւնդ իւր, ոչ երբէք և ոչ բնաւ անջատիցի ի քէն՝ որ ներկայդ ես նմին. առ որ փափագեալ մնայ ամենայն տենչմամբ, ոչ ունելով սպագայ՝ որում ակնկալցի, ոչ փոխելով յանցեալն՝ զոր յիշիցէ. ոչ իւիք փոփոխմամբ այլայլի, և ոչ յայլ ինչ ժամանակ տարածանի:

ԳԼՈՒԽ ի..

Աստանօր աղօթէ մարդ զի և. նոյն ինքն տունն
Ասուցոյ աղօթեացէ վասն իւր:

Ա. Ո՛վ տուն Աստուծոյ լուսափառ և վայելշագեղ, սիրեցի զվայելշութիւն քո, և զտեղի յարկի փառաց տեառն Աստուծոյ իմոյ՝ ժառանգողի և յօրինողի քո: Քեզ հառաջէ պանդըստութիւնս իմ զտիւ և զգիշեր. քեզ անձկայ սիրտ իմ, առ քեզ ձգին միտք իմ. առ մասնակցութիւն երանութեան քո ժամանել ցանկայ հոգի իմ. արարշին քում ասեմ, զի և զիս ժառանգեացէ ի քեզ. զի ինքն արար զիս և զքեզ: Դու մանաւանդ ասա, դու աղաչեա զնա, զի արժանի արարացէ զիս մասնակից լինել փառաց քոց: Քանզի զքո ընկերութիւնդ սուրբ և զվայելշութիւն ք զսքանչելի՝ ոչ առ արդեանց իմոց մազթեմ, այլ վասն արեան նորա՝ որով փրկեալս եմ՝ ոչ անցյս եմի ստանալ: Հասցեն ինձ ի թիկունս արդիւնք քո, ժամանեացեն վատթարութեանս իմում սուրբ և ամենամաքուր աղօթք քո՝ որք առ Աստուծոյ ապարդիւն լինել ոչ կարեն:

Բ. Մոլորեցայ, խստովանիմ այո, որպէս զրշխար կորուսեալ, և պանդըստութիւն իմ ընդ երկար եղեւ, այլ և հեռի իսկ ընկեցայ յերեսաց տեառն Աստուծոյ իմոյ, յայսըմ աբսորանաց կուրութեան. ուր վտարեալ ի գրախտին զուարձութեանց՝ ողբամ հանապազ ի վերայ թշուառութեանց գերութեան իմոյ՝ սդական երգօք և գառնազին կոծովք. յորժամ յիշեմ զքեզ մայր երուսաղէմ. մինչ կան ոտք իմի գաւիթս քո՝ սուրբ և գեղեցիկդ Ոիովին, և ոչ կարեմ զներքինս քո նկատել յայտնապէս. այլ ի յուս հովուին իմոյ վարդապէտին քո՝ յուսամ վերաբերիլ առ քեզ. զի խայտացից ընդ քեզ նովին անձառելի ուրախսութեամբ՝ որով ի ննդան որք ընդ քեզ են առաջի նորին Աստուծոյ և փրկչին իմոյ. որ ելցծ զթշամութիւնս ի մարմնի իւրում, և հաշտեցոյց զամենայն որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի արեամբ իւրով:

Գ. Վանդի նա ինքն է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեանն մի, որ զերկուս դէմընդդէմհակառակ եկեալ որմունս՝ միացոյց ընդ ինքեան։ զբոյ երանութեանդ զմըշտակայ զերջանկութիւն՝ հաւասարապէս և նովին չափով զինքն տալ մեզ խոստացաւ, ասելով. « Եղիցին հաւասար հրեշտակացն Աստուծոյ յերկինս »։ Ո՛վ Երուսաղէմ, յաւիտենական տուն Աստուծոյ, յետ սիրոյն Քրիստոսի գու լիր ցնծութիւն իմ. քաղցր յիշատակութիւն երանական անուան քո՛ լիցի ի փարատումն սգոյ և տիրութեանց իմոց։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Քանի դառնորեամբ վարակեալ են այս կեանք։

Ա. Տաղտկալի է ինձ Տէր՝ յոյժ՝ կեամքս այս և աղէտաշ լի պանդըխտութիւն սորին։ Կեանքս այս կեանք թշուառ, կեանք դիւրակործան, կեանք անստոյդ, կեանք վաստակարեկ, կեանք անմաքուր, տէր չարաց, թագաւոր հապատաց, լի թշուառութեամբք և մոլորութեամբք. ոչ է արժան կեանք անուանել՝ այլ մահ։ յորում յամենայն վայրկենի մեռանիմք, այլ և այլ փոփօխութեամբ և պակասութեամբ և զանազան տեսակօք մահուան։

Բ. Եւ միթէ զայդ՝ որով կեամք յայս ՝ աշխարհի, կարից մը կոչել կեանս, զոր գիճութիւնք այտուցանեն, ցաւք տկարացուցանեն, և չերմութիւնք ցամաքեցուցանեն, ոդ մեղկացուցանէ, կերակուրք ուռուցանեն, ծովքնիհարացուցանեն, խաղարկութիւնք լուծանեն, տրտմութիւնք սպռեն, հոգք նեղեն, ապահովութիւն բթացուցանէ, մեծութիւնք փքացուցանեն և ամբարտաւանեն, աղքատութիւնն լքուցանէ, մանկութիւն գուռզացուցանէ, ծերութիւն կորացուցանէ, տկարութիւնն խորտակէ, սուզն ճնշէ։ Եւ յետ ամենայնի այսոցիկ ախտից՝ մահն դժնեայ յաջորդէ, համանգամայն ամենայն ուրախութեանց թշուառականս

այսր կենցաղոյս՝ այնպիսի իմ ի վերայ ածելով վախանն, զի ի զագարելն ի լինելոյ՝ չեղեալ համարեսցի։ Մահու այս կենսական, և կեանքս մահական, թէ և այսուքիւք և այլովք գառնութեամբք լի է, աւազ, քանի բազումս հրապուրանօք իւրովք ըմբռնէ, և քանի բազումս սուտ խոստմամբքն պատրէ։

Գ. Եւ թէպէտ իսկապէս սուտէ և գառն, որ և ոչ յիւրոց զաշացու սիրողացն կարէ ծածկիլ, սակայն անբաւ բազմութեան յիմարաց՝ սոկելին բաժական զոր ի ձեռին ունի՝ տայ ըմպել և զլսովին արբեցուցանէ։ Երանի նոցա՝ սակաւոցն այնոցիկ՝ որք յընտանութենէ սորա հրաժարեն, անսարգեն զհարեւանցիկ ուրախութիւնս, լքանեն զընկերութիւնն, զի մի ընդ սմին ընդ խարուսիկ կորստականի՝ և ինքեանք սոփակեսցին կորնչել։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Վասն երջաննկուրեան կենացե՛ զոր պատրաստեաց
Ասուած վասն սիրելեաց իւրոց։

Ա. Ո՛վ դու կեանք, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ կեանք կենսական, կեանք երանական, կեանք աներկեւան, կեանք խաղաղական, կեանք վայելշական, կեանք մաքրական, կեանք անարատ, կեանք սուրբ, կեանք անգէտ մահուան և տրտմութեան, կեանք անաղտ, անցաւ, անվիշտ, անապական, անվրդով, անփոփոխ և անսայլայլակ. կեանք ամենայն վաեմութեամբք և արժանաւորութեամբ պատարուն. ուր չիք թշնամի զիմամարտ, ուր չիք մեղաց հրապորք, ուր սէր է կատարեալ, և երկիւլ և ոչ մի. ուր տիւ յաւիտենական, և ամենեցուն հոգի մի, ուր Աստուած գէմ յանդիման տեսանի, և նովին կենաց կերակով միտք աննիազ յագենան։

Բ. Ցանկալի է ինձ հասու լինելքումդ պայծառութեան.

անյագ սրտիւ հեշտացուցանեն զիս բարիք քո։ Որչափ առաւել զօրեմ զմտաւ ածել՝ իմովսանն այնչափ առաւելութեամբ սիրոյ քո թալկանամ։ քո սաստիկ տենչմամբ՝ և քաղցր յիշատակութեամբ՝ կարի յոյժ հեշտանամ։ Յան կալի է ասլա՝ ցանկալի է ամբառնալ առ քեզ զաշս սրտիս, զպայման մտացս ուղղել, զախորժակս հոգւոյ յարմարել։ Յանկալի է ապաքէն զքէն խօսիլ, զքէն լսել, զքէն դրել, յանդիման առնել զքեզ, զքոյ երանութիւնդ յարաժամը ընթեռնուլ, և զընթերցեալն ստէպ ի սրտի որոճել։ որպէս զի կարող եղէց գոնեայ ի մահկանացու և բազմասահ կենացս աղէտից, վտանգաց և քրտանց, ի քաղցր հովանիս կենսատու օդոցդ անցանել, և անցանելով՝ ի ծոց քո զտառապեալ զլուխս իմ ննջեցուցանել, կամ սակաւիկ մի խոնարհեցուցանել։

Գ. Վասն այսորիկ ի զուարձալի արօտոս գրոց սրբոց մատչիմ, և զրոյս գալարի վճռոց մշակեալ կորզեմընթեռնըլով, ճաշակեմա՝ վերծանութեամբ, յաճախելով որոճամ, այլ և մերթ հաւաքելով զետեղեմ՝ բարձրագոյն աթոռ յիշողութեան։ որպէս զի սցապէս զքոյ քաղցրութիւնդ ճաշակելով, զթշուառութեան կենացս զգառնութիւն նուազ զգացից։

Դ. Ո՛վ դու ամեներջանիկ կեանք, ո՛լ երանելի թագաւորութիւն, անմահ, անվաճան։ որոյ յաւիտենականութեամն ոչ յաջորդեն ժամանակք. ուր միշտ տիւ աներեկ ոչ դիտէ զժամանակ, ուր զօրականն յաղթող դասակցեալ սրբասաց հրեշտակացն պարուց՝ երգէ Աստուծոյ անլուելի զերգս յերգոցն Խիսկլի, յաւիտենական ազնուանիթ թագիւ պասկազարդեալ զլուխմ։ Խին թէ ընկալեալ իմ զներումն մեղաց, ի բաց ընկեցեալ զծրար մարմնոյս՝ ի քո ուրախութիւնդ ընդմուանէի, առ ի առնուլ զծմարիտն հանգիտս, և մտանէի ընդ ամենապայծառ և շբնաղագեղ պարիսպս քաղաքի քո, առ ընդունելոյ ի ձեռաց Տեառն զպսակն կենաց. զի առընթեր փառաց ստեղծողին լինէի՝ ընդ հոգւոցն երանելեաց, զի ի նոցայն ընդմտանէի ամենասուրբ պարաւորութիւն։ զի գէմ յանդիման յերեսս Քրիստոսի պշուցեալ հայէի. զի զգերագոյն

զայն և զանպատմելին և զանպարագրելի լոյս տեսանէի հանապազ. և այսպէս աններկիւղ ի մահուանէ գոլով՝ ընդ մշտակայ պարգեւս անապականութեան ուրախ լինէի անվախճան։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս երջանեկորեան հոգւոյ յաստեացս եկեղոյ։

Ա. Երջանիկ հոգի՝ որ լուծեալ յերկրաւորէն, ապատ ի մարմնոյ, ապահով և անդորրացեալ՝ յերկինս դիմէ, ոչ երկընչի թշնամոյ և ոչ ի մահուանէ. քանզի ունի միշտ ներկայ և տեսանէ անպակաս զջէրն ամենազեղցիկ՝ որում ծառայեացն; զօր սիրեաց, և առ որ զուարթագինս և չեղապէս ժամանեաց։ Զերանութեանն այնորիկ զայն քանոյ փառու՝ ոչ աւուրք նուազեցուցանեն, և ոչ տարադէպ ինչ ի բաց բառնալ զօրէ։ Տեսին զնա գաստերք Սիոնմլի և երանեցին նմա, թագուհիք և հարձք զովեցին զնա, ասելով. Ո՞վէ սա որ ելանէ յանապատէ, բերկրութեամբ առցեալ՝ գայ յենու ի սիրելին իւր Ո՞վէ սա, որ երեւեալս է իրբեւ զառաւօտ, գեղեցիկ իրբեւ զլուսին, ընտիր իրբեւ զարեգակն, ահեղ իրբեւ զգունդս բանակաց։ Քանի՛ զուարթութեամբ երանէ երագէ ընթանայ, յորժամ լոէ ախորժ ունկամբ զձայն սիրելուցն իւրոյ՝ որ առէ. Արի՛, եկ մերձաւոր իմ. գեղեցիկ իմ ահա ձմեռն էանց, անձեռեք գնացեալ մեկնեցան, ժաղիկք երեւեցան յերկրի մերում, ժամանակ յատանելոյ եհաս, ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում. թզենի ետ զբողբոջ իւր, որթք մեր ծաղկեալք ետուն զհոտ իւրեանց։

Բ. Արի՛, եկ մերձաւոր իմ. գեղեցիկ իմ, աղաւնի իմ. եկ ի ծակս վիմաց, ի ծերակս քարանձաւաց. ցոյց ինձ զրէմն քո. հնչեացէ ձայն քո ի լսելիս իմ. քանզի ձայն քո քաղցրէ, և դէմք քո գեղեցիկ։ Ե՛կ ընտրեալիմ, գեղեցիկ իմ, ա-

ղաւնի իմ, անարատ իմ, հարսն իմ. Եկ, եղից զքեզի գաւ հոյս իմ, զի ցանկացայ գեղոյ քո. Եկ, զի ցնծացես առաջի իմ ընդ հրեշտակաց, ընդ որոց խոստացեալ եղեւ քեզ յինչն դասակցութիւն: Եկ, յետ բազում վունգաց և վաստակոց. մուտ յարախութիւն Տեառն քո, զոր ոչ բարձ ցէ ի քէն:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Աղօրք առ Առշրու՝ զի օգնեսցեն մեզ ի վտանգս:

Ա. Երջանի՛կ Սուրբք Աստուծոյ ամենեքին, որք անցէք արդէն ընդ ծովս այս մահկանացութեան, և արժանաւորեցաք հասանել ի նաւահանգիստ մշտնչենաւոր հանզըստեանն, աներկեւանութեան և խաղաղութեան. յապահովի էք անդորրացեալք, յարազուարձ և բերկրեալք: Աղաչեմ զձեզ վասն սիրոյ ձերոյ՝ որ աներկեւանդ էք վասն ձեր, ինամսնկալ լերուք վասն մեր. ապահովացեալ էք ընդ անեղծանելի փառս ձեր, լերուք հոգածու վասն մերոցս բազմապատիկ թշուառութեանց: Նովաւ զձեզ աղաչեմ՝ որ զձեզ ընտրեաց, որ զձեզ այդպիսիս արար. որոյ գեղեցկութեամբն յագենայք, որոյ անմահութեամբն արդէն անմահացեալ էք, ընդ որոյ երանական տեսութիւնն միշտ խնդայք. յամենայն ժամ յիշեցէք զմեզ. օժանդակէցէք մեզ տառապելցոս, որք ի ծովուս յայսմկենաց՝ տակասին տարսւերեալ լինիմք շրջափակ ալեօքն:

Բ. Դուք չնաշմարհիկ գրունք, որք ամբարձայք ի բարձութիւնն մեծ, օգնեսիք մեզ ստորանկելոցս ի խորին յատակս: Ջեռն տուք և յոտն կանգնեսիք զանկեալքս, զի առողջացեալ ի տկարութենէ՝ լիցուք զօրաւորք ի պատերազմի. միջնորդեալիք և մաղթեսմիք հանապատ և անդադար վասն մեր ողորմելեաց և չարաշար զանցառու մեղաւուրացս, զի մաղթանօք ձերովք պնդեալ յօդեսցուք ընդ ձեր

սուրբ միաբանութիւնդ. քանզի այլազգ ոչ կարեմք փրկիլ: զի յոյժ տկարք եմք անզօր մարդուկք, կենդանիք՝ որովայնի և մարմնոյ ստրուկք, յորս դուն ուրեք երեւին հետք ինչ աւագինութեանց: Եւ սակայն ի խոստովանութեան Քրիստոսի հաստեալք՝ վարիմք փայտիւ խաչին, նաւարկեալք ընդ ծովս այս մեծ և ընդարձակ, ուր են սոլունք՝ որոց ոչ գոյ թիւ, ուր են կենդանիք փոքունք և մեծամեծք, ուր է վիշապն ժանտաժուտ միշտ պատրաստ առ ի կլանել. ուր են տեղիք բազմավուանդք, յորձանք և նհանդք և այլք անթիւք, յորս նաւակոծին անզդոյչն և թերահաւատք:

Գ. Աղաչեցէք զՃէր, աղօթեցէք ովլարեգութք. մաղթեցէք ամենայն գունզք Արրոց և համօրէն ժողովք երանելեաց, որպէս զի ձեր մաղթանօք և արդեամք նպաստաւորեալք, զերծեալ նաւաւան և բովանդակ վաճառօք՝ արժամի լիցուք ժամանել ի նաւահանգիստ փրկութեան և հանգստեան, անեղբական խաղաղութեան և անվախճան աներկեւանութեան:

ԳԼՈՒԽ ԻԵ.

Փափագ սրտի առ Երուսաղէմ բաղաք վերին:

Ա. Մայր Երուսաղէմ, քաղաքդ սուրբ Աստուծոյ, ամենասիրելի հարսն Քրիստոսի. սիրէ զքեզ սիրտ իմ, գեղեցկութեան քում ցանկան ուժգին միտք իմ: Ո՛վ, քանի՛ վայելշագելք քանի՛ փառաղարդ, որչափ ազնւագոյն ես. ամենեւին գեղեցիկ ես, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ. Ուրախ լեր և ցնծա գեղեցիկ դուստր իշխանի, զի ցանկացայ թագաւոր գեղոյ քո, և սիրեաց զվայելցութիւն քո, գեղեցիկ տեսլեամք քան զամենայն որդւոց մարդկան:

Ա. Որպիսի՞ իցէ սիրելին քո ի սիրելեաց, ով գեղեցիկդ ընաւին: Արելին իմ սպիտակ է և կարմիր, ընտրեալ ի բիւրուց. որպէս խնձոր ի փայտս անտառաց, այսպէս սի-

բելին իմ ի մէջ ուստերաց . ընդ հովանեաւ նորա՝ որում ցանկացայ՝ ահա զուարձացեալ նստիմ, և պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմում: Այրելին իմ ձգեաց զծեռն իւր ընդ պատուհանն, և որովայն իմ խռովեցաւ ընդ նա:

Բ. Յանկողնի իմում ի զիշերի ինդրեցի զոր սիրեաց անձն իմ, ինդրեցի և գտի. կալայ զնա և ոչ թողից, մինչեւ տարցէ ի տուն իւր և ի սենեակ յղութեանն՝ փառաւորեալ ծնօղն իմ. քանզի անդ տացես ինձ առատապէս և լիապէս զստինս քո, և յագեցուացես զիս որանշելահրաշ յագեցմամբ, մինչեւ ոչ զգալ ինձ ոչ զքաղց և ոչ զծարաւ ի յափտեան: Երջանիկ հոգի իմ և միշտ երջանիկ մինչեւ յափտեանս, եթէ արժանի եղեց հայել ի փառս քո, յերանութիւնսքո, ի գեղեցկութիւն քո, ի դրունս քո, ի պարիսպս և ի հրապարակս, ի բազում օթեվանս քո, յազնուական քաղաքացիս քո, յամենազօր թագաւորն քո ի վայելչութեան իւրում: Փանզի պարփակը քո յականց պատուականաց, դրունք քո յընտիր ընտիր մարգարտաց, հրապարակքո յոսկւոյ սրբոյ, յորս ուրախականն ալէլուիս երգի անդադար. օթեվանն քո բազումք հիմնեալք քառակուսի վիմօք, կազմեալք շափիւղայօք, ուկեղինօք ազուցեալ աղիւսակօք. յորս ոչ ոք մտանէ՝ եթէ ոչ անարատն, և շարակամ ոք ոչ բնակիէ:

Գ. Զքնաղագեղե ես յօրինեալ, և քաղցր ի փափկութիւնս քո, մայր Երուսաղէմ. չիք ինչ քեզ այնպիսի՝ որպիսի աստ կրեմք, որպիսիս ի թշուառ կեանս յայս տեսանեմք: Չիք ի քեզ խաւար, ոչ գիշեր, ոչ որ զիարդ և իցէ այլայլութիւն ժամանակաց: Ոչ ճրագ տայ ի քեզ լրցո, ոչ պայծառութիւն լուսնի, ոչ նշոյք աստեղաց, այլ Աստուածն յԱստուծոյ, լրցոն ի լուսոյ, արեգաւն արդարութեան՝ միշտ լուսաւորէ զքեզ, գառնն սպիտակափառ և անարատ, լուսաւոր և ամենագեղեցիկ է լրցո քո. արեգաւն քո և պայծառութիւն քո, և ամենայն բարին քո՝ գեղատեսիլ թագաւորին այնորիկ անպակաս տեսութիւն. ինքն թագաւորն թագաւորաց ի մէջ քո, և մանկունք նորա շուրջ զնովաւ:

Դ. Անդ սրբասաց հրեշտակացն պարք, անդ ընկերութիւն

երկնային քաղաքացեաց, անդ քաղցր ընկերակցութիւն ամենեցուն՝ ի տիբալի նժդեհութենէ աստի առ քո ուրախութիւնդ ժամանելոց: Անդ նախատեսաց մարգարէիցն դասք, անդ երկոտասան առաքելոցն գունդ, անդ անթիւ մարտիրոսացն յաղթօղ բանակ. անդ սրբոց խոստովանուցացին ժողով բանակ, անդ ճշմարիտ և կատարեալ կրօնաւորք. անդ սուրբ կանույք՝ որք յանկութեանց աշխարհի և տկարութեան ընտութեանն յաղթօղք գտան. անդ մանկունք և ազկունք՝ որք զամս իւրեանց սուրբ վարուք անցուցին, անդ ոչխարք և գաոփնք՝ որք զերծեալ նողոպեցան և հաղբից աստի հեշտութեանց. ինդան ամենեքին յիւրաքանչիւր յօթեվանս: Անհանգէտ է փառք իւրաքանչիւրոց, այլ հասարակ է ուրախութիւն ամենեցուն:

Ե. Անդ իի և կատարեալ թագաւորէ սէր, զի Աստուածէ անդ ամենայն յամենայնի, զոր միշտ և հանապազ տեսանեն, և միշտ տեսանելով վառին ի սէր նորին, սիրեն և զովեն, զովեն և սիրեն: Ամենայն գործ նոցա անեզրական գովութիւն է Աստուծոյ, անդադար և անաշխատ: Երանի՛ ինձ և իսկապէս յափտեանս երանի, եթէ յետ լուծման մարմնոյս այսորիկ արժանացացց լսել զերգ երկնային մեղեղեացն, որքն ուստի ի գովեստ թագաւորին յափտենից, ի նոյունց իսկ քաղաքացեաց վերին հայրենեաց և ի դասուց երանեալ հոգւոց: Երջանիկ ես ինքն և երանելի՝ եթէ արժանի եղեց երգել զայնս, և մերձ կալ թագաւորին իմոյ, Աստուծոյ իմոյ, և առաջնորդի իմոյ, և տեսանել զնա ի փառս իւր. որպէս ինքն հանեցա խստանալ, ասելով. « Հայր, կամիմ զի զորս ետուրն ինձ՝ ընդ իս իցեն, զի տեսանիցեն զփառս իմ, զոր ունէի առքեզ յառաջ քան զինեն աշխարհի »: (Յովէ. Գլ. Ժէ): Եւ այլուր. Եթէ ոք զիս պաշտեսցէ՝ զինի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի »: (Գլ. ԺԲ): Եւ դարձեալ. « Որ սիրէն զիս, սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երեւեցուցից նմա զիս ։

Դիմութիւն. Երդ յաղացս բառաց Արքայութիւն, Շինուարք Կայութակուր Պարքաց ինչպինաց Հայութակուր Պարք անդ յանձնաւուած Արքայութակուր Պարքաց:

ԳԼՈՒԽ ԻԶ.

Գովեստ ամենդիատ, զոր մասուցանե հոգի
նկատելով զբաղաքն վերին:

Ա. Օրհնեա անձն իմ զՏէր, և ի ներքս յիս՝ զանուն
սուրբ նորա: Օրհնեա անձն իմ զՏէր, և մի մոռանար զա-
մենայն տուրս նորա: Օրհնեցէք զՏէր ամենայն գործք
նորա, ընդ ամենայն տեղիս տէրութեան նորա: Օրհնեա
անձն իմ զՏէր: Օրհնեսցուք զԱստուած՝ զոր օրհնեն հրեշ-
տակք, երկիր պաշտանեն տէրութիւնք, գողան իշխանու-
թիւնք, որում քերովքէք և սերովքէք անկանի ձայնիւ աղա-
ղակեն՝ Առլրբ, սուրբ, սուրբ: Կայորդեսցուք զձայնս մեր
ընդ ձայնից հրեշտակացն սրբոց, և զհասարակաց զՏէրն
գովեսցուք՝ ըստ մերումն եղանակի:

Բ. Քանզի նոքա գովեն զՏէր մաքրապէս և անդադար,
որք միշտ են յաստուածային տեսութեան, ոչ առակաւ
և օրինակաւ, այլ երես առ երես: Բայց ովլքաւական իցէ
ասել կամ զմտաւ ածել, եթէ որպիսի իցէ առաջի Տեառն
ամենակալի բազմութիւնն այն հոգւոց երանելեաց և զօ-
րացն երկնաւորաց: որպիսի ի նոսա անվախճան զուարչ
ճութիւն տեսութեանն Աստուծոյ: զի՞նչ ուրախութիւն ան-
սպառ: զի՞նչ բորբաքումն սիրոյ՝ որ ոչ կիզու, այլ զուարճա-
ցուցանէ: Զի՞նչ իցէ ի նոսա ցանկութիւն տեսութեան Աս-
տուծոյ՝ հանդերձ յագեցմամբ, և յազումն հանդերձ տեն-
շանօք: յորս՝ փափաք ոչ ծնանի տառապանո, և ոչ յագե-
ցումն առբերէ զտաղտկութիւն: Զիարդ յարելով ի ծայ-
րագոյնն երանութիւն՝ լինին երանեալք. զիարդ միանալով
ընդ ճշմարիտ լուսոյն՝ եղեն լցոս: զիարդ տեսանելով հա-
նապազ զանփոփոխելի Երրորդութիւնն՝ փոխին յանփո-
փոխութիւն:

Գ. Այլ երբ զհրեշտակացն արժանապատուութեանն
զգերակացութիւն ըմբռնել մարթասցուք, երբ զմերոյ իսկ
հոգւոյս բնութիւն քննել անկարանամբ: Որպիսի ինչ իցէ

սա՝ որ զմարմինն կենդանացուցանել զօրէ, և զինքն ՚ի
սուրբ խորհրդածութիւն, որպէս կամի՝ ամփոփ ունել ոչ
կարէ: Զիարդ իցէ սա այդշափ հզօր, այդշափ տկար, այդ-
քան փոքրիկ այդքան մեծ, որ հետազօտէ զգազտնիս Աս-
տուծոյ և նկատէ զերկնայինն, այլ և հնարի նրբա-
հայեաց հանճարով զմտութիւնս զանազան արուեստից
պատշաճելոց մարդկային պիտոյից: Որպիսի իցէ սա՝ որ ճա-
նաչէ այդշափ յոլով ինչ զայլոց իրաց, և զինքն՝ որպիսի
արդեօք իցէ՝ անդիտանայ: Եւ թէպէտ ինչ ինչ կեղակարծ-
զծագմանէ սորա ասի յունաց, սակայն գտանեմք զնա-
մուարոր ինչ հոգի գոլ, ստեղծողին կարողութեամբ ի գոյ
եկեալ, անմահ կենդանի ըստ իւրամ կերպի, զմահկանա-
ցու մարմինն զոր կրէ: կենդանացուցանելով, փոփոխու-
թեան ներքոյ անկեալ, մոռացութեան վիճակեալ, զոր եր-
կիւզն յանախ ընկնէ, ուրախութիւնն վերամբառնայ: Ո՛վ
ոքանչելի և ամենայն ապկութեան արժանի. զԱստուծոյ
ստեղծողէ ամենայնի՝ որ է անըմբռնելի և անճառելի, ըզ-
բարձրագոյնս և զյոյժ զարմանալիս աներկմիտ ընթեռ-
նումք, խօսիմք, գրեմք, այլ զհրեշտակաց և զհոգւոց զոր ինչ
ասեմքս՝ յայտնագոյն ինչ հաստատել ոչ կարեմք: Բայց
սակայն անցյցէ յայսցանէ հոգին, և անցյցէ ընդ ամենայն որ
ստեղծաւ, ընթասցի և բարձրացի և թռիցէ և ընդմտա-
նիցէ, և ի նա՝ որ ստեղծն զնա՝ որշափ զօրէ՝ զայս
հաւատոյն ուղղեացէ: Ապա արարից աստիճանս ելից ի սըր-
տի իմում, և ընդ նոյնս վերացաց առ հոգի իմ, և ի
ձեռն մտաց իմոց բարձրացաց առ Տէրն իմ՝ որ կայ ի
վերոյ քան զզումի իմ:

Դ. Որ ինչ երեկելապէս տեսանի, որ ինչ հոգեպէս երեւա-
կայի կզօր ձեռամբ ի տեսութենէ մոտց և սրտի, ի բաց
վարեցի, միայն յստակ և պարզագոյն միտք վերճեմեալ
թուոցմամբ ժամանեացէ առ նոյն ինքն ստեղծողն հրեշ-
տակաց և հոգւոց և ամենայն իրաց: Միաքն այն երանեալ՝
որ ի ստորինս զեզերի և բարձրագունիցն փափաքէ, որ
դնէ զաթոռ բնակութեան իւրաց յառապարս, ի ծայրից
քարածեալից յառեալ հայի յարեգակն արդարութեան՝ ար-
ծուային տեսութեամբ: Փանզի չիք ինչ այնայէս զեզեցիկ

այլ և զուարձալի, քան հայեցմամբ մտաց և սրտի անյագ տենչանօք զնյն ինքն զԱստուած նկատել, և սքանչելաւ հրաշեղանակաւ անտեսարար տեսանել զանտեսանելին. և այսպէս զայլ՝ և ոչ զայս ճաշակել քաղցրութիւն, և նկատել զայլ՝ և ոչ զայս լցու քանզի այս լցու որ տեղեաւ պարագրի, ժամանակաւ սպառի, դիշերոյ ընդ մէջ կրծիմն մտեալ այլայի, և զոր ունիմք հաւասարապէս ընդ որդանց և չորքոտանեաց, համեմատելով ընդ այնր ծայրագոյն լուսոյ, ոչ լոյս՝ այլ զիշեր է անուանելի:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Զինչ իցէ լատ իրաց ինչ նշնարել զԱստուած և ունել,
և որպէս ինանաւ պիտի զԱստուծոյ:

Ա. Թէպէտ գերագոյնն այն անփոփոխ էութիւն, լցու ճշմարիտ, լոյս անսպառ, լոյս հրեշտակաց, ոչ յումեքէ մարթի նշմարիլ յայս կեանս, որ միայն պահեալ կայ ի վարձ Արրօց ի փառան երկնից, սակայն հաւատալն այնմ և իմանալ և զգալ և մեծափափաք տենչալ՝ է լրտ իրաց ինչ նկատել զնա, այլ և ունել: Հնչեսցէ ապա ձայնն գեր ի վերոյ քան գհրեշտակայն. և մարդն մուաղրութեամբ յառեալ յառեսցի յԱստուած. և բանիւք՝ որշափ կարէ, գովութիւնս ասասցէ նմա. զի և արժան և իրաւ է՝ ստեղծուածոյ գովել զստեղծիչ իւր. քանզի նա առ ի գովել զինքն ստեղծ զմեզ, որ գովութեանց մերոց ոչն կարօտի:

Բ. Քանզի է զօրութիւն անհասանելի, ոչ ումեք կարօտ, ինքն ինքեամբ բաւական: Մէծ է տէր Աստուած մեր՝ և մեծ զօրութիւն նորա, և իմաստութեան նորա ոչ գոյ բա: Մէծ է տէր Աստուած մեր և գովելի յոյժ: Զուա ապա սիրեսցեն միտք, գովեսցէ լեզու, զրեսցէ ձեռն. այլ և յայսսփիկ սուրբ կրթութիւնս հոգի հաւատարիմհրահանգեսցէ զանձն իւր: Ոյսմ երկնային տեսականութեան ամենաճաշակ հա-

մադամիւք՝ փափագատենչն և երկնայնոց խորհրդածուն մարդ՝ հանապաղ կազգուրեսցի, որպէս զի երկնայնով ջամ միտք պարարտացեալ աղաղակեսցէ մեծաւ աղաղակաւ, աղաղակեսցէ յամենայն ուժգնութենէ որտին, աղաղակեսցէ յնծութեամբ, և ամենաջերմեռանդն մտաց տենչ մամբ ասասցէ.

ԳԼՈՒԽ ԻԹ.

Աղօրք արտայայտիչ բազմապատիկ
յառիկորեանց Աստուծոյ:

Ա. Ո՛վ ծայրագոյն, ամենաբարի, ամենակարօղ, ամենաողորմ, ամենայնիւ արդար, ամենագաղտնի, ամենայայտնի, ամենագեղեցիկ և ամենազօր, հաստատուն և անբրանելի, անտեսանելի և ամենատես, անփոփոխ և փոփոխիչ ամենեցուն, անմահ, անուրեք, անեզր, անպարագիր, անվերջ, անհամեմատ, անճառելի, անքննելի, անշարժ՝ շարժիչ ամենեցուն, անհետազօտելի, անօրինակ, ահաւոր այլ և սարսափելի, պատուելի այլ և պատկառելի, յարգելի այլ և գերյարգելի, ոչ երբէք նոր, և ոչ բնաւ հին. նորոգող ամենեցուն, և հնացուցիչ հպարտից որ ոչ իմանան:

Բ. Միշտ ներգործող, միշտ հանգիստ, հաւաքօղ և անկարօտ, կրօղ ամենեցուն և անկիր ծանրութիւն, լցուցիշ ամենեցուն և անպարփակ, ամենեցուն ստեղծիչ, պահապանիչ, սնուցիչ, կատարիչ, խնդրող՝ որում ոչինչ պակասի, միրօղ և ոչ զայրացող, նախանձոտ և աներկեան: Զզլանաս և ոչ ցաւիս, սրտմոտիս և խաղաղիս. փոփոխս զգործո՞ այլ ոչ զիսորհուրդս. ընդունիս՝ զոր ոչ գտանես, և զոր ոչ երբէք թողեր. ոչ երբէք կարօտեալ և խնդաս ընդ շահն, ոչ երբէք ագահ՝ և տոկոսիս պահանջես. յաւէտ տուեալ լինի քեզ՝ որպէս զի պարտառորեսցիս:

Գ. Եւ ո՞ք ունիցի ինչ՝ որ չիցէ քո . հասուցանես զպարտս՝ ոչ ումեք պարտական գոլով . շնորհես զպարտս՝ ոյնչ կորուսանելով: Որ միայն կենդանացուցանես զամենեան՝ որ ստեղծեր զամենեսին, որ ամէնուրեք գոլով՝ և ամէնուրեք բովանդակես . որ կարես զգալի իինել՝ այլ ոչ և տեսանելի: որ ոչ ուստեք պակասիս, և սակայն ի խորհրդոց ամբարշտաց կարի հեռի գտանիս, որ ոչ երբէք պակասիս և անտի ուստի կաս հեռի, զի որ ոչ ես շնորհօք՝ անդ ես վրէժխնդրութեամք . որ ամենեցուն ձեռն կարկառես, այլ ոչ միօրինակ ամենեցուն. քանզի հպիս յոմանս՝ զի իցեն, այլ ոչ զի կեցցեն, և յոմանս՝ զի իցեն և կեցցեն, այլ ոչ զի իմասցին և ընտրեսցեն, իսկ յոմանս՝ զի իցեն կեցցեն և իմասցին, այլ ոչ ընտրեսցեն: Բայց և յայլս հպիս՝ զի իցեն և կեցցեն, և իմասցին և ընտրեսցեն: Եւ թէպէտ քեզ ինքեան ոչ երբեք աննման ես, սակայն աննմանօրէն հպիս յաննմանսն, որ ամէնուրեք առաջի կաս՝ և գտանիլ հազիւ կարելի ես:

Դ. Զհետ պնդիմք մշտակայիդ և ըմբռնել ոչ զօրեմք: Որ ունիս զամենայն, լնուս զամենայն, պարունակես զամենայն, գերազանցես քան զամենայն, կայկայես զամենայն. և ոչ եթէ մասամբ իւիք պինդ ունիս՝ և մասամբ նեղքեւիս, ոչ մասամբ իւիք լնում՝ և մասամբ իւիք պարունակիս. այլ շուրջ պարառեալ լնուս, և լնուվ շուրջ պարառուս. ժուժկալեալ գերազանցես, և գերազանցելով ժուժկալես: Որ ուսուցանես զսիրտս հաւատացելոց առանց հնչման բառից, որ մերձենաս ի ծագաց մինչև ի ծագս զօրութեամք՝ և զամենայն դնես ի կարգի քաղցրութեամք: Որ ոչ տեղեօք ընդարձակիս, և ոչ ժամանակօք փոփոխիս, ոչ ունիս մռատ և ել՝ այլ բնակես ի լցոս անմատոյց, զոր ոչ ի մարդկանէ ետես և ոչ տեսանել կարօղ է: Ի քեզ ինքն հանգուցեալ կաս և ամենայն ուրեք շուրջ գառ բովանդակ, ամենայն ուրեք ամենայնիւ բովանդակ. քանզի ոչ էնար քեզ մասնատիլ և բաժանիլ. զի բովանդակ ճշմարտապէս մի ես՝ և ոչ ի մասունս հատանիս, զի զբովանդակն ունիս, զբովանդակ լնուս, զբովանդակլուսաւորես և ստացեալ ունիս:

Ե. Փանզի գխորհրդեանս այսորիկ զանշափ խորութիւն՝ ոչ միոր մարդկային զօրեն տանել, և ոչ հսեւորական լեզուք պատմել, ոչ ընդարձակ ճառք, այլ և ոչ զրատանց մատեանք կարեն բացատրել: Եթէ աշխարհս համօրէն գրովք լցցի՝ զքո զանձառելի իմաստութիւնդ բացատրել ոչ բաւեսցէ. քանզի իսկապէս անձառելի ես, և ոչ իւիք օրինակաւ մարթիս զգրի հարկանիլ, և ոչ եզրափակիլ, զի աղբիւր ես աստուածային լուսոյ և արեգակն յաւիտենական պայծառութեան: Մեծ ես առանց որքանութեան՝ և վասն այնորիկ անշափ . բարի ես առանց որպիսութեան՝ և վասն այնորիկ ճշմարտապէս և գերազանցապէս բարի. և ոչ ոք բարի՝ բայց միայն դու, որոյ կամբն գործ է, որոյ կամին կարել է:

Զ. Որ զամենայն յօշնչէ արարեր՝ զորս միայն կամօրդ ստեղծեր: Որ զամենայն ստեղծուածս քո՝ յամենայն անկարօտգ ստացեալ ունիս անաշխատ, կառավարես, և անձանձիր թագաւորես. և չիք ինչ որ այլայլեսցէ զկարգ հրամանաց քոց, ոչ ի բարձունս և ոչ ի ստորինս: Որ յամենայն տեղիս ես առանց տեղւոյ, որ զամենայն պարունակես անպարունակ գոլով, և ամենայն ուրեք ներկայ ես առանց զրից և շարժման: Որ ոչ ես հեղինակ շարին՝ զոր և առնել իսկ կարես ոչ. որում չիք ինչ անհնար, որ ոչ երբէք ընդ առնել ինչ զղջացար. որ ոչ իւիք շարժմամբ ոգւոյդ յուզեալ խոռովիս, և ոչ բովանդակ երկրի վտանգ՝ վնաս ինչ է քեզ. ոչինչ հարուած կամ եղեռն կրես և կամ հրամայես:

Է. Ոչ երբէք ստես՝ որ յաւիտենական ճշմարտութիւնդ ես: Որոյ միայնոյ բարութեամբ եղեալ եմք, և արդարութեամբն պատուհասիմք, և գթութեամբն ազատիմք. զի ոչ ինչ երկնային կամ հրեղէն կամ երկրաւոր, և ոչ ինչ զոր մարմնական զգայութիւնս փոխանակ քո ըմբռնէ, պատելի է. որ ճշմարտապէս ես՝ որ եսդ, և ոչ փոփոխիս: Որում քաջ պատշաճի այն՝ զոր Յոհնք ասեն ան, Լատինք՝ Ենք, ին. որ միշտ նոյն ես՝ և ամք քո ոչ պակասին: Զայս և զայլ բազում ինչ ուսուցյ ինձ մայր սուրբ եկեղեցի, որում եղէ անդամ քոյին շնորհօք:

Նա ուսաց ինձ արդարեւ զքեղ միայն և միակ և ճշմարիտ Աստուած, ոչ մարմնեղէն և կրական, և ոչ՝ ի գոյացութենէ քումմէ կամ ի բնութենէ եղանակաւ ինչ բռնարարելի կամ ի փոփոխելի լինել, կամ բաղադրեալ և կամ եղական. և վասն այսորիկ ստուգապէս մարմնաւոր աչօք ոչ ոք զքեղ կարաց տեսանել. այլ և ոչ ի մահկանացուաց ոք զէութիւն քո խակական կարասցէ երբէք տեսանել զի և աստի յայտնապէս տուեալ լինի մեզ ի միտ առնուլ, եթէ որով իւեք հրեշտակը զքեղ տեսանեն, նովիմբք և մեք յետ այսց կենաց տեսցուք զքեղ: Այլ և ոչ նորա ապաքէն կարեն տեսանել զքեղ որպիսի եսդ դու. ապա ոչ ումեք այլում՝ բայց զքեղ միայնոյ զիտելի է բովանդակն ամենակալ Երրորդութիւն:

ԳԼՈՒԽ Լ:

Յաղագս բազմաշորոշեան անձանց և միուրեան յԱսուած:

Ա. Բայց դու միութիւն ես աստուածութեան, անձանց բազմաւորութեամբ բազմապատիկ. թուելի գորով անթիւես. ուստի և չափերութեամբ անշափ, կշռելութեամբ անկիռ: Քանզի և ոչ զժայրագոյն բարութեանն որ դու ինքն ես՝ ճառեմբ զակիզբն, յորմէ ամենայն, որով ամենայն, յորում ամենայն, այլ մասնակցութեամբ նորին ասեմբ զամենայն բարի: Քանզի աստուածային քոյդ էութիւն՝ շունէր երբէք և ոչ ունի նիւթ. թէւ ունիցի կերպարան, այլ կերպարան անկերպ, կերպարանաց կերպ, կերպարան ամենազեղեցիկ. զոր մինչ տպաւորես իբր ինիք յիրս իւրաքանչիւր, առանց ինչ փոփոխութեան ի քեղ յաւելման կամ նուազման, առնես զնոսա անշուշտ զանազանեալս առ ի քէն: Քանզի որինչի բնութեան ստեղծեալ է՝ ստեղծուածքու է:

Բ. Ո՛վ մի Երրորդութիւն, և երբեալ միութիւն, Աս-

տուած, որոյ ամենակարողութիւն զամենայն ստացեալ ունի և ուղղէ, և լուռ զոր ստեղծն. և ոչ վասն այն զամենայն լուսու ասեմք, իբր զի ամփոփեալ պարունակիցեն զքեղ, այլ յաւէտ նորին ի քէն պարունակին. այլ և ոչ մասնատեալ լուսու զամենայն, և ոչ իսկ այնպէս համարելի է՝ որպէս թէ իւրաքանչիւր ստեղծուած ըստ իւրում մեծութեան քանակի լոնդոնիցի զքեղ, այս է՝ մեծագոյն՝ մեծ, փոքրագոյն՝ փոքր, որովհետեւ յաւէտ դու ինքն ես յամենեսին՝ և կամ ամենեքին ի քեղ: Որոյ ամենակարողութիւն ամփոփեալ ունի զընդհանուրս, և ոչ ելի աղաք կարասցէ գտանել որ՝ առ ի ճողոպրել զանձն ի քումմէ կարողութենէ. քանզի որ ոչ ունի զքեղ հաշտ, ոչ իսկ զերծցի ի բարկացելցոյ, որպէս զրեալ է. « Ոչ յարևելից և ոչ յարևմտից, և ոչ ի յանապատէ լերանց, զի Աստուած դատաւոր է ». և այլուր. « Յո՞ գնացից ի յոգւոյ քումմէ, և յերեսաց քոց ես յո՞ փախեայց »:

Գ. Անշափութիւն մեծութեան աստուածութեան քո այս է, զի ծանիցուք եթէ կամ յամենայնի՝ այլ ոչ պարածածկեալ, արտաքոյ ամենեցուն՝ այլ ոչ տարագիր. և վասն այսորիկ ներքին ես՝ զի պարագրեացես զամենայն, և վասն այնորիկ արտաքին՝ զի անպարագիր մեծութեամբ անշափութեան քո զամենեսեան բովանդակեացես: Ապա վասն այնը զի ի ներքս ես՝ երևեսցիս լինել ստեղծօղ. և վասն այնը զի արտաքս ես՝ ամենեցուն կառավարիչցուցցիս: Եւ զի մի ամենեքին որ ստեղծեալքն են՝ առանց քո իցեն, ի ներքս ես. բայց և արտաքոյ, զի ամենեքին պարփակեցին առ ի քէն. ոչ ստեղական մեծութեամբ՝ այլ ներկայութեամբ կարողութեանդ, որ ամէնուրեք՝ ներկայ ես, և ամենեքին յանդիման քեղ. թէպէտ և զայս սմանք իմանայցեն և ոմանք ոչ:

Դ. Անբաժանելի բնութեան քո միութիւն՝ բաժանելի անձինս ունել ոչ կարէ. զի որպէս Երրորդութիւն ի միութեան ես՝ և միութիւն յերրորդութեան, այսպէս բաժանումն անձանց չէ մարթ ունել քեղ: Ապաքէն երբեմն անուանին այնորիկ անձինք առանձինն, սակայն այդպէս կամեցար Աստուած Երրորդութիւն, զքեղ անբաժանելի ցու-

յանել յանձինս, որպէս զի շիցէ անուն յո և իցէ անձին՝
որ ոչ վերաբերցի առ այլ՝ ըստ կանոնի առընչութեան. որ-
պէս Հայր առ Որդի՝ և Որդի առ Հայր, այսպէս Հոգին
Սուրբ առ Հայր և Որդի ճշմարտապէս վերաբերի: Բայց ա-
նուանք որք զգոյացութիւն, կամ զանձն, զկարողութիւն
կամ զէութիւն քո նշանակեն, կամ որ յատկապէս ասի
Աստուած՝ ամենայն անձանց հաւասարապէս յարմարին.
որպէս Աստուած մեծ ամենակարօղ, յափտենական, և ա-
մենայնն որ ինչ բնաւորապէս ասի գքէն զԱստուածոյդ: Ա-
պա շիբ այլ անուն բնութեան՝ որ քեզ Աստուածոյ Հօր այն-
պէս յարմարիլ կարացէ, որ և ոչ Որդւոյ կամ Հոգւոյն
Արքոյ կարացէ յարմարիլ: Անուանեմք զքեզ Հայր՝ Աս-
տուած լինել բնաւորապէս, այսպէս և Որդին բնաւորա-
պէս Աստուած, բնաւորապէս և Հոգին Սուրբ Աստուած.
սակայն ոչ երեք Աստուած, այլ բնաւորապէս մի Աստուած,
Հայր, Որդի, Հոգին Սուրբ:

Ե. Վասն որոյ անբաժանելի ես Երրորդութիւն սուրբ
Աստուած, իմացութեամբ ծանուցեալ յանձինս, թէ և
բառիւք բաժանելիս սննիցիս անուանս. քանդի ի բնու-
թեան անուանս զյոգնականն թիւ ոչ երբէք ընդունիս: Եւ
այսուիկ յայտ է եթէ անձանց ի սուրբ Երրորդութեան չէ
մարթ բաժանիլ, որ է մի ճշմարիտ Աստուած. քանդի որոյ
և իցէ անձին անուն վերաբերի միշտ առ այլ անձն. եթէ
Հայր ասացից՝ զՈրդին ցուցանեմ. եթէ Որդի անուանեմ՝
զՀայրն նախածանուցանեմ. եթէ Հոգի Սուրբ յորջործեմ՝
հոգի ուրուք լինել հարկ է իմանալ այսինքն Հօր և Որդւոյ:
Եւ այս է ահա հաւատք ճշմարիտ յողվամիտ վարդապէտու-
թենէ յառաջ եկեալ. այս է ստուգիւ հաւատք կաթուղիկէ
և ուղղափառ, զոր ուսոյց ինձ Աստուած իւրով չնորհիւ ի
ծոց մօր եկեղեցւոյ:

ԳԼՈՒԽ ԼՈ.

Ողօրբ առ Սուրբ Երրորդուրիւնն:

Ա. Այլ առդ առ քեզ, Տէր, աղաղակէ հաւատք իմ՝ զոր
ետուր ինձ ի փրկութիւն իմ բարութեամբ քով. զի անձն
հաւատացեալի հաւատոց կեայ, յուսով զոր ի քեզ տեսա-
նելոցն է իրաք: Խիզէ իմ ողվամիտ՝ աղաղակէ առ քեզ
Աստուած իմ, և քաղցր սէր հաւատոց իմոց՝ զոր հաւածելով
զիսաւար անդիտութեան՝ վերածեր ի գիտութիւն ճշմար-
տութեան, և զոր ի յիմարական դառնութենէ աշխարհի
զերծուցեր, և չնորհելով սէր քո քաղցրութեանդ հեշտալի
և մեղրածորան ինձ արարեր, կարդայ առ քեզ երանեալ
Երրորդութիւն, ձայն յստակ և սեռն սէր հաւատոց իմոց,
զոր սնուցանելով ի խանձարրոց անտի միշտ լուսաւորեցեր
լուսով չնորհաց քոց, և զոր աճեցուցեալ հաստատեցեր յիս
վարդապէտութեամբ մօր եկեղեցւոյ: Զքեզ կարդամ երա-
նեալ և բարեբանեալ և փառաւորեալ մի Երրորդութիւն,
Հայր և Որդի և Հոգի Սուրբ. Աստուած, Տէր, միկթա-
րիչ, սէր, չնորհք, հաղորդակցութիւն:

Բ. Ծնեալ, վերածնուզ. լոյս ճշմարիտ ի լուսոյ
ճշմարտէ, լուսաւորասթիւն ճշմարիտ: Աղբեկը, գետ, վտակ:
Յորմէ ամենայն, որով ամենայն, յորում ամենայն: Ի միոյ
ամենայն, միով ամենայն, ի մին ամենայն: Յորմէ, որով,
յորում ամենայնն: Կեանք կենդանի, ի կենդանի կենաց
կեանք, կենդանեաց կենդանացուցիչ: Մին յինքենէ, մին
ի միոյ, մին յերկոցունց: Որ էն յինքենէ, որ էն յայլմէ, որ
էն յերկոցունց: Ճշմարիտ Հայր, ճշմարտութիւն Որդի,
ճշմարտութիւն Հոգի Սուրբ: Ուրեմն մի էութիւն Հայր,
Բան և Միկթարիչ. մի զօրութիւն, մի բարութիւն, մի
երանութիւն. յորմէ, որով և յորում՝ երանելիք են ամե-
նայն՝ որք միանդամ երանեալ իցեն:

ԳԼՈՒԽ. ԼՅ:

Զի Աստուած և ձեմարիու և ժայրագոյն կեանք:

Ա. Աստուած, ճշմարիտ և գերագոյն կեանք, յորմէ, որով, և յորում կեան ամենեքին՝ որք կեան ճշմարիտ և երանելի կենօք: Աստուած՝ բարի և գեղեցիկ, յորմէ, որով և յորում՝ բարի են և գեղեցիկ ամենայն՝ որք միանդամ բարի են և գեղեցիկ: Աստուած, որոյ հաւատք յորդորէ զմեզ, յօյս կազնէ, սէրն միաւորէ: Աստուած, որ զքեզ խնդրել հրամայես, և տաս գտանել զքեզ, և բաղխողին բանաս: Աստուած, յորմէ յետս դարձումն՝ անկանել է. առ քեզ դարձ՝ կանդնել է. յորում կալ մնայն հաստատիլ է: Աստուած, զոր ոչ թողու՝ եթէ ոչ խարեալն. ոչ ոք խնդրէ՝ եթէ ոչ յորում է ազդումն. ոչ ոք գտանէ՝ եթէ ոչ մաքրեալն: Աստուած, զոր ճանաշելն է կեալ, յորում ծառայել՝ թագաւորել է, զոր օրհնելն՝ փրկութիւն է և ուրախութիւն հոգւոյ: Զքեզ զըթամբք, սրտիւք և ամենայն զորութեամբ՝ որով մարթիմու, զովեմ, բարեբանեմ, այլ և երկիր պատանեմ քումդ զթութեան և բարութեան. վասն ընդ հանուր ամենայն բարեբարութեանց քոց՝ շնորհս մատուցանեմ և երգեմ զերգս փառաց քոց, Սուրբ, սուրբ, սուրբ:

Բ. Առ քեզ աղաղակեմ մվերորդութիւն ամէներանեալ զի եկեսցես առիս, և արացես զիս տաճար արժանաւոր՝ փառաց քոց: Աղաշեմ զՀայրդ ի ձեռն Որդւոյ. աղաշեմ զՈրդիդ ի ձեռն Հօր. աղաշեմ զՍուրբ Հօգիդ ի ձեռն Հօր և Որդւոյ, զի ամենայն ախտք տարագիր եղիցին յինչն, և ամենայն սուրբ առաջինութիւնք տնկեսցին յիս: Աստուած անշափ, յորմէ ամենայն, որով ամենայն, յորում ամենայն եղեն, երկելիք և աներևոյթք. որ զարարածս քո արտաքուստ պարունակես, և ի ներքուստ լնուս, ի վերուստ թագաւորես, և ի ստորուստ՝ բառնաս, պահեա՛ զիս զգործ ձեռւաց քոց՝ զառ ի քեզ յուսացեալս, և ի քո միայն զթութիւնդ ապաւինեալս: Պահպանեա զիս աղա-

շեմ աստ և ամենայն ուրեք, այժմ և միշտ, ներքոյ և արտաքոյ, յառաջոյ և յետոյ, ի վերուստ և ի ստորեւ, և շուրջուրջանակի, մինչև չգտանել յիս բնաւ տեղի որոգայթից թշնամեաց:

Գ. Դու ես Աստուած ամենակալ, պահպան և պաշտամն ամենեցուն ի քեզ յուսացելոց. առանց որոյ ոչ ոք է անքոյթ, ոչ ոք ապատ ի վասնգաց: Դու ես Աստուած, և ոչ գոյ այլբաց ի քէն, ոչ յերկինս ի վեր, և ոչ յերկիր ի խոնարհ, որ ասնես զմեծամեծս և զսքանչելիս և զանգնելիս՝ որոց ոչ գոյ թիւ: Քեզ վայելէ օրհնութիւն, քեզ վայելէ պատիւ, քեզ վայելէ երգաբանութիւն: Քեզ ամենայն հրեշտակը, քեզ երկինք և ամենայն իշխանութիւնք երգս և օրհնութիւնս մատուցանեն, անդադար եղանակեն, որպէս ստեղծողի՝ տրարածք, տեառն՝ ծառայք, թագաւորի՝ զինաւորք: Զքեզ սուրբ և զանբաժանելի երրորդութիւնդ ամենայն արարածք միծացուցանեն, և ամենայն հոգիք գովարսնեն:

ԳԼՈՒԽ. ԼԳ.

Գոհուրիւնելիք հրեշտակաց և մարդկան:

Ա. Քեզ՝ սուրբք և խոնարհք սրտիւք, քեզ՝ հոգիք և շունչք արդարոց, քեզ՝ ամենայն երկնային քաղաքացիք, և համօրէն երանելի հոգւոցն դասակարգութիւնք, զիառս և զպատիւ մաղթողական երկրագագութեամք երգեն անվախճան: Օրհնեն զքեզ Տէր, վերնական քաղաքացին այնորիկ մեծաւ հանդիսիւ և պատուասիրաբար: Օրհնէ զքեզ մարդն՝ մեծ մասն մեծ ստեղծուածոց քոց: Առլ և ես մեղաւոր մարդուկս ցանկամ մեծաւ տենչմամբ օրհնել զքեզ: ցանկամ առանձին սիրով սիրել զքեզ: Աստուած իմ, կեանք իմ, զօրութիւն իմ և օրհնութիւն իմ, արժանացողիս օրհնել զքեզ: Տուր ինձ լոյս ի սրտի, բան ի բերանի, զի

սիրտ իմ խորհեսցի զփառս քո, և լեզու իմ զօր հանաւապաղ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Բ. Ա. Ալ զի չէ վայելուշ օրհնութիւն ի բերան մեղաւորի, և զի այր պղծաշուրթն եմ ես, սրբեա աղաւեմ զսիրտ իմ յամենայն պղծութենէ. սուրբ արա զիս սրբացուցիչը ամենազօր, ներքոյ և արտաքոյ, և արա զիս արժանի օրհնութեանց քոց: Ընկալ բարեգութ և հաճութեամբ ի ձեռաց սրտիս և ի սիրոյ մոտացն զպատարադ շրթանց իմոց. Եղիցի ընդունելի առաջի քո, և ելցէ առ քեզ ի հոտ անուշութեան: Քո սուրբ իշխատակ' և քաղցրութիւն քո երանական՝ ստասցի զանձն իմ բոլսարակ, այլ և յափշտակեսցէ զիս. ի սէր աներեւութից անցցէ յերեւելեացս առ աներեւոյթն, յերկրայնոցս առ երկնայինն, ի ժամանակաւուրացս առ յաւիտենականն, անցցէ և տեսցէ զտեսութիւնն սքանչէլի:

Գ. Ո՛վ յաւիտենական ճշմարտութիւն, և ճշմարիտ սէր, և սիրելի յաւիտենականութիւն, զու ես Աստուած իմ, առ քեզ հաւաշեմ ի տուէ և ի գիշերի. քեզ անձկամ, առ քեզ ձգիմ, առ քեզ հասանել փափազեմ: Որ ծանեաւ զքեզ՝ ծանեաւ զշմարտութիւն, ծանեաւ զյաւիտենականութիւն: Դու ճշմարտութիւն ի վերոյ քան զամենայն բազմիս, զոր տեսանելոց եմք որպէս և եսդ, մինչեւ անցցէ կեանքս այս կոյր և մահկանացու, յորում ասի մեզ Ո՞ւր է Աստուած քո: Եւ ես ասեմ, Ո՞ւր ես Աստուած իմ: Որի առնում դոյզն ինչ ի քեզ՝ երբ հեղում զանձն իմ ի վերոյ քո ձայնիւ ցնծութեան և խոստովանութեան, ձայնիւ բարեկենդանութեան և տօնական հանդիսութեան. այլ տակաւին տրտում է՝ զի սահեսցի և անդընդասցի, կամ մանաւանդ ճանաչ զինքն անդունդս խորոց լինել. հաւատք իմ՝ ասեն նմա զոր վառեցեր ի գիշերի առաջի սուից իմոց:

Դ. Ընդէր տրտում ես անձն իմ, և ընդէր խռովես զիս. յուսա առ Աստուած. ճրագ ոսից իմոց՝ բան նորա. յուսա և յարատեւեա մինչեւ անցցէ գիշերն՝ մայրն անօրինաց. մինչեւ անցցէ բարկութիւն Տեառն, որոյ երբեմն եղաք որդիք, (քանզի էաք երբեմն խաւար). մինչեւ անցցեն

հոսանք ջուրցս, զորոյ մնացուածս տակաւին կրեմք ի մարմնի մեղօք մեռելոյ, մինչեւ տիւն ծագեսցի և սոսուերքն շրջեսցին: Յուսացայց ի Տէր. ընդ առաւօտս յանդիման եղէց, տեսից, և միշտ խոստովան եղէց նմա: Ընդ առաւօտս յանդիման եղէց, և տեսից զփրկութիւն երեսաց իմոց զԱստուածն իմ, որ կենդանացուացէ զմահկանացու մարմինս մեր, վասն բնակելոյ հօգւոյ նորա ի մեզ. իրրու զի արդէն լոյս իցեմք՝ մինչ յօւսով փրկեալս եմք, և որդիք լուսոյ և որդիք տունջեան. շեմք գիշերոյ, շեմք խաւարի, զի էաք երբեմն խաւար, այլ այժմ լոյս՝ ի քեզ Աստուած մեր. և սուկայն այժմ՝ հաւատառվ՝ այլ ոչ տեսութեամբ. զի յոյս որ տեսանի ոչ է յօյս:

Ե. Գովին զքեզ, տէր, անմահ ժողովք հրեշտակաց քոց, և փառաւորեն զանուն քո զօրութիւնք երկնայինք՝ որք ոչ կարօտին ընթեռնուլ զգիրս մեր զայսոսիկ, և ճանաչել զքեզ սուրբ և զանբաժանելի Երրորդութիւն. քանդի տեսանեն զերեսս քո միշտ, և անդ ընթեռնուն առանց վանկից ժամանակաց, զոր ինչ կամիցի յաւիտենական կամք քո. ընթեռնուն, ընտրեն, և սիրեն, և միշտ ընթեռնուն: Զոր ընթեռնուն՝ ոչ երբէք անցանէ. հաճելով և սիրելով ընթեռնուն զնոյն իսկ զանփոփոխութիւն խորհրդոց քոց. և ոչ փակի մատեանն նոցա, ոչ ձախն գիրք նոցա, քանզի դու ինքն ես գիրք նոցա և եղիցիս յաւիտեան: Ո՛վ երանելիք յօյժ երկնային զօրութիւնքն այնզիքի, որք կարեն օրհնել զքեզ սրբութեամբ և անարատութեամբ, հանդերձ մեծագոյն քաղցրութեամբ և անպատմելի ցնծութեամբ: Անտի օրհնեն՝ ուսափ ցնծան, զի միշտ տեսանեն՝ ուստի կարեն ցնծալ և օրհնել:

Զ. Բայց մեք ներբեւեալք ի զանգուածոյ մարմնոյ, հեռի կացեալք յերեսաց քոց յայսմնչդեհութեան, այլ և աշխարհային փոփոխութեամբք ընկրկեալք, ոչ կարեմք զքեզ արժանապէս օրհնել. սակայն օրհնեմք հաւատառվ՝ այլ ոչ տեսութեամբ. իսկ նոքա հրեշտակական հօգիք՝ տեսութեամբք և ոչ հաւատառվ: Եւ զայս մարմին առթէ, զի կարի այլազգ օրհնեսցուք քան զնոսա: Ա. թէ և այլ և այլ եղանակաւ ասեմք զօրհնութիւնս քո, դու մի և նոյն ես Աստուած

ստեղծիչ ամենեցուն, որում պատարագ գովութեան մատուցանի յերկինս և ի յերկրի: Սակայն հանդերձեալ եմք ժամանել ողորմութեամբ քով առ գասակցութիւն նոցին, ընդ որոց զքեզ տեսանելոց եմք միշտ և անվախճան գովլարանել: Շնորհեա Տէր, զի ցորչափ եղեալ կամ ի դիւրաբեկ մարմնի, օրհնեսցէ զքեզ սիրտ իմ, օրհնեսցէ զքեզ լիզու իմ. և ամենայն ուկերք իմ ասասցեն, Տէր ո՞ նմանէ քեզ:

Ե. Դու ես Աստուած ամենակալ, զոր երբեակ յանձինս և մի ի բնութեան ասուուածութեանն պաշտեմք և երկիր պագանեմք. զշայր անծին, զՈրդի ի Հօրէ միածին, զշոզին Սուրբ յերկոցունց բղիսեալ և յերկոսին կայացեալ, զսուրբ և զանբաժանելի Երրորդութիւն՝ և զմի Աստուած ամենակալ: Որ մինչ ոչն էաք՝ կարողապէս արարեր զմեզ, և մինչ կորուսեալ էաք յանցանօք մերովք՝ զթութեամբ և բարութեամբ քով վերաստացար զմեզ: Մի տար թոյլ, աղաջեմ, ապերախտու լինել և անարժանս այնպանեաց քոյոց բարերարութեանց և բազմապատիկ ողորմութեանց: Զքեզ աղաջեմ, պաղաստիմ և հայցեմ, յաւել զհաւատու, յաւել զյոյս, յաւել զմէր:

Ը. Արա զմեզ շնորհաք քովք միշտ անսասան ի հաւատու, վսասակաւոր ի գործու. որպէս զի ուղիղ հաւատով և արժանաւոր գործովք հաւատոց՝ քոյին ողորմութեամբ ժամանեցուք ի կեանս յաւիտենականս. ուր զփառս քո որպիսի էն՝ տեսանելով՝ երկիր պագուռք մեծի վայելշութեան քում, և ասասցուք միաբան ի մի բերան՝ ընդ որս արժանիս արացես տեսանել զփառսքո. Փառք Հօր՝ որ ստեղծ զմեզ, փառք Որդւոյ՝ որ փրկեաց զմեզ, փառք Հոգւոյն Արրոյ՝ որ սրբեաց զմեզ. փառք գերազոյն և անբաժանելի Երրորդութեան, որոյ գործք անբաժան են, որոյ տէրութիւն մեայ յաւիտեան: Քեզ վայելէ օրհնութիւն, քեզ վայելէ երգաբանութիւն, քեզ պատշաճի ամենայն պատիւ, քեզ բարեբանութիւն և սէր, քեզ գովութիւն, քեզ պատիւ, կարողապէս յաւիտենից, ամէն:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Գանգատի մարդ՝ զի ոչ փշճի ի խորհնան (Ասուուժոյ) յորմ և հրեշտակը սարսեն ի տեսանելի զԱսոուած:

Ա. Անտես արա, Տէր, անտես արա, զթած, մոռա և ողորմեա, խնայեա անգիտութեան իմոյ և բազմապատիկ թերութեանց իմոց: Մի զիս իբր զյանդուգն անարգեր, զի ծառայ՝ երանի թէ և բարի, և ոչ անպիտան և շար. և յայն սակս կարի իսկ շար՝ զի զքեզ զամենակարողդ Աստուած մեր՝ զահաւորդ և զսարսափելի, առանց զղութեան սրտի և աղբեր արտասուաց, առանց արժանապարտ յարգութեան և երկիւղի՝ օրհնեմ, ֆառարանեմ, և երկիր պագանեմ: Զի եթէ հրեշտակը երկրպագուք և օրհնաբանիչքքո՝ դողան սքանչելի ցնծութեամբ լցեալք, ես մեղաւորս՝ մինչ հանապաղ առաջի քո կամ, զքեզ զ օրհնաբանեմ, պատարագս մատուցանեմ, զիա՞րդ ոչ երկնչիմ սրտիւ, ոչ այլագունիմերեսոք, ոչ գոզամ շրթամբք, ոչ սարսափիմբովանդակ մարմնով, և ոչ հօսմամբ արտասուաց ողբամ անդադար առաջիքո: Կամիմ այլ ոչ կարեմ, զի անկարեմ առ որ ցանկամ: Եւ վասն այնորիկ հիանամ մեծապէս ընդ իս, զի զքեզ ահաւորդ յոյժ՝ հաւատոյ աչօք տեսանեմ. և սակայն զինչ իցէ յիրափ այս՝ առանց օժանդակութեան շնորհաց քոց. քանզի բովանդակ փրկութիւն մեր՝ ողորմութիւն քո մեծ:

Բ. Ո՛վթշուառութեանս, զիա՞րդ այգափէս անզգայացեալ կայ անձն իմ, զի ոչ երկնչի մեծաւ երկիւղիւ՝ մինչ կայ առաջի Աստուածոյ և զգովութիւնս նորա երգէ: Վայթշուառացելումս. զիա՞րդ այգափէս խստացաւ սիրու իմ, զի աշք իմ ոչ անդադար հօսն զետս արտասուաց, մինչ բանս ի մէջ առնու առաջի Տետոն, մարդն ընդ Աստուածոյ, ստեղծուածն ընդ ստեղծողին, հողածինն ընդ նմա՝ որ զամենայն արար յոշընչէ: Ահաւասփի Տէր, զի՞ր զիս առաջի քո, և զորս ի ծածուկ հանաչեմ յանձն իմ, ոչ թագուցից

ի հայրական ունկանէ։ Դու որ մեծդ ես յողորմութիւնս և առատ ի վարձս, տուր ինձ ի բարեաց քոյ, զի նոքօք ծառայեցից քեզ։ քանզի ոչ այլով իւկը կարեմք ծառայել, և ոչ հաճոյ լինելքեզ՝ եթէ ոչ քոյին պարգեւօք։

Գ. Բեւեռեա աղաչեմ ընդ երկիւղ քո զմարմին իմ։ զուարձացի սիրտ իմ և երկից յանուանէ քումմէ։ Երանի թէ այնպէս երկնչը ի քէն անձն իմ մեղաւոր, որպէս այրն այն սուրբ որ ասաց։ «քանզի միշտ որպէս կուտակեալ ալեօք ի վերսց իմ՝ երկեայ յԱստուծոյ»։ Արդ՝ տուիչ բարեաց Աստուած, տուր ինձ ընդ օրհնաբանութիւնս քո արդիւրս արտասուաց, համանգամայն սրտի մաքրութիւն և մտաց զուարթութիւն, զի կատարելապէս զքեզ սիրելով, և արժանաւորապէս զքեզ օրհնելով, նովին իսկ քմօք սրտիս ծանեայց, ճաշակեցից, և ի միտ առից՝ եթէ քանի հեղահամբոյր և քաղցր ես Տէր. որպէս և զրեալ է։ «Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր։ — Երանեալ է այր որ յօւսայ ի նա։ — Երանի ժողովրդեան որ գիտէ զուրախութիւն։ — Երանեալ է այր որոյ օգնութիւն իւր ի քէն է։ Էլս եղ ի սրտի իւրում ի հովտիս տրտմութեան, ի տեղով յօրում ուխտեաց։ — Երանի որք սուրբ են սրտիւք, զի նոքա յԱստուած տեսցեն։ — Երանի որք ընակեալք են ի տան քում Տէր, յաւիտեանս յաւիտենից օրհնեացեն զքեզ»։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Աղօրք հօր, ի շարժել ի չերմեսանդորիւմ

և ի սերմ Աստուծոյ։

Ա. Յիսուս, փրկութիւն մեր, սէր և փափագումն։ Աստուած յԱստուծոյ, լեր մերձ ծառայի քում։ Առ քեզ կարդամ, առ քեզ աղաղակեմ մեծաւ աղաղակաւ, բոլորով սրտի իմով։ Զքեզ կոչեմ յանձն իմ, մուտ ի սա, յար-

մարեա զսա քեզ, զի ժառանգեցես անտիմեղծ և անարատ։ Փանզի ամենասուրբ տեառն՝ բնակութիւն սուրբ վայել է։ Արդ սրբագործեա զիս զանօթ քո՛ զոր արարելու դատարկացո ի շարութենէ։ լից նորհօք, և պահեա ի լիութեան։ որպէս զի արժանաւոր տաճար բնակութեան քում եղէց աստ և յաւիտեան։ Ոմենաքաղցր, ամենաբարեգութ և ամենասիրելի, ամենանձկալի, ամենակարօղ, ամենափափելի, ամենապատուական, ամենահաճելի, ամենագեղ գուակելով քանզական զինի քաղցրագոյն։ քան զականս պատուականս և զոսկի պատուականագոյն, և քան զամենայն երկրաւոր ճոխութիւնս և զպատիւս ինձ չքեղագոյն։

Բ. Զի՞նչ տասացից Աստուած իմ, յօս իմ, այնչափ մեծ յորմութեան քում, Զի՞նչ ասեմ՝ քաղցրութիւն երջանիկ և ապահով զի՞նչ ասեմ՝ մինչ զայսպիփիս ասեմ։ Ասեմ՝ զոր կարեմս, այլ ոչ կարեմ զոր պարտիմս։ Ո՛հ, թէ կարօղ լինէի ասել՝ զոր ինչ ասեն յերգս իւրեանց հրեշտակացն պարք։ Ո՛հ, քանի ինքնայօժար ըղձիւք զանձն իմ բոլոր արկանէի յօրհնութիւն։ քու Ո՛վ, թէ քանի եռանդեամբ զնոյն զերկնային մեղեգեացն զերգս՝ ի գոփութիւն և ի փառս անուան քո ի մէջ եկեղեցւոյ անխոնջ քարոզէի։ Այլ եթէ զպապիփիս ոչ կարեմ, մի թէ լուեցից։ Վայ լուղացն զքէն, որ գհամերց բերանս բանաս և զտղայոց լեզուս ճարտարաբանս առնես։ Վայ լուղացն զքէն։ քանզի նոյն իսկ շատիսակն համր են, յորժամ զգովութիւն քո ոչ ասեն։

Գ. Ո՞ւստ արժանաւոյն կարիցէ զքեզ սիրել, ով անձանելի զօրութիւն և իմաստութիւն Հօր։ Եւ քանզի ոչ գտանեմ բան որով զքեզ լստ բաւականին կարօղ եղէց բացատրել, զամենակարօղդ և զամենագէտ զբանդ, ասացից առա ժամս որշափ ասել զօրեմ, մինչև հրամայեացես ինձ գալ առ քեզ, ուր կարօղ եղէց ասել՝ որ ինչ վայել է քեզ, և ինձ պատշաճ։ Եւ փասն այնորիկ պազատելով աղաչեմ, մի հայեացիս յայն զոր ացմու ասեմ, այլ յայն՝ զոր ցանկամ ասել։ Քանզի տենչամ մեծաւ փափագանօք ներբողել զքեզ՝ որպէս պարտն է և վայելուշ զի քեզ վայելէ

գովեստ, քեզ վացելէ օրհնութիւն, և քեզ անկ է ամենայն պատիւ: Գիտես ապաքէն գիտողդ գաղտնեաց Աստուած, զի քան զերկինս և զերկիր և զայլ ամենայն որ ի նոսա, դու հաճոյ ես ինձ և սիրելի: քանզի սիրեմ զքեզ առաւել քան զերկինս և զերկիր և զամենայն որ են ի նոսա. նա մանաւանդ ի սէր անուան քո՝ առժամանակեայքս առանց իրիք երկրայութեան չեն սիրելիք: Սիրեմ զքեզ, Աստուած իմ, մեծաւ սիրով, և մեծապէս եւս սիրել զքեզ ցանկամ:

Դ. Տուր ինձ, զի սիրեցից զքեզ միշտ՝ որշափ կամիմ և որշափ պարտիմ, զի իցես միայն բովանդակ դիտումն իմ և ամենայն խոկումն իմ, Զքէն Խորհեցայց զօրն ողջոյն անդադար. զքեզ ծանեայց ի թմրութեանս. զքէն խօսեցի ի գիշերի հոգի իմ, ընդ քեզ խօսակից լիցին միտք իմ: Լուսով սրբոյ տեսութեան քո լուսաւորեսցի միրտ իմ, որպէս զի քոյ կառավարելովդ՝ քոյին առաջնորդութեամբ՝ գնացից ի զօրութենէ ի զօրութիւն. և ապա տեսից զքեզ զԱստուածդ Աստուածոց՝ ի Սիօն. այժմ ընդ հայելի օրինակաւ, բայց յայնժամ երես առ երես, ուր ծանեայց զքեզ՝ որպէս և ծանուցեալս եմ: « Երանի՛ որք սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն »: « Երանի՛ որք բնակեն ի տան քում Տէր, յաւիտեանս յափտենից օրհնեսցեն զքեզ, Տէր »: Ապա աղաշեմ զքեզ Տէր, վասն ամենայն ողորմութեանց քոց, որովք ի յաւիտենական մահուանէն զերծաք, կակացող զմիրտ իմ խստացեալ, զքարեղէնն՝ զապառամն՝ և զերկաթին, քոյին ամենասուրբ և ազդու օժմամբ, և հրով զղման արա զիս առաջի քո յամենայն ժամ պատարագ կենդանի:

Ե. Աքա զիս յանդիման քո սիրտ զղացեալ և խոնարհեալ միշտ յորդ արտասուօք: Աքա զիս յամենայն ցանկութենէ այսր աշխարհի խապառ չիցեալ, և զիրաց անցաւորաց ի մոռացօնս անկեալ վասն մեծութեան երկիւլի քո և սիրոյ. զի մի ընդ ժամանակաւորս տիրեցայց, և մի ուրախ եղէց, և մի յիրաց ինչ անցաւորաց երկեայց. մի սիրեցից, մի հրապուրմամբ ապականեցայց, և մի ի ներհակացն զողացայց: Եւ զի հզօր է սէր քո իրեւ զմահ՝ աղա-

շեմ զի հրաբորքը և մեղրածորան զօրութիւն սիրոյ քո ընկցէ զմիտս իմ յամենայնէ՝ որք ընդ երկնիւք են, զի ի քեզ միայն յարեցայց, և միայնոյ քաղցրութեանդ յիշատակութեամբ կերակրեցայց:

Զ. Իլցէ աղաշեմ, իլցէ ի սիրտ իմ հոտ քո անուշամթեան, մոցէ սէր քո մեղրածորան: Եկեցէ ինձ բուրումն սրանշելի և անճառելի համեղութեան քո, զարթուցանել յիս անդրաւական ցանկութիւնս, և բզիսեցուցանել ի սրտէ իմիէ փոակս ջրոյ հոսելց ի կեանս յաւիտենականս: Անշափ ես, Տէր, ուստի և անշափապէս պարտիս սիրիլ և օրհնիլ ի նոցունց՝ զորս պատուական արեամբդ քո գրկեցեր: Մարդասէր, բարերար և ամենագութ Տէր, և արդար գատաւոր, որում զամենայն գատաստան ետ Հայր. ամենիմաստ քո արդարութեան դատաստանաւդ յայտնես, եթէ ոչ է արդար և ուղիղ՝ զի որդիք այսր յաւիտենիս գիշերոյ և խսարի՝ յաւէտ իմն ցանկութեամբ զօրութեամբ և աշխատութեամբ՝ սիրեցին և խնդրեցին զկորստական մեծութիւնս և զփախստական պատիւս, քան թէ մեք ծառապքս քո սիրեցուք զքեզ Աստուած մեր, յորմէ ստեղծաք և փրկեցաք:

Է. Եթէ մարդ այնշափ ախսորդ հաճութեամբ սիրէ, մինչեւ մին միւսոյն բացակյառութեան հազիւ համերէ. եթէ հարսն ընդ փեսային շաղկապի մտաց բորբոքմամբ, առ սաստկութեան սիրոյն ոչ գտանէ հանգիստ, բնաւ ընդ սիրեւոյն բացակյառութիւն ոչ ժուժկալէ առանց ցաւոց տիրութեան, ապա որո՞վ սիրելութեամբ, որով չանիւ, որով եռանգեամբ պարտ իցէ հոգուց զոր հարսնացուցեր քեզ հաւատով ողորմութեամբդ՝ սիրել զքեզ զճմարիտդ Աստուած և զամենազեղցիկ փեսայդ, որ զմեզ այգպէս սիրեցեր և փրկեցեր, որ վասն մեր այդքան այնշափ՝ և այնպիսիս արարեր: Քանզի որշափ և զիւրեանց ինչ ունիցին բերկութիւնս և զսէր՝ ստորինքս այսօքիկ, սակայն ոչ այնու եղանակաւ բերկուցուցանեն՝ որպէս դու, Աստուած մեր. զի ի քեզ բերկի արդարն, քանզի սէր քո քաղցր և խաղաղական. զի զիրտ զոր ստանաս՝ քաղցրութեամբ և անուշութեամբ և խաղաղութեամբ ընուս: Իսկ ընդ հա-

կառակն՝ սէր աշխարհի և մարմնոյ՝ նեղիշ է և վրդովեալ։ և գհոգիս յորս ընդ մտանէ՝ ստուգապէս չթողու յանդորրու խաղաղութեան։ զի միշտ կասկածանօք և խոռոշութեամբ և պէսպէս աշխ տառապեցուցանէ։

Ը. Եւ այսպէս զու բերկրութիւն ես ուղղոց, և իրաւամբք. քանզի հօր է առ քեզ խաղաղութիւն, և կեանքն անվրդով։ Որ մտանէ ի քեզ՝ մտանէ յուրախութիւն տեառն իւրոյ, և այլ ոչ եւս երկիցէ, զի բարուք գտցէ զանձն՝ և ի լաւագոյն տեղուղ. և ասէ, « Այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնակեցաց զի հանձնցայ ընդ սա ». (Սղմ. ՃԱ.): Եւ գարձեալ. « Տէր հովուեացէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեացի։ Ի վայրի դալարով անդ բնակեցաց զիս »։ (Սղմ. ԻԲ): Քայլցր Քրիստոս, բարի Յիսուս, իից աղաշեմ զսիրտ իմ միշտ քո անշիջանելի սիրովի, հանապազորեան յիշատակութեամբ քով. զի որպէս բոց հրավառեալ չեռացաց բոլորովիմք՝ քայլցրութեամբ սիրոյ քո, զոր և չուրբ բազումք ոչ կարացեն շիլուցանել։ Արա բարեգութ Տէր, զի սիրեցից զքեզ, և անձկանօքս առ քեզ՝ թողից ի բաց զժանրութիւն ամենայն մարմնաւկան ցանկութեանց և երկրաւոր հեշտութեանց, զժանր ծանր բեռինսն որք պատերազմին և ծանրացուցանեն զանձն իմ հէտ. որպէս զի զհետ քո անխափան ի հոտ իւզոց քոց ընթանալով մինչեւ առ տեսութիւն քումդ գեղեցկութեան իսկական յագեցմամբ, արագ արագ քոյին առաջնորդութեամբ ժամանել արժանացաց։

ԹՅ. Քանզի երկու սէր՝ մին բարի և միւսն չար, մին քայլցր և միւսն դառն չկարեն ի միասին ի միում սրտի ամիտոփիլ. և վասն այսորիկ եթէ ոք բաց ի քէն զայլ ինչ սիրէ, ոչ է սէր քո ի նմա, Աստուած, սէր քաղցրութեան՝ և քայլցրութիւն սիրոյ. սէր, ոչ տառապեցուցի՛ այլ հեշտացուցի՛. սէր յստակագոյն և անարատ, որ կայ և մնայ յաւիտեան։ Մէր, որ հանապազ վառիս և երբէք ոչ շիջանիս. զթած Քրիստոս, բարի Յիսուս, սէր Աստուած իմ։ վառեա զիս բովանդակ հրով քով, սիրով քով, համբայր հեղութեամբ և քայլցրութեամբ քով, զուարթութեամբ և ուրախութեամբ քով, հեշտութեամբ և տենչանօք քով,

որ սուրբ է և բարի, անարատ և մաքուր, անդորր և աներկեւան. որպէս զի լի պատարուն քայլցրութեամբ սիրոյ քո, բովանդակապէս բորբոքեալ հրով սիրոյ քո՝ սիրեցից զքեզ Աստուած իմ յամենայն սրտէ իմմէ, յամենայն ուղղոց կրծոց իմոց, ունելով զքեզ ի սրտի, ի բերանի և յանդիման աչաց իմոց հանապազ և ամենայն ուրեք, այնպէս՝ մինչեւմի մնացէ յանձին իմում տեղի օտարախորթ սիրոյ։

Ժ. Լուր Աստուած իմ, ունկն դիր լցոս աչաց իմոց, լուր զոր ինդրեմ, և տուր զոր ինդրեցից զի լուիցես։ Գթած ամենորդմ Տէր, մի լինիր ինձ անողոք վսան մեղաց իմոց, այլ վասն բարութեան քո ընկալ զաղաշանս ծառայի քո, և տուր ինձ զկատարումն խնդրուած աց իմոց և փափագանաց իմոց, միջնորդութեամբ և մաղթանօք և հայցուածով հրաշափառ կուսի ծնողին քո Մարիամու սիրուհւոյն իմոց, ընդ ամենայն Սրբոց՝ ամէն։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Աշորք եռանդագին առ սուացումն գովարանորեւան։

Ա. Տէր Քրիստոս, Յան Հօր, որ եկիր յաշխարհս առ ի փրկել զմեղաւորս, աղաշեմ զքեզ վասն ամենագութ ողորմութեան աղեաց քոց, մաքրեա զկեանս իմ, ուղլեա զգործս, յարդարեա զբարս, բարձ յինէն զվասսարարն իմ և զանհաճոյն քեզ, և տուր զոր ծանեար հաճոյ քեզ և օգտարեր ինձ։ Ո՞վ կարասցէ սուրբ առնել զյղացեալն յան սուրբ սերմանէ, եթէ ոչ զու միայն։ Դու ես Աստուած ամենակարող անհուն գթութեամբ, որ արդարացուցանես զամբարիշոս և զմեռեալն մեզօք, որ փոփոխես զմեղաւորս՝ և ոչ եւս են։ Բարձ յինէն որ ինչ չեն քեզ հաճոյ յիս. քանզի բագումինչ անկատարս տեսանեն յիս աչքքո. ձեռ աղաշեմ զենան գթութեան քո առ իս, և բարձ յինէն

որ ինչ չար թուի աշաց գթութեանքո: Առաջի քո է Տէր, առողջութիւն իմ և հիւանդութիւն, զայն աղաշեմ պահեա, զսա առողջացո:

Բ. Բժշկեա Տէր և բուժեցայց փրկեա զիս և փրկեցայց: Դու որ գիւտանդս բժշկես, և զառողջն պահես, գու՝ որ միայն ակնարկութեամբ քով վերանորոգես զկործանեալս և զապականեալս: Զի եթէ իցէ քեզ հաճոյ յագարակի քում՝ ի սրտի իմում՝ սերմանել զմերմ բարի, պէտք են նախ ձեռամբ գթութեան քո արմատախիլ առնել զիուշ մոլութեանց իմոց: Ամենաքաղցր, ամենաբարեգութ, ամենասիրելի, ամենացանկալի, ամենահաճելի, ամենագեղ, հեղ աղաշեմ ի սիրտի իմ զհոսանս քաղցրութեան քո և զսիրոյ քո, զի մի երկրաւորաց և մի մարմնականաց ինչ տենչացայց կամ խորհեցայց, այլ զքեզ միայն սիրեցից, զքեզ միայն կալայց ի սրտի և ի բերանի իմում: Գրեա մատամբ քո ի կուրծս իմ զքաղցր յիշատակութիւն մեղրակաթ անուանդ քոյ, որ ամենեւին մուացութեամբ ոչ չնեսցի: գրեա ի տախտակս սրտի իմոյ զկամն քո և զարդարութիւնս քո, զի զՏէրդ անշափ քաղցրութեան՝ և զպատուիրանս քո միշտ և ամենայն ուրեք կալայց յանդիման աշաց իմոց: Վառեա զմիտո իմ նովին հրով քով զոր արկեր յերկիր, և կամեցար զբորբովել նորա յոյժ, որպէս զի պատարագ հոգեոյ զըլացելոյ և սրտի խսնարէլոյ՝ հեղմամբ արտասուաց՝ մատուցից քեզ հանապազ:

Գ. Գթած Քրիստոս, բարի Յիսուս, որպէս ցանկամ, որպէս յամենայն մուաց իմոց հայցեմ, տուր ինձ զսէր քո սուրբ և անարատ, զի լցոց զիս, կալցէ և ժառանգեացէ բոլորովին: Եւ տուր ինձ յայտնի նշանակ սիրոյ քոյ՝ հանսպազարուղի աղբիւրս արտասուաց, զի նովին իսկ արտասուքն վլայեսցեն յիս սիրոյ քո, նորա պատմեացեն՝ նոքա ասսացեն որչափ սիրէ զքեզ հոգի իմ, մինչեւ առ ասսուկութեան սիրոյ քո ոչ կարէ ժոյժ ունել արտասուաց:

Դ. Յիշեմ գթած, Տէր, զբարի կնոջն այնորիկ Աննայի զպաղատանս առաջի խորանին՝ վասն որդի ունելոյ, զորմէ ասէ զիրն, եթէ յետ արտասուաց և աղօթիցն « այլ ոչ եւս տիրեցան երեսք նորա » (Ա. Թագ. Պլ. Ա.): Այլ եւ

յիշատակելով զայնպիսի առաքինութիւն և զայնպիսի արտութիւն՝ ցաւագնեալ տանջիմ և ամօթով խոսվիմ, զի զիս զթշւառացեալս յոյժ ի վայր անկեալ տեսանեմ: Փանզի եթէ այնշափ արտասուեաց՝ և յարտասուսն յարատեւեաց կինն այն որ որդի խնդրէր, յորպիսի՛ ողբս՝ և յողբս անդ կալ մմալ չիցէ՛ պարտ անձին իմոյ, որ խնդրէ և սիրէ զԱստուած և առ նա հասնել փափագէ՛ զիարդ սպալ և լալ անկ է հոգւոյ՝ որ տիւ և գիշեր խնդրէ զԱստուած, որ բաց ի Քրիստոսէ ոչինչ կամի սիրել: Ա.յ՛, զարմանք մեծ են եթէ արդէն չեն իսկ եղեալ նմա արտասուքն կերակուր ի տուէ և գիշերի: Հայեաց ապա և ողբրմեա ինձ, զի ցաւք որտի իմոյ բազմացան. տուր ինձ զերկնային զքո միմիթարութիւն, և մի անտես առներ զմեղսամակարդ հոգիս՝ վասն որոյ մեռարք Տուր ինձ զարտասոււ, ինդրեմի իսորոց սրտէ և յամենայն ըդնից, որք կարացեն լուծանել զկապանս մեղաց իմոց, և երկնային ուրախութեամբ լցցեն միշտ զնոգի իմ: Զի եթէ ոչ ընդ ձշմարիտ և կատարեալ միանձանց՝ որոյ շաւղացն զիետերթալ չեմ բաւական, գէթ ընդ չերմեռանդն կամանց դուզնաքեայ իմն մասն ստանալ յարբայութեան քում արժանացայց:

Ե. Անկաւ գարձեալ ի միտո իմ միւս եւս կնոջ հրաշակի չերմեռանդութիւն. որ զթաղեալդ ի գերեզմանի խնդրէր չերմ սիրով. որ և ի մեկնել աշակերտացն ի զերեզմանէն՝ ոչ հեռանայր, զի նստէր անդ տրտմազին և ցաւագին, և ընդ երկար ողբացը յոյժ. և յարուցեալ բազում արտասուօք՝ գարձեալ և ստէպ ի ներքս ի գատորի գերեզմանն անթարթ աշօք զննէր, գուցէ տեսանել ուրեք զքեզ կարացէ՝ զոր չերմեռանդն տենչմամբ խնդրէր: Եւ թէպէտ միանգամ և երկիցս զմուտս զերեզմանին տեսանէր, այլ սիրովին չէր այն բաւական. քանզի զօրութիւն բարի գործոյն՝ է յարատեւելն: Եւ զի առաւել քան զայս սիրեաց՝ և ողբալով խնդրէր և խնդրելով յարատեւեաց, վասն այսորիկ յառաջքան զամենեսին զքեզ գտանել, զքեզ տեսանել և ընդ քեզ իսուել արժանի եղեւ:

Զ. Եւ ոչ այսշափ միայն, այլ և նոցին իսկ աշակետացն

Եկաց քարոզ փառաց յարութեան, քոյով հրամանաւ և գթալիր ազդարարութեամբ. « Երթ , ասա եղբարց իմոց, զի երթիցն ի Գալիլիա, և անդ տեսցեն զիս » : Արդ եթէ այդպէս արտասուեաց՝ և յարտասուն յարատեւեաց կինն, որ զկենդանին ընդ մեռեալ խնդրէր, որ գքեզ հաւատոյ ձեռամբ շօստիէր, որպիսի՞ ողբավկ ողբավ և յողբս յարամեալ պարտ իցէ հոգւոյ՝ որ գքեզ զփրկիչդ իւր ի յերկինս վաղ ուրեմն բազմեալ, և յամենայն տեղիս թագաւորեալ՝ սրտիւ հաւատայ և բերանով խստովանի: Ապա զիարդ հեծել և ողբավ պարտ է այնպիսի հոգւոյ, որ գքեզ բողորով սրտիւ սիրէ, և զքեզ ամենայն անձկանօք տեսանել ցանկայ: Զմիակ ապաւէնդ և զմիակ յայս ողորմելեաց, որ ոչ երբէք առանց յուսոյ ողորմութեան լինիս խնդրեալ:

Ե. Պարզեւեա ինձ զայդ շնորհ վասն քո և վասն սրբոյ անսուան քո. զի քանից և զքէն խորհեցայց, զքէն խոսեցայց, զքէն զրեցից, զքէն ընթեցայց և ճառեցից. քանից զքեզ յիշեցից, քեզ յանդիման եղէց, զօրհնութիւնս պաղատանս և զպատարազս մատուցից, նոյն քան եւս բզիմամբ արտասուաց առատապէս և քաղցրութեամբ ողբացից, մինչեւ լիցին ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի: Դու ապաքէն թագաւոր փառաց՝ և ամենայն բարելաւութեանց վարդապետ, ուսուցեր մեզ բանիւ և օրինակու ողբալ և լալ, ասելով. « Երանի որք լան. զի նոքա միիթարեսցին »: Դու արտասուեցեր զմեռեալ բարեկամ քո, և լացեր ուժգին ի վերայ կորսուական քաղաքին:

Ը. Հայցեմ իքէն բարի Յիսուս, վասն նոյին իսկ անդին արտասուաց քոյ, վասն ամենայն ողորմութեանց քոյ, որովք սրանշելապէս հանեցար մեզ կորուսելոց ի թիկունս հասանել. տուր ինձ զշնորհս արտասուաց՝ որում մեծապէս ցանկայ և փափագէ անձն իմ, քանզի աս անց քոյ շնորհացդ ոչ կարեմ ունել զայն, այլ Հոգւովդ Արբով որ կակացուցանէ զիստացեալ սիրտ մեղաւորաց և շարժէ յողբս: Տուր ինձ զշնորհս արտասուաց, որպէս ետուր հարցն մերոց՝ որոց շաւզացն պարտ է ինձ հետեւել, զի ողբացից զանձն իմ յամենայն կեանս իմ, զոր օրինակ ողբացին նոքա զտիւ և զգիէր: Վասն ազօթից և ար-

գեանց նոցա՝ որք քեզն հաճոյացան և ամենայն եռանշեամբ ծառայեցին, ողորմեա ինձ ողորմելոյս և անարժան քո ծառայիս. տուր ինձ զշնորհս արտասուաց: Տուր ինձ զուոգումն ի բարձանց և զուոգումն ի ստորեւ, զի լիցին ինձ կերակուր արտասուք իմ ի տուէ և ի զիշերի, և եղէց առաջի քո, Աստուած իմ, հրով զղման ողջակէզ պարարտ և ուղալից: զենայց բավանդակ ի սեղան սրտի իմոց, և իր ողջակէզ եւս պարարտ ծխեցայց քեզ ի հոտ անուշութեան:

Թ. Տուր ինձ զթած, զաղրիւր յրարրի և զաղրիւր չինչ յորում լոււացից հանապազպրծեալս այս ողջակէզ գանդի թէ և զիս ինքն բովանդակ մատուցից քեզ ձեռնտուութեամբ շնորհաց քոյ, սակայն բազմօք զօրհանապազ յանցանեմ վասն մեծի տկարութեան իմոց: Տուր ապա ինձ զնորհս արտասուաց, բարեկանեալ և սիրելին Աստուած, առաւելապէս ի սակո բազում քաղցրութեան քո, և յիշատակաւ ողորմութեանց քոյ պատրաստեա զայս սեղան ծառայի քոյ յանդիման քեզ. և տուր կարողութիւն, զի յոր ժամ և կամիցիմ՝ յագեցայց նովաւ:

Ժ. Պարզեւեա վասն գթութեան և բարութեան քո, զի արբեցուցի և պանձալի բաժակուքո այս՝ յագեցուցէ զծարաւ իմ. զի անձկասցի առ քեզ հոգի իմ, և վաւեսցին միտք իմ ի սէր քո, մոռանալով զունանութիւնս և զթշուառութիւնս: Լուր Աստուած իմ, ունկն զիր լոյս աշաց իմոց, լուր զոր խնդրեմ, և տուր ինձ խնդրել զոր լըւցես: Գթած և լուզ ալաշանաց, Տէր, մի լինիր ինձ անողոք վասն մեղաց իմոց, այլ վասն բարութեան քո ընկալ զաշանս ծառայի քո, և տուր ինձ զկատարումն խնդրուածաց իմոց և փափագանաց իմոց, մաղթանօք և արդեամբք փառաւորեալ կուսին Տիրուհւոյն իմոց, և համօրէն Արբոց. ամէն:

ԳԼՈՒԽ ԼԵ·

Աղօրք յոյժ զջականեք մնաց, երէ անդորրուրեամբ
ոք ասացէ:

Ա. Տէր Յիսուս, գթած Յիսուս, բարի Յիսուս, որ
յանձն առեր մեռանել վասն մեղաց մերոց, և յարեար
վասն զմեղ արդարացոյցանելոյ, աղաչեմ զքեղ վասն
փառաւորեալ յարութեանն քո, յարո զիս ի գերեզմանէ
ամենայն ախտից իմոց և մեղաց. և տուր ինձ հանապազ
բաժին ի յարութեանն առաջնում որպէս զի ի յարու-
թեան քում արժանացաց իսկապէս մասն ունել: Ամենա-
քազցը, ամենաբարեգութ. ամենափերելի, ամենափարելի,
ամենապատուական, ամենացանկալի, ամենատարփալի,
ամենագեղեցիկ, համբարձար յերկինս յաղթանակաւ փա-
ռաց քոց, և նաստիս ընդ աշմէ Հօր՝ թագաւոր ամենահզօր:
Զգեա զիս ի բարձունս առ քեզ, զի զհետքո ի հոս իւղոց
քոց ընթացաց. ընթացաց և ոչ առից զկայ ի ձգելն քո և
յառաջնորդելն քո ինձ ընթամալ իմում:

Զգեա զբերան ծարաւելոյ քեղ հոգւոյս՝ յերկնայինն վտակ
ի յագեցուցիչն յաւիտենից. նա մանաւանդ ձգեա զիս առ
քեղ աղբիւրդ կենդանի, զի արդից անտի որշափ մարթ
իցէ ինձ՝ որով միշտ կեցից. Աստուած իմ, կեանք իմ:

Բ. Փանզի դու ասացեր սուրբ և օրհնեալ բերանով քով,
« Եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առ իս և արբացէ »: (Յովէ. Է):
Աղրիւր կենաց, տուր ծարաւելոյ հոգւոյս ըմպել միշտ ի
քէն, զի ըստ սուրբ և հշմորտաբան խոստման քում՝ յո-
րովայնէ իմմէ բըղխեացն ջուրք կենդանութեան: Աղրիւր
կենաց, լից զմիտո իմ ուղխօփ փափկութեան քայ. արբեցո
զսիրտ իմ ամենազգաստ արբեցութեամբ սիրոյ քո, զի
մնացաց զսւնայնութիւնս և զերկրաւորս, և անընդհատ
զքեղ միայն յիշեցից, որպէս գրեալ է, « Յիշեցի դՏէր և
ուրախ եղէ »:

Գ. Տուր ինձ զհոգիքո սուրբ՝ զոր նշանակէին ջուրքն

զոր ծարաւելոյն խոստացար լինել պարգեւելի: Տուր ա-
ղաչեմ, ամենայն յօժարութեամբ և ամենայն լանիւր զինետ
պնդիլ անդր՝ ուր յետ քառասուն աւուրց յարութեան՝
զհամբառնան քո հաւատամբ. որպէս զի յարդի թշուա-
ռութեանս մարմնովլոկով կացից, իսկ խորհրդով և անյագ
ցանկութեամբ՝ եղէց միշտ ընդ քեզ. զի անդ իցէ սիրտ իմ՝
ուր դու ես, գանձ իմ ցանկալի և անզուգական և առաւել
սիրելի: Փանզի ի յրհեղելի մեծի կենացս այսացիկ՝ ուր
շրջապատեալ ի մրրկաց ալէկոծիմբ, չիք հաստատուն կաւ
յան և տեղի բարձրաբերձ, ուր ոտք աղաւնոյն առ վայր
մի գտցեն հանդիսաւ: Զիք անդորր խաղաղութիւն և ան-
երկեւան անդորրութիւն. ամենայն ուրեք պատերազմ
եւ կոփիք, ամենայն ուրեք թշնամիք. արտաքոյ մարտք,
ներքոյ արհաւերբ:

Դ. Եւ զի ըստ միոյ մասին երկնային եմք, և ըստ միւսոյն
երկրային, մարմին եղծանելի ծանրացուցանէ զիոգի, և
վասն այսորիկ հոգի իմ ընկեր իմ և բարեկամ՝ աշխատ
եղեալ ի ճանապարհէ գալով, տկարանայ և անկանի, հեր-
ձոտեալ և վիրաւորեալ յունայնութեանց, ընդ որս անցանէ,
քաղցնու և ծարաւի ուժգին, և ոչ ունիմ ինչ գնել առաջի
նորա, զի աղքատ և մնանկ եմ: Դու Տէր Աստուած իմ,
մեծատունդ ամենայն բարեգ և ամենաճոխ տուիչ համա-
դամոց երկնային յագեցման, տուր նքողելոյս կերպակուր,
ժողովեա զվարաւեալս, ողջաց զվիրաւորեալ: Աւարիկ
կայ առ զբունս և բաղիւշ. աղաչեմ վասն զթութեան
ողօրմութեան քո՝ որով այց արարեր մեղ ծագեալ ի բար-
ձանց, բաց բաղխոսիս, կարկառ զնեան ողորմութեան քո
հիգացելոյս, և հրամայեա ներողամիտ չնորհիւր, զի մոցէ
առ քեզ, հանգիցէ իքեզ, կազդուրեսցի իքէն ի կենդանի
յերկնային հացէդ, որով յագեալ և զօրացեալ՝ առ երկնա-
յինս վերացի, և ի հովտէ աստի արտասուաց՝ թեւօք սրբոց
փափառնաց խոյացեալ թոփիցէ յերկնաւորն թագաւո-
րութիւն:

Ե. Աղցէ, Տէր, աղաչեմ, առցէ հոգի իմ թեւս որպէս
արծուայ, թոփիցէ և ոչ դադարեացի. թագաւեալ հասցէ
մինչեւ ի վայելչութիւն տան քո և ի տեղի յարկի փառաց

քոց · որպէս զի անդանօր ի սեղանի կշտապինդ յագեցման վերին քաղաքացեացն՝ ճարակեսցի ի գաղտնեաց քոցի տեղով արօտի քո, առ ամենայորդ վոտակաւն: Հանգիցէ ի քեզ, Աստուած, սիրտ իմ. սիրտ՝ ծով մեծ ուռուցեալ ալեօք: Դու որ հրամայեցեր հողմոց և ծովու և եղեւ խաղաղութիւն մեծ, եկ և քայլեա ի վերայ ալեաց սրտի իմց, զի խաղաղացի և պայծառասցի ամենայն ինչիմ, որովզմիակ բարիդ իմ զքեզ գրկեցից, և զքեզ քաղցր լոյս աշաց իմոց քննեցից, առանց մառախլոյ կուրութեան խռովական խորհրդոց: Փախուցեալ անկցի, Տէր, միաք իմ՝ ընդ հովանեաւ թեւոց քոց՝ ի բորբռիշխորհրդոց այսր յաւիտենի: զի ի քումդ զովացուցիչ զուգախառնութեան թագուցեալ զուարթութեամբ երգեցից և ասսացէ, Խաղաղութեամբ յայս ի այն ննջեցից և հանգեայց:

Զ. Կնջեւցէ, Տէր Աստուած, աղաշեմ, ննջեսցէ յիշողութիւն իմ յամենայն չարեաց, ատեսցէ զանօրէնութիւնս, սիրեսցէ զարդարութիւն: Քանդի զի՞նչ չքնար կամ զինչ քաղցրագոյն՝ քան ի խաւարի այսր յաւիտենիս և ի բազմապատիկ դառնութիւնս, աստօւածային քաղցրութեան անձկալ՝ և յաւիտենական երսանութեանն տենչմամբ փափակել. անդ զկայ առնով մտօք՝ ուրանօր ամենասոյզ է ունել զցմարիտն ուրախսութիւն: Ամենաքաղցր, ամենացանկալի, ամենասրարեգութ, ամենասիրելի, ամենապատուական, ամենանձկալի, ամենահաճելի, ամենագեղցիկ, Ե՞րբ տեսից զքեզ, Ե՞րբ երեւեցայց յանդիման երեսացքոց. Ե՞րբ հանցես զիս ի բանտէ աստի խաւարյանոյ, զի խոստովան եղէ անուան քում, և այլ ոչ եւս զինցացայց:

Է. Ե՞րբ իցէ ինձ անցանել յայն սիրալիր զարմանալի և զեղակրաշ տուն քո, ուր հնչէ ձայն ուրախսութեան և ցընծութեան ի յարկս արդարոց: Երանի որք բնակեն ի տան քում, Տէր, յափտեանս յափտենից օրհնեսցեն զքեզ: Երանի և արդարեւ երանի, զորս լնարեցեր և վերառեալ ածեր յերկնային յայն ժառանգութիւն: Ահա սուրբք քո Տէր որպէս զշուշան ծաղկին առաջի քո. քանդի լնուն յառատութենէ տան քո, և յուղիցից փափկութեան քո տաս ըմ-

պել նոցա. քանդի դու ես աղբիւր կենդանութեան, և լուսով քով տեսանեն զրոյս. այնքան մինչեւ ինքեանք իսկ իբրեւ լոյս լուսաւորեալ ի լուսաւորութենէ Աստուածութեանդ, որպէս զարեգակն ծագեն առաջի քո: Ո՛վ, քանի սքանչելի, քանի գեղատեսիլ, քանի տենչալի են բնակարանք տան քո, Տէր զօրութեանց. ցանկայ և փափագէ մտանել անդ անձն իմ այս մեղաւոր. Սիրեցի զվայելութեան տան քո, և զտեղի յարկի փառաց քոց:

Ը. Զմի խնդրեցի ի Տեանէ, և զոյն աղաշեմ, զի բնակեցայց ի տան Տեան, զամենայն տուրս կենաց իմոց: Որպէս փագագէ եղջերու յազրիւր չուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ, Աստուած: Ե՞րբ եկից և երեւեցայց երեսաց քոց. Ե՞րբ տեսից զԱստուած իմ՝ որում ծարաւի է անձն իմ, Ե՞րբ տեսից զնա յերկրի կենդանեաց. քանդի յերկրի աստ մեռելոց մահկանացու աչօք տեսանել անմարթ է: Զինչ արարից ես հեզս կաշկանդեալս ոտնակապօք մահկանացութեան իմոց: Զինչ արարից զի ցորչափ ի մարմին եմք՝ օտարանամք ի Տեանէ. ոչ ունիմք աստ քաղաք որ մելոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք. քանդի քաղաք մեր ազատ ի յերկինս է:

Թ. Վայ ինձ, զի ընդ երկար եղեւ պանդխտութիւն իմ, ընակեցայ ընդ բնակիչս կեդարու. ընդ երկար պանդուխտ եղեւ անձն իմ: Ո՞ տացէ ինձ թեւս որպէս զաղաւնոց, զի թռչի և հանգչի: Զիք ինչ ինձ այնպէս քաղցր՝ որպէս զինեն իմ ընդ Աստուածոյ: Ինձ մերձենալ առ Աստուած բարի է: Տուր ինձ Տէր, ցորչափ կեամ ի գիրարեկու յայս անդամս, յարիլ ի քեզ. որպէս զրեալ է, « Որ մերձենայ առ Տէր, մի հոգի է ընդ նմա»: Պարգեւեա ինձ Տէր, թեւս վերաթռիչ մտածութեան, որով զգեցեալ վերապացայց առ քեզ: Եւ զի ամենայն ձախողակը ի վայր կործանեն, կալ զմիտոսիմ: զի մի ի ստորին հոմիտ խաւարին վայր անկցի, և մի ի վերայ հասանելով ստուերաց երկրի ի քէն ի նշմարիտ արդարութեան արեգականէդ զատեալ որոշեսցի, և յափշտակեալ մրգաւ մժութեան արգեցի ի նկատելոյ զբարձունս. վասն այնորիկ ձկտիմ ի բարձունս առ ուրախութիւնն խաղաղութեան և առ լոյս զուարձութեան, և առ ամենապայծառ կայանս:

Ժ. Կալ զմիրտ իմ ձեռամբ քով, զի առանց քո ոչ վերանայ ի բարձունս։ Անդը փութամ հասանել՝ ուրանոր գերագոյն խաղաղութիւն թագաւորէ, և մշտատեւ անդոր ըութիւն շողշողէ։ Կայ և առաջնորդեա հոգւոյ իմոյ, և ընկալ զնա ըստ հաճութեան կամաց քոց, որպէս զի քոյին առաջնորդութեամբ ելցէ ի գաւառն առատութեան, ուր հովուես զիսրայէլ ի յաւիտենական արօտս ճշմարտութեան։ Եւ անդ՝ իրեւ ի հոգեկան յափշտակութեան՝ հակեսցի առ քեզ ծայրագոյն իմաստութիւնդ, որ գեր քան զամենայն կաս և մնաս միշտ։ որ անցանես և զանցանես զամենայնիւ զամենայն կառավարես։ Այլ մտօք վերացելոյ հոգւոյ առ քեզ՝ բազումք ընդէմ յառնեն ի խափանել։ Հրամանաւ քով, Տէր, լռեսցեն ամենեքեան։ Նա և հոգի իմ լռեսցէ ինքն ինքեան։ անցցէ ընդ ամենայն զամենայն ստեղծականս խզեսցէ յիւրմէ, և ժամանեսցէ առ քեզ. այլ և ի քեզ միայն ստեղծողդ ամենեցոն։ զաշ հաւատոյն հաստատեսցէ։ առ քեզ անձկասի, առ քեզ ձգեսցի. զքեզ խորհեսցի, ի քեզ խորհրդով պարապեսցի. զքեզ առաջի աշաց իւրոց դիցէ, զքեզ առ սըրտիւն մանրակրկիտքննեսցէ, զճմարիտ և զժայրագոյն բարիդ և զյարակայ ուրախութիւնդ յաւիտենական։

ԺԱ. Ալաքէն բազմապատիկ են հոգեկան մտածութիւնք, որովք չերմեռանդն քեզ հոգի սպանչելապէս մնանի. այլ ոչ յայլ ինչ մի այնշափ զմայի և հանզչի հոգի իմ՝ որպէս ի քեզ, և երբ զքեզ միայն մտածէ և նկատէ։ Որքան մեծ է բազմութիւն քաղցրութեան քո տէր, զոր հրաշապէս հեղուս ի սիրոս սիրողաց քոց։ Որքան պանչելի է անուշութիւն սիրոց քո, զոր վայելեն որք բաց ի քէն զայլ ինչ ոչ սիրեն, ոչ խնդրեն ինչ, ոչ զայլինչ խորհիլ ցանկան։ Երանի նոցա որոց դու միայն ես յոյս, և ամենայն գործք նոցա՝ աղօթք։ Երանի որ մենացեալ նստի լրիկ, և կայ ի վերաց զգուշութեան իւրոյ տիւ և գիշեր։ որպէս զի գուլով տակաւին յայսմ զիւրաբեկ մարմնի եղեալ, զօրիցէ առնուլ յառաջագոյն զքաղցրութեան քո սակաւ ինչ զճաշակ։

ԺԲ. Ալաշեմ զքեզ վասն կենսատու վիրաց քոց այնու-

ցիկ, որովք շարչարեցար ի խաչին՝ յաղագս փրկութեան մերոյ, և յորոց անդինն այն բղխեաց արիւն՝ որով փրկեցաքս՝ խոցեա զանձն իմ մեղաւոր՝ յորոց սակս և մեռանիլ հաճեցար։ Վիրաւորեա զսա հրեղէն և ամենազօր պաքաւմեծի սիրոց քոյ. քանզի կենդանի է բանն Աստուծոյ և ազդու քամենայն սուր երկսայրի։ Դու նետ ընտիր և սուր սայրասուր, որ ընդ ամուր վահան սրտի մարդկան զօրութեամբ քո թափ անցանել կարես, վիրաւորեա ոլաքաւ սիրոց քո զսիրտ իմ, զի ասասցէ քեզ անձն իմ, Խոցեալ եմ սիրով քո, մինչեւ ի վիրաց սիրոց քոյ հոսեսցեն յորդ արտասուր ի տուշ և ի գիշերի։

ԺԳ. Հար Տէր, հար աղաշեմ, զկարծրացեալ միտս իմ զայու գթած և ազգու սայրիւ սիրոց քո, և ի խորս ներքինս թափ անց զօրութեամբ մեծաւ. և այնպէս հան ի գլխոյ իմմէ ջուր անշափ, և յաշաց իմոց ճշմարիտ աղքիւր արտասուաց անընդհատ բղխեալ, ի սաստիկ փափագանաց և ի ցանկութենէ տեսութեան գեղոյ քո։ զի ողբացից տիւ և գիշեր, ոչ ընդունելով բնաւ ամենեւին յառաժամանակեայ մխիթարութեանց, մինչեւ արժանացայց յերկնայինն առագատի տեսանել զքեզ՝ զսիրելի և զամենազեցիկ փեսայդ իմ, զԱստուած և զՏէր իմ։ և անդ տեսանելով զփառաւորեալ զպանչելակրաշ և զամենագեղցիկ երեսս քո՝ զլին ամենայն քալցրութեամբ, ընդ այնոսիկ զօրս ընտրեցեր՝ աղերսելով երկիր պազից մեծի վայելչութեան քում։ և անդ ապա երկնային և անձառելի ցնծութեամբ և յաւիտենական որախութեամբ առցեալ, զաղակեցից ընդ սիրելեացն քոց, ասելով. Ահա որում տեն շայի՝ արդ տեսանեմ. յոր յուսայի՝ արդ կալայ. որում փափէի արդ ի ձեռու իմ է։ Քանզի ի նա յօդեալ միացեալ եմ յերկինս, զոր յերկրի զոլով ամենայն զօրութեամբ սիրեցի. ամենայն սիրով զիրկլընդիսառն եղէ. յոր ամենայն սիրով յարեցայ. զնա օրհնեմ, բարերանեմ և պաշտեմ, որ կեայ և թագաւորէ, Աստուած յամենայն յաւիտեանս յաւիտեանս յաւիտեանից. ամէն։

ԳԼՈՒԽ ԼՅ.

Աղօրքի և նեղուրեամ:

Ա. Ողորմեա Տէր, ողորմեա զթած, ողորմեա ինձ ողորմի մեղաւորիս՝ զանարժանան գործողիս, և զարժանիսն կրողիս, անդագար մեղանշողիս և հարուածոց քոց հանապազ ժուժկալողիս: Եթէ զմուա ածեմօրստորէ զշարն զոր արարի, ոչ է ըստ շափուն զոր կրեմ. ծանրագոյն է զոր արարի, թեթեւագոյն՝ ընդ որ համբերեմ:

Արդար ես Տէր և ուղիղ են դատաստանք քո. ամենայն արդարութիւնք քո իրաւոնք են և ճշմարիս: Արդար և ուղիղ ես դու Տէր Աստուած մեր, և չփէ ի քեզ և ոչ մի ինչ անիրաւութիւն. քանզի ոչ յանիրաւի և ոչ անգթութեամբ տանջես զմեզ յանցաւորքս, ամենակարօղ և և ողորմած Տէր. որ մինչ ոչն էաք կարողապէս արարեր զմեզ, և մինչ կորուսեալ էաք վասն մերոց յանցանաց, գթութեամբ և բարութեամբ քով սբանչելապէս վերատին նորոգեցեր զմեզ:

Բ. Գիտեմ, Տէր, և ստուգութեամբ իսկ, եթէ կեանք մեր ոչ յախուռն շարժմամբ՝ այլի տեառնէ Աստուծոյ մերմէ անօրինի և կառավարի. ստուի քոյ խնամ՝ է վասն ամենեցուն, և առանձինն վասն ժառայից քոց՝ որոց յոյս եղեալ է ի միակ ողորմութիւն քս: Վասն այսորիկ աղաշեմ և պաղատանօք հայցեմ, զի մի ըստ մեղաց իմոց արասցես ինձ՝ որովք արժանացաց սրտմութեան քում, այլ ըստ մեծի ողորմութեան քում՝ որ յաղթէ և մեղաց համօրէն աշխարհի: Դու Տէր, որ զհարուածս արտաքուստ ի վերայ ածես, տուր հանապազ ի ներքուստ անսպաս համբերութիւն, զի մի պակասեսցին ի բերանոյ իմմէ որհնութիւնք: Ողորմեա ինձ Տէր, ողորմեա ինձ. և օգնեա ինձ որպէս գուգիտես: որ ինչ պէտք են ինձ ի մարմին և ի հոգւով, գիտես զամենայն, կարես զամենայն, որ կեաս ի յաւիտեան:

ԳԼՈՒԽ ԼԹ.

Աղօրք եռամբագին յոյժ առ Որդին:

Ա. Տէր Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ կենդանոյ, որ բազկատարած ի խաչին վասն ամենայն մահկանացուաց փրկութեան արքեր զբաժակ շարշարանաց, տուր ինձ այսօր օգնութիւն՝ բարեհաճանաթեամբ քով: Ահա աղքատս գամ առ մեծատունդ, ողորմելին՝ առ ողորմածդ, մի մեկնեցայց դատարկածեան կամ արհամարհեալ: Քաղցեալ, սկսանիմ խնդրեկ զքեզ, մի թողաց ի քէն նքթեալ: Մատչիմ սովեալ, մի անձաւակ մեկնեցայց, և եթէ յառաջլան գնաշակելս անձկամ, գէթ յետ հեծութեանս տուր զի ճաշակեցից: Նախ, ամենաքաղցր Յիսուս, առաջի մեծվայելութեան քաղցրութեան քո խոստովանիմ զանիրաւութիւն իմ՝ հակառակ անձին իմոյ: Ահաւասիկ, Տէր, ես ի մեզ յղացայ և ծնայ, և դու զիս լուացեր և սրբեցեր. և ես յետ այնորիկ գարշացուցի զիս մեծագոյն եւս մեղօք. բանզի եղէ ի կարիս ծնեալ, յետ այնր ի կամաւորս թաւալեալ:

Բ. Ա. Ա զողորմութիւն քո, Տէր, ոչ մառացայ. Հաներ զիս ի տանէ մարմնաւոր հօր իմոյ և ի տաղաւարաց մեղաւոց, ազգեցեր ինձ հետեւել քեզ ընդ ազգաց խնդրողաց զերեսսքո, հետեւողաց ընդ շատիզս ուղիզս, բնակողաց ի շուշանս ողջախութեան, և բազմելոց ընդ քեզ ի վերնատուն խորին աղքատութեան: Եւ ես այդքան բարեհարութեանց ապերախտ գտեալ՝ յետ մտից իմոց ի կրօն, յորվս գործեցի անարժանս, բազում արարի անդէպս, և ուր չնշել անկ էր ինձ զմեղս յաւելի մեղսի վերայ մեղաց: Այսորիկ են շարիք իմ, Տէր, որովք անարգեցի զքեզ, և արատաւորեցի զիս զոր ըստ պատկերի և ըստ նմանութեան քում ստեղծեր, հպարտութեամբ, սնափառութեամբ և այլովք բազում մեղօք, որովք տառապի շարշարի և վիրաւորի և ապականի ապերջանիկ հոգի իմ:

Գ. Ահաւասիկ, Տէր, անօրէնութիւնք իմ բարձրացան

քան զգլուխ իմ, և որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ։ Եւ եթէ դու՝ որում յատուկ է ողորմելն միշտ և խնայել՝ ոչ դիցես զաջ քո ի վերայ, ընկղմել մնայ ինձ ի խորս անդ թշուառաբար։ Ունկն դիր Տէր Աստուած, և տես, զի սուրբ ես. և ահա ոտնհար լինի ինձ թշնամին իմ ասելով, Եթող զնա Աստուած։ Հալածեցից և ըմբռնեցից զնա, զի ոչ ոք է որ ապրեցուցանից զնա։ Եւ դու Տէր, մինչեւ ցերր. գարձ և փրկեա զանձն իմ, կեցո զիս վասն ողորմութեան քո։ Ողորմեա որդուոյ քում՝ զոր ոչ դոյզն ցաւօք ծնար, և մի հայիր ի չարիս իմ՝ զի մոռուսցիս զրարիմ քո։ Ո՞ր հայր է՝ որ զորդին ոչ ազատեսցէ. կամ ո՞ր որդի՝ զոր ոչ ուղղեցէ գաւազանաւ զթութեան։

Պ. Արդ Հայր և Տէր, թէ և մեղաւոր իցեմ, ոչ կարեմ շինել որդի քո, զի դու զիս սանդեր և վերաստեղեր. որպէս մեղայ՝ սրբեա զիս, և նախ գաւազանաւ յուղդութիւն ածեալ տուր զիս Որդուոյ քում։ Միթէ մոռասցի՛ կին զծնունդ արգանդի իւրոյ. և արդարեւ եթէ նա մոռասցի, դու Հայր, խոստացոր ոչ մոռանալ։ Ահա աղաղակեմ՝ և ոչ լսես ինձ. ցաւով նեղիմ՝ և ոչ սփոփես զիս։ Զի՞նչ ասացից կամ զի՞նչ արարից թշուառականու։ Յայդքան միխթարութենէ ես ի բաց լքեալ անկայ յերեսաց աշաց քոց։ Աւազ ինձ, յո՞ր բարւոյ յոր չարիս անկայ. յո՞ դիմէի և ուր հասի. ուր եմ՝ և ուր ոչ եմ. առ ո՞ անձկայի և այժմ յորպիսին հառաշեմ. խնդրեցի բարիս, և ահա խռովութիւն. արդ ահա մեամնիմ, և Յիսուս ոչէ ընդի ինձ շիք՝ քան լինել առանց Յիսուսի. լւաէ է ինձ ոչ կեալ՝ քան թէ կեալ ինձ առանց կենաց։

Ե. Եւ դու Տէր Յիսուս, ո՞ր են ողորմութիւնք քո առաջնք. միթէ բարկասցին ինձ ի սպառ. Հաշտեաց աղաշեմ՝ ընդ կորսւստ մահկանացուաց. այլ զի մեռեալք կեցցեն՝ դու մեռար, և մահ քո զմեղաւորաց մահ սպան. և եթէ նոքա մահուամբ քո կեցին, հայցեմի քէն Տէր, զի քո կենդանի դոլով՝ մի մեռայց ես։ Առաքեա զձեռն քո ի բարձանց, և աղատեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց, զի մի ծիծաղեացին զինե և ասացեն. « կլցուք զնա »։ Ո՞ ոք, բարի Յիսուս, երկմտեսցէ ընդ ողորմութիւն քո, որ մինչ թշնամիքն էսք՝ փրկեցեր զմեզ արեամբ քով, և հաշտեցուցեր զմեզ ընդ Աստուծոյ։ Ահաւասիկ ընդ հովանեաւ ողորմութեան քո պատսպարեալ, յաթոռ փառացդ դիմեմ, ներում խնդրելով, աղաղակելով և բաղիսելով, մինչեւ ողորմեսցին ինձ։ Քանզի եթէ առ ներում զմեզ կոշեցեր՝ որք ոչն ինդրէաք զներումն, քանի առաւել ներումն գտցուք՝ որք խնդրեմք։

զդառնութիւնս իմ՝ առ ի մտանելի դատաստան ընդ ծառայի քում, այլ ըստ բազում գթութեան քում չնշեա զանօրէնութիւնս իմ։ Վայ ինձ թշուառացելումն, յորժամ հասցէ օրն դատաստանի և բացեալ լիցին մատեանք խոզի մտացս, յորժամ ասացեն գինէն, « ահա այրն և գործք նորա », զի՞նչ արարից յայնժամ, Տէր Աստուած իմ. յորժամ երկինք յայտնեսցեն զանօրէնութիւնս իմ, և երկիր ընդդէմ ինձ յարիցէ. ահա չունիմինչ տալոյ պատասխանի, այլ կորագլուխ առ ամօթոյ՝ կացից առաջի քո դողալով և պատկառանօք։

Զ. Վայ ինձ ողորմելուոյ, զի՞նչ ասացից. աղաղակեցից առ քեզ Տէր Աստուած իմ. ընդէ՛ր լուելով սպասիցիմ։ Բայց թէ և խօսեցաց՝ ոչ գաղարեն ցաւք իմ. և եթէ լուեցից՝ դմնեայ դառնութեամբ տանջիմ ի ներոյ։ Ողրա անձն իմ որպէս այրի ի վերայ առն մանկութեան իւրոյ։ Ողրա և կոծեա չուառականդ, զի եթող զքեզ փեսայն քո Քրիստոս։ Յասումն ամենակարօղի, մի յարձակեսցիս յիմ վերայ, զի ոչ է հնար երրէք ըմբռնիլքեզ յինէն։ Ապաքէն չիք յիս բովանդակ՝ որ կարիցէ տանելքեզ, Ողորմեա, զի մի յուսակտուր եղեց. այլ յուսակատելով սգի առից։ Եւ եթէ ես գործեցի՝ որով կարօղ ես գատապարտել, այլ դու ոչի բաց լքեր՝ որով կարես փրկել։

Է. Դու Տէր, ոչ կամիս զմահ մեղաւորին, և ոչ խնդաս ընդ կորսւստ մահկանացուաց. այլ զի մեռեալք կեցցեն՝ դու մեռար, և մահ քո զմեղաւորաց մահ սպան. և եթէ նոքա մահուամբ քո կեցին, հայցեմի քէն Տէր, զի քո կենդանի դոլով՝ մի մեռայց ես։ Առաքեա զձեռն քո ի բարձանց, և աղատեա զիս ի ձեռաց թշնամեաց իմոց, զի մի ծիծաղեացին զինե և ասացեն. « կլցուք զնա »։ Ո՞ ոք, բարի Յիսուս, երկմտեսցէ ընդ ողորմութիւն քո, որ մինչ թշնամիքն էսք՝ փրկեցեր զմեզ արեամբ քով, և հաշտեցուցեր զմեզ ընդ Աստուծոյ։ Ահաւասիկ ընդ հովանեաւ ողորմութեան քո պատսպարեալ, յաթոռ փառացդ դիմեմ, ներում խնդրելով, աղաղակելով և բաղիսելով, մինչեւ ողորմեսցին ինձ։ Քանզի եթէ առ ներում զմեզ կոշեցեր՝ որք ոչն ինդրէաք զներումն, քանի առաւել ներումն գտցուք՝ որք խնդրեմք։

Ը. Մի յիշեր ամենաքաղցր Յիսուս, զարդարութիւնքունդէմ քոյ մեղաւորիս, այլ յիշեա զբարութիւնք առ ստեղծուածոքոյ. մի ածեր զմտաւ զբարկութիւնդ ընդդէմ պարտաւորելցոյ, այլ յիշեա զողորմութիւնք քո առ ողորմելիս. մոռա զհպարտ գրգռիչս, և հայեաց յեղկելի աղաւաւորս: Փանզի զինչ իցէ Յիսուս՝ եթէ ոչ փրկիչ ապա, Յիսուս, վասնքո արի յօգնել ինձ, և ասա ցանձնիմ թէ փրկութիւնք ես եմ: Բազում ինչ ակն ունիմ, Տէր, ի բարութենէ քումիէ, քանզի դու ինքն ուսուցեր ինդրել, հայցել և բաղխել. և վասն այնորիկ բանիւ քովլիստեալ՝ ինդրեմ, հայցեմ և բաղխեմ:

Թ. Եւ դու Տէր, որ հրամայես ինդրել, արա զի ընկալայց, խրատես հայցել, տուր և գտանել՝ ուսուցանես բաղխել, բաց բաղխողիս: Հաստատեա զտկարս զիս, նորոգեա զկորուսեալս, յարո զիս զմեռեալս. և զամենայն զգայութիւնս իմ, զիսորհուրդս և զգործու կամեաց ուղել և կառավարել բարեհաճութեամբ քովլ, որպէս զի յայսմ հետէ քեզ ծառայեցից, ի քեզ կեցից, և քեզ տաց զիս: Գիտեմ Տէր, զի վասն այն զի արարեր զիս՝ պարտիմ զանձն իմքեզ. և զի փրկեցեր զիս և վասն իմեղեր մարդ, պարտիմ քեզ առաւել քան զանձն իմ, եթէ էր իմ մեծ ինչ՝ որչափ դու ես, վասն որյ ետուր զքեզ: Ո՞հա ոչ աւելի ինչ ունիմ, և ոչ զոր ունիմս՝ տալ կարեմ առանց քո. այլ ընկալ զիս դու և ձգեա զիս առ քեզ. զի եղէց քո նմանակցութեամբ և սիրելութեամբ, որպէս քո եմ կենաց պայմանաւ և ստեղծմամբս. որ կեսս և թագաւորես յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ Խ.

Աղօրք օգտակար:

Ա. Տէր Աստուած ամենակարօղ, որ ես երեակ և մի, որ ես միշտ և յամենեսին, և էիր յառաջ քան զամենեսին, և եղիցիս միշտ յամենեսին. Աստուած օրհնեալ ի

յաւիտեան, քեզ յանձն առնեմ այսօր և յամենայն ժամանակի՝ զհոգի իմ, զմարմին իմ, զտեսանելիս, զլսելիս, զծաշկելիս, զհոտոտելիս, և զշշափելիս. զամենայն խորհուրդս իմ, զախորժակս, զրանս, զգործս, զամենայն արտաքինս և զներքինս, զգայութիւնս, զմիտս, զյիշութիւն իմ, զհաւատս և զդիւրահաւատնութիւն իմ, և զյարատեութիւն իմ՝ ի ձեռու կարողութեան քո, զի պահեսցես զսոսա ափւ և գիշեր, ի ժամուայլ և ի վայրկենի: Լուրինձ Սուրբ Երրորդութիւն, և պահեա զիս յամենայն շարէ և յամենայն գայթակղութենէ, և յամենայն մահուչափ մեղաց, յամենայն գարանակալութեանց և վնասուց զիւաց, և թշնամեաց երևելեաց և աներեւութից. վասն մաղթանց նահաւիտաց և արգեանց մարգարէից, օժանդակութեան առաքելոց, վասն արիստեան մարտիրոսաց և հաւատոյ խոստովանողաց, և ողջախոհութեան կուսանցաց, և վասն միջնորդութեան ամենայն որբոց, որք ի սկզբանէ աշխարհի բարեհաճոյացան քեզ:

Բ. Ի բաց վանեա յինէն զգուոզութիւն մոտաց, և յաւել զջնումն սրտի, զիշո՛ զհպարտութիւն իմ, և կատարելագործեա յիս զիսնարհութիւն ճշմարիտ. զարթո յիս զողբումն, կակլացո զսիրտ իմ խիստ և քարեղէն: Ոզատեա զիս, Տէր, և զսոգի իմ, յամենայն սրոզայթից թշնամոյն, և պահեա զիս ի կամս քո: Ուսո ինձ, Տէր, առնել զկամս քո, զի Աստուած իմ ես դու: Տուր ինձ Տէր, զգացումն կատարեալ և միտս, զի կարացից հայել ի բարեգութիւնս քո: Տուր ինձ զայն ինդրել՝ որ քեզ ախորժական է լսել, և ինձ վայել: Տուր ինձ զարտասաւս յամենայն սրտէ, որք զմեղաց իմոց զկապանս լուծանել բաւեսցեն:

Գ. Լուր Տէր իմ և Աստուած իմ, ունին զիր լոյս աշաց իմոց. լուր զոր խնդրեմ, և տուր զի զոր խնդրեմն՝ լուիցես: Եթէ անտես առնիցես՝ կորնչիմ. եթէ հայեսցիս՝ կեամ. եթէ զարգարութիւն իմ պահանջեսցես՝ մեռեալ նեխիմ. ապա եթէ ողորմութեամբդ այց արասցես, զնեխեալս յարացանես ի գերեզմանէ: Զոր ատես յիս՝ տարագրեա յինէն, և յե՞ս յիս զսզի ողջախոհութեան և ժուժկալութեան. զի մի զոր ինչ և ինդրեցից՝ ի

նոյն ի խնդրուածո իմ զքեղ անարգեցից: Բարձ յինէն զվնասակարն՝ և շնորհեա զօգտակարն. պարգևեա ինձ Տէր զքեղ՝ որով կարիցեն բուժիլ վէրք իմ: Տուր ինձ Տէր, Տէր զքեղ՝ որով կարիցեն բուժիլ վէրք իմ: Տուր ինձ Տէր, զիւղական, զշարիս իմ ոչ մոռանալ, և զօտարին ոչ քննել:

Դ. Խնայեա հոգւոյ իմոյ, խնայեա շարեաց իմոց, ինայեա մեղաց իմոց, խնայեա եղերանց իմոց, այց արա հեւանդիս, դարման տարխօթացելոյս, բժշկեա զախտացեաւ լըս, յարո զմեռեալու: Տուր ինձ, Տէր, սիրու երկնչելոյ ի քէն, միտու սիրելոյ զքեղ, ճանաշումն՝ իմանալոյ զքեղ, ականջ՝ լսելոյ քեղ, աշու տեսանելոյ զքեղ: Ոզորմես ինձ Աստուած, ոզորմես ինձ և հայեաց յիս յաթուոյ սրբոյ մեծվայելլութեան քո, և զիստար սրտի իմոյ ճառագայթիք պայծառութեան քո լուսաւորեա: Տուր ինձ, Տէր, զընտրողութիւն՝ ընտրելի մէջ չարի և բարւոյ, և շնորհեա ինձ զգայութիւն ամենազգաստ: Խնդրեմ ի քէն Տէր զթութիւն ամենայն մեղաց իմոց, յորմէ և որով լիցի ինձ դութիւն ի ժամանակի կարեաց և անձկութեան իմոյ: Քառութիւն ի ժամանակի կարեաց և անձկութեան իմոյ:

Ե. Սրբուհի և անարատ կոյս, Աստուածածին Մարիամ, ծնող և մայր տեաւան իմոյ Յիսուսի Քրիստոսի, յանձն առ միշնորդել վասն իմ առ նա՝ որում արժանացաւան տաճար: Ասուրը Միքայէլ, Ա. Գարբիէլ, Ա. Ռափիայէլ, սուրբ դասք հրեշտակաց, հրեշտակապետաց, նահապետաց և մարգարէից, առաքելոց, աւետարանշաց, մարտիրոսաց, խոստովանողաց, քահանայից, զպաց, միանձնանց, կուսանաց և ամենայն արդարոց, նոուգաց, միանձնանց, կուսանաց և ամենայն արդարոց, նոուգաց, որ զծեղն ընտրեաց և յորյ տեսութեանն զուարճավա՝ որ զծեղն ընտրեաց և յորյ տեսութեանն զուարճավա՝ ի մաղթանս ձեր ժոհմ՝, զի վասն իմ մեղապարանայք՝ ի մաղթանս ձեր ժոհմ՝, զի վասն իմ մեղապարանայք՝ ի մաղթանս ձեր ժոհմ՝, որպէս զի յորտիս՝ նմին Աստուծոյ աղերս մատուովիք. որպէս զի յորտիս՝ նմին Աստուծոյ աղերս մատուովիք. որպէս զի յորտիս՝ կորյ սատանայի և ի յափանական մահուանէ Քրիցեցայց: Առատաձեանեա ինձ, Տէր, զմշտնշենական կեանս ըստ զթութեան և բարեխնամ ոզորմութեան քում:

Զ. Տէր Յիսուս Քրիստոս, տուր քահանայից միաբանութիւն թագւորաց և իշխանաց արդարապէս դատողաց՝ անթագւորաց և իշխանաց արդարապէս դատողաց՝ անթագւորութիւն և իշխանաց ոզորմութեան քում:

Հանուր սուրբ կաթողիկէ եկեղեցւոյ, վասն արանց և կանանց, վասն կրօնաւորաց և աշխարհականաց, և վասն ամենայն առաջնորդաց քրիստոնէից, և ամենեցուն ի քեղ հաւատացելոց, որք վասն սուրբ սիրոյ քո վաստակին, զի ստասցին զյարատեւելն ի գործս բարիս: Շնորհեա Տէր, թագւոր յափանական, կուսանաց ողջախոհութիւն, զանձինս նուիրողաց Աստուծոյ՝ ժուժկալութիւն, ամուսնացելոց պարկեշտութիւն, ապաշխարտողաց ներումն, այրեաց և որրոց պահպանութիւն, աղքատաց խնամակալութիւն, նժգեհաց վերադարձ, սգաւորաց միսիթարութիւն, հաւատացեալ ննչեցելոց յափանական հանդիսու, նաւորդաց ժամանել ի նաւահանգիստ փրկութեան. լաւագունիցն՝ յարամնալ ի բարութեան բարեաց, և միջակայնոց լաւագոյնս լինել, չարագործաց և յանցաւորաց՝ որպէս ինձ թշուառացելում՝ վաղ ընդ փոյթ դառնալ յուղութիւն: Ո՛վ ամենաքաղցը և ամենոզորմ Տէր Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ կենդանւոյ, Քրիկչ աշխարհի, յամենեսին և ամենեւիմբ դառնաիմ գանձն իմ թշուառամեղաւոր:

Է. Այլ դու ամենագութ և զերագոյն հայր, որ ամենեցուն ոզորմիս, մի հանդուրժեր զիս անմասն թողուլ ի քումմէ ոզորմութենէ: Եւ դու Տէր թագւոր թագաւորաց, որ տաս անդորր կենաց, շնորհեա ինձ զեռանդն ուղղութեան. զարթոյ յիս զմիտու իմ, զի զքեղ խնդրեսցէ, քեղ տենչասցի, և զքեղ՝ որ ես ամենուրեք բովանդակ երարեակ և մի միշտ, զեր քան զամենայն սիրեսցէ և երկիցէ, զկամք քո արասցէ: Դարձեալ սերտիս աղաշեմ, Տէր, զքեղ սուրբ հայր, որ ես օրհնեալ և փառաւորեալ ընդ ամենայն յափանական. զի զամենեսին որք զյիշատակ իմ առնիցն յաղթս իւրեանց, և որք յանարժան աղթս իմ յանձն արարին զանձինս, և որք գործ ինչ սիրոյ և ջանս զթութեան ցուցին ինձ, ոցի և զնոսա՝ որ արենակցութեան և ազգականութեան սիրով ինձ մերձաւորք են, և զնոսա որք կեան ի մարմին, և որք յաճիւն ծածկեալ կան, խնամարկեացես ոզորմութեամբ, զի մի կորիցեն:

Ը. Եւս և ամենայն քրիստոնէից կենդանեաց շնորհեա-

շես օգնութիւն, և ննջեցելոյ հաւատացելոյ արձակութն և հանգիստ մշտնջենական յամենայն յաւիտեանս։ Այլ և զայս թափանձանք աղաչեմ Տէր, որ ես Ո. և Օ., (սկիզբն և վախճան), զի յորժամ յետին օր և վախճան կենաց իմոց հասցէ, լինիցիս ինձ դատաւոր ողորմած՝ ընդդէմ շաքամիտ ամբաստանօղ դիւխն, և եղիցիս պատսպարան մշտնջենաւոր ընդդէմ դարանակալութեանց հին թշնամոյն, և ի դասակցութիւն հրեշտակաց և ամենայն սրբոց ի դրախտ քո որբութեան ժաման արացես, որ ես բարեբանեալ յախտեանս յաւիտենից։

ԳԼՈՒԽ ԽՈ.՝

Աղօրք չերմեռանդն յիշատակաց չարչարանացն Քրիստոսի։

Ա. Տէր Յիսուս Քրիստոս, փրկութիւն իմ, ողորմութիւն իմ, կենդանութիւն իմ, զքեզ օրհնեմ, քեզ չնորհս մատուցանեմ՝ թէ և յոյժ անհամեմատքոյոց բարերարութեանց, թէ և յոյժ անմասն ի ծերմեռանդութենէ, թէ և վմիտ ի ցոնկալի պարարտութենէ ամենաքաղցր փափառանաց՝ որ առ քեզ սակայն որպիսի և է չնորհակալիս, ոչ այնպիսիս որոց գիտեմ զիս պարտական, այլ զոր ջան և ճիգն արտադրեցին, հատուցանէ քեզ հոգի իմ։ Յոյս որշատի իմոյ, զօրութիւն հոգւոյ իմոյ, համեսցի քոյ ամենազօր արժանապատութիւնդ լնուլ զթէրութիւն ջանից ամենահեղդ տկարութեանս։ Կեմնք իմ, զու ես վախճան դիտմանս իմոյ։ Եւ թէպէտ տակաւին շեղէ արժանի սիրել զքեզ որշափ պարտականս եմ, սակայն ցանկամ գէթ սիրել զքեզ որշափ պարտիմ։

Բ. Լցոս իմ, զու տեսանես զիսիդն մտաց իմոց, քանզի, ո՛ Տէր, առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ, և զու չնորհ հես եթէ բարի ինչ կամի գիտակցութիւն իմ։ Եթէ բարի է, Տէր, զոր աղգես՝ նա մանաւանդ զի բարի է կամելն իմ սիրել զքեզ, տուր զոր յիս յաջողես կամի. տուր՝ զի որշափ հրամայես, նոյնշափ արժանացայց սիրել զքեզ։ Օրհ-

նութիւնս և չնորհս մատուցանեմ, մի անպտուղ լիցի պարզե քո՞ր յօժարակամ մատակարարեցեր։ Կատարեա զոր սկզբնաւորեցեր, և չնորհեա՝ զոր բարեգթութեամբդ ի թիկունս հասեալ՝ ինձ ապարդեանս՝ շարժեցեր ի փափագել։ Փոխեա, ամենագութ, զընդարմացեալս զիս՝ յեռանդուն ի սէր քո։ Յայս ձգտին, ովք բարեգութ, այս իմ աղօթք, այս լիշատակութիւն իմ և մտածութիւն բարերարութեանց քոց, զի զքոյդ յիս վառեացես զուէր։

Գ. Տէր, քո բարութիւնդ ստեղծ զիս, քո ողորմութիւնդ մաքրեաց զաղուեղեալս ի սկզբնական մեղաց. քո կարողութիւնդ՝ յետ այնր լուացման մկրտութեան, յայլ աղտեղութիւնս մեղաց ցայսվայր թաւալելոյս՝ համբերեաց, սնոց և սպասեալ ակն կալւա։ Ակն ունիս դու Տէր բարի՝ ուղղութեանս։ ակն ունի և հոգի իմազգեցութեան չնորհաց քոց առ ապախարիլ և կեալ բարիոք։ Աստուածիմ, ստեղծօղիմ, երկայնամիտոդ և կազդուրիշդ ի Ի, քեզ ծարաւիմ, քեզ քաղցնում, քեզ փափագեմ, առ քեզ հասուշեմ և տնձկամ. և որպէս որբ զրկեալ ի ներկայութենէ բարեբարոյ հօր, ողբալով և կոծելով անդադար, զցանկալի երեսօք նորա փարի ի սերտ սրտէ, այսպէս և ես ոչ որշափ պարտիմ, այլ որշափ մարթիմ յիշելով զշարչարանս քո, յիշատակելով զապտական, ի միտածելով զձաղկանսն, յիշատակելով զվէրո քո, յիշելով զեղանակ մահուանդ՝ վասն իմ, որպէս պատեցար, որպէս թալեցար. միանգամայն յիշելով զփառաւորեալ յարութիւնդ և դիրացալի համբարձումնդ, զայսոսիկ աներկբայ հաւատով դաշնիմ. զպանդխտութեանս իմոյ զաղէտս ողբամ, գաւլստեան քում միակ միմիթարութեան ակն ունիմ. տեսութեան փառաւորեալ երեսաց քոց ցանկամ տարփանօք։

Դ. Եղնէկ ինձ, զի շեղէ կարօգ զտէրն հրեշտակաց տեսանել, զիսոնարհեալն ի կենակցիլ ընդ մարդկան, զի բարձրացուցէ զմարդիկ ի կենակցութիւն հրեշտակաց, երբ Աստուած անարդեալ մեռանէր՝ զի մարդն կեցցէ։ Եղնէկ ինձ, զի այդքան պանչելի, այդքան անճառելի գթութեան առաջիկաց լինելով՝ ոչ արժանացայ հիացմամբ յափշտակիլ։ Ընդէր, ովք անձն իմ, ոչ խորագոյն թափանց։

անց եմուս ի քեզ սուր սաստիկ ցաւոց, երբ տանել ոչ կարես տիգաւ խոցելոյ կողից Փրկչինքոյ. երբ ոչ ժուժես հայելընդ ոտս և ընդ ձեռս բեկոօք պատառոտեալս սոնեղծողին քոյ, երբ զարհուրիս ընդ հեղումն արեան Փրկչին քո:

Ե. Ընդէր ոչ արբենաս դառնութեամբ արտասուաց ընդ ըմպել նորա զդառնութիւն լեզոյն: Ընդէր ոչ լինիս ցաւակից ամենողախոն կուսին՝ ամենեւին արժանաւոր մօր նորա, ամենեւին արժանաւոր տիրուհոյն քո: Տիրուհի իմ ամենագութ, քանի՛ ազրիւս ասացից ի դուրս հոսեալս յամենապարկեշտ աշաց քոց՝ ի տեսանելդ տուաջի քո զմիածին որդիկ, զանմեղն՝ կապիլ, գանակոծ լինել և զենով: Փանի՞ կոծս արտասուալց զրեցից հեղեալ բարեգութ: Երեսաց քոց՝ ի հայելն ընդ նոյն ինքն որդիին՝ յԱստուածն քո և ի Տէր, ի խաչին առանց իրիք յանցանաց տարածեալ, և զառ ի մարմոյ քումմէ զմարմինն՝ դաժանաբար խոցոտեալ յամպարշտաց: Քանի՞ հեկեկանք ակներեւ տեսից զամենամաքուր կուրծս քո տանշեալ՝ ի լսելն քում, «Կի՞ դու, ահա որդի քո»: և աշակերտին՝ «ահա մայր քո», և յառնուլդ զաշակերտն փոխանակ վարդապետին, և զծառայն փոխանակ տեառն:

Զ. Երանի թէ ընդ երջանկին Յովսեփայ տաէլն իմ ի խաչէն իջուցանէի, խնկովք պատէի, ի գերեզմանի ամփոփէի, որպէս զի գէթ հետեւող և յուղարկ լինելով այնպիսոյ թաղման՝ չպակասէր և առ յինէն յարգական ինչ ծառայութիւն: Երանի թէ ընդ երջանկի կանանցն ի լուսափայլ տեսլենէ հրեշտակացն զարհուրեալ լինէի, և լոէի զաւետի տէրունական յարութեանն, զաւետիս իմայ միկթարութեան, զաւետիս այնշաբ ակնկալեալ, զաւետիս այնքան ցանկացեալ: Երանի ասեմ եթէ լոէի ի բերանոյ հրեշտակին, «Այի՞ երկնչիք, զՅիսուս ինդրէք դիսաշելեալն, յարեաւ, չէ ասայ»: ՅԱմենաբարեգութ, ամենաքաղցր, ամենապայծառ, ե՞րբ վերանորոգ երկեսոցիս ինձ, որ ոչն տեսմի զանապականութիւն երանեալ մարմոյ քո: որ ոչն համար բուրեցի զտեղիս վիրացն, զծակս բեկացն. զի ոչ զարտասուս ուրախութեան ցօղեցի ի վէրս իսկական մարտ

մնոյդ: Աքանչելիդ, անձառելիդ, անհամեմատդ, ե՞րբ միխթարեսցես և նհանջեսցես զիս ի ցաւոց: Ոչ բարձր յինէն այս ցաւ՝ ցորշափ պանդուխտ և օտար իցեմ ետեառնէ իմմէ:

Է. Եղոնկ ինձ, Տէր, եղուկ անձին իմոյ. հրաժարեալ մեկնեցար միխթարիչդ հոգւոյ իմոյ, և ոչ ասացեր կաց մնախաղաղութեամբ»: Ի գնալն զանապարհ քո՞ օրէնցեցր զրոյսդ, ես ոչ կայի մերձ. ամբարձեալ ձեռօք՝ ամպովք ծածկեցար, ես ոչ տեսի. հրեշտակը խոստացան զմիւսնագալուստդ, ոչ լուայ: ՁԲ՞նչ ասացից, զինչ արարից. յո՞ գնացից, ուրանօր զնա խնդրեցից, կամ ե՞րբ գտից. զ՞ո՞ աղաշեցից, ո՞ պատմեսցէ սիրելոյ իմոյ եթէ հարեալ եմ ի սէր նորա: Պակասեաց ուրախութիւն սրտի իմոյ, ի սուգ դարձաւ խնդրութիւն իմ: Կուռաղեցաւ մարմին իմ և սիրտ իմ, կատուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան: Ոչ առնու յանձն հոգի իմ միխթարիչ՝ եթէ ոչ ի քէն, քաղցրութիւն իմ. քանդի «զինչ կայ ինձ ընաւ յերկինս, և ի քէն զինչ ինդրեցից յերկրի»: Զքեզ կամիմ, ի քեզ յուամի, զքեզ ինդրեմ. քեզ ասաց սիրտ իմ, ինդրեցի զերես քո, զերեսս քո Տէր ինդրեցից. մի դարձուցաներ զերես քո յինէն:

Ը. Մարդասէր բարեգութ, ի քեզ թողեալ է աղքատն, և որբոյն գու ես օդնական: Կոչեա զիս խնամակալդ, ո՞ զորմեա ինձ որբոյս լքելոյ. որբ մնացի առանց հօր, հոգի իմ եղեւ իրբեա այրի. հայեաց յարտասուս որբացելոյս և այրիացելոյ, զորս մատուցանեմ քեզ մինչև գարձիս: Աղէ, արդ Տէր, աղէ երկեաց ինձ, և եղէց միխթարեալ. ցոյց ինձ զներկայութիւն քո, և համից փափագանաց իմոյ: Յայտնեա զիփառս քո, և եղիցի կատարեալ ուրախութիւն իմ: Ծարափ է անձն իմ առ քեզ, քանիպատիկ եւս և մարմին իմ: ծարաւեցաւ անձն իմ առ Աստուած կենդանի և հզօր, ե՞րբ եկից երկեցաց երեսացդ Աստուծոյ:

Թ. Ե՞րբ եկեցես միխթարիչ իմ: Այս ո՞ ակնկալեալ սպասեցից: Ոհ, ե՞րբ տեսից զուրախութիւն իմ՝ որում ցանկամ: Ոհ, եթէ յագեցայց՝ յորժամ երկեսցին փառք իմ որում քաղցեալս եմ: Ոհ, եթէ արբեցայց ի պարարտու-

թենէ տան քո, առ որ հառաշեմս . եթէ արբուսցես ինձ
զուղիս վափկութեան քո, որում ծարաւիմս: Խոկ այժմ,
Տէր, լիցին ինձ արտասուր իմ հայ ի տուէ և ի գիւերի,
մինչև ասասցեն ինձ, Ահա Աստուած քո. մինչև լուիցէ հո-
դիս իմ, Ահա վեսայն քո: Զամբեա զիս առ այժմ հեծեծա-
նօք իմովք: յազեցո զիս ցաւովք իմովք: Գուցէ եկեսցէ
Փրկիչ իմ՝ զի բարի է. և մի՛ յամեսցէ՝ զի գթած է: Նմա
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Խաչ Գրիգոր

| | |
|---|----|
| Բայ ու հայոց բժիշկ - - - - - | 58 |
| Գլ. Ձ. - անցումն ու ամբողջը | |
| Հայ անցումն ու ամբողջը - - - - - | 21 |
| Գլ. Բ. - Հայութակո՞ր նորու շնչիք, և այսպիս Բր սովորակութեան - - - - - | 23 |
| Գլ. Գ. - Գալուստ Տուրու ուղարկութեան ոչ չու հայ ոտք - - - - - | 25 |
| Գլ. Դ. - Կրիստո ի շնչառադրի - - - - - | 26 |
| Գլ. Ե. - Անցումն ու նոր Հայ | |
| Կրուսու - - - - - | 28 |
| Գլ. Զ. - Հայութակո՞ր նոր տունի անդ հօր շնչառական Կրուսու - - - - - | 30 |
| Գլ. Է. - Հայութակո՞ր նորու նոր թիր է պարտ Շնչառական - - - - - | 31 |
| Գլ. Զ. - Հայութակո՞ր նորու տունի ուժ հօր այ շնչառական Կրուսու նոր ու դր ենչառական - - - - - | 34 |
| Գլ. Բ. - Ֆաշուր նորու ու նոր մի - - - - - | 37 |
| Գլ. Ժ. - Հայութակո՞ր նորու այսպիս անձիք բար տերու - - - - - | 38 |
| Գլ. Ճ. - Հայութակո՞ր ու ամբողջ եղանակը - - - - - | 39 |
| Գլ. Ժ. - բարութակո՞ր ամբողջական այս և ԲՇ կուրութեան նոր - - - - - | 39 |
| Գլ. Տ. - Երանց Տուրութեան ուղա- բարութեան օգնէ այս նոր, և այսպիս նորու- թիւնի Բարք, և շնչառականութեան - - - - - | 41 |
| Գլ. Ծ. - Ֆաշուր տունը ուղա- բար տիր է այս նորու ի ոտք Յա, և ի շնչառական նոր - - - - - | 42 |

| | |
|--|----|
| Գլ. Շ. - Համա անդամ սրբ Հօնք յանդա- | |
| հանդամ առ աշխատ Տուրքական - - - - - | 44 |
| Գլ. Ժ. - Հայոցի եղբայ Յանթի թիվ, որ Տի պարք, և համ Տի բարերան - - - - - | 46 |
| Գլ. Ժ. - Հայոցի շնորհականութիւն Տուրքական առ համ Բարերանութիւն Քրիստոնութիւն - - - - - | 48 |
| Գլ. Ժ. - Հայոքի Մարտանութիւն առ Բա - 50 | |
| Գլ. Ժ. - Հայութականութիւն առ Բա - որ շահ Հայութ, և Բանութիւն որ անդամ է - - - - - | 52 |
| Գլ. Ի. - Հայութականութիւն Տուրք, չի և Հայ թիվ առ աշօքանութիւն կա թի - - - - - | 53 |
| Գլ. Ի. - Բանութ շահութականութիւն Հայութականութիւն Այս Ռամա - - - - - | 56 |
| Գլ. Ի. - Հայութականութիւն Ռամա շահ շահութականութիւն Հայութականութիւն Տուրքական - - - - - | 57 |
| Գլ. Ի. - Հայութականութիւն Տուրքական յանդամ Այս Ռամա - - - - - | 59 |
| Գլ. Ի. - Հայոքի առ Կայսր չի օգենդա Տի կ հանգա - - - - - | 60 |
| Գլ. Ի. - Գայութ սրբ առ Երանութիւն Այս Ռամա - - - - - | 61 |
| Գլ. Ի. - Գայութ սրբ առ Տուրքական առ Երանութիւն Հայութ - - - - - | 64 |
| Գլ. - Հայութ առ Երանութիւն Քանութիւն առ Երանութիւն, և որուն Բանութ սրբ առ Երանութիւն Տուրքական - - - - - | 66 |
| Գլ. - Հայոքի սրբականութիւն Քանութիւն յանդամ Այս Տուրքական - - - - - | 67 |

| | |
|--|----|
| Գլ. - Հայութականութիւն Քանութիւն առ Տուրքական - - - - - | 70 |
| Գլ. - Հայոքի առ Կայսրականութիւն - 73 | |
| Գլ. - Հի Հայութ է Տիմուրի և Տուրքական Հայութ - - - - - | 74 |



500

3157



3068